

ԱԵՐԸ ՀՈՎՃԱՆԵՐՅԱՆ

ՀԱՅԵՐԻ ՈՒԵՇՉՐԿՄԱՆ
ԳՈՐԾԵՆԹԱՅԵՐ ՕՍՄԱՆՅԱՆ
ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԻՒՄ ԵՎ
ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

1557919

ԿՐԿԵՐԻ ԱՅԼՈՒԹԵՐ

ՀՀ ԳԱԱ ՄՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔՈՒԹՅ
ՀՀ ՍՊԸՆԴԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆՈՒՇ ՀՈՎՃԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵԶՐԿՍԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՕՍՄԱՆՅԱՆ
ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ
ՔԵՍԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

2016



ՀՏԴ 93/94
ԳԱՄ 63.3
Հ 854

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելյացիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ*

Տովմիանելիսիյան Ա.

- Հ. 854 Հայերի ուսեղրկման գործըթացք Օսմանյան կայսրությունում և թեմալական Թուրքիայում/Ա. Տովմիանելիսիյան - Եր.: «Գիտություն» հրատ., 2016. 151 էջ:

Մեսագրությունում թուրքական փաստաթղթերի հիման վրա ցենության են առնվազ Օսմանյան կայսրության և թեմալական Թուրքիայի կողմից հայ ժողովրդի բռնի ուսեղրկման բաղադրականության մի շաբթ կարևոր հիմնախնդիրներ:

Նախատեսվում է մասնագետների, ուսանողների և ընթերցող լայն շրջանակների համար:

Պազմի վրա պատճերված է Մշտ Սուրբ Բարդի եկեղեցին

ՀՏԴ 93/94
ԳԱՄ 63.3

ISBN 978-5-8080-1213-4
© Ա. Դ. Տովմիանելիսիյան, 2016

ՆԱԽԱԲԱՐ

Հայոց ցեղասպանության հետևանքներից են եղել ոչ միայն մարդկային կորուստներն ու հայրենազրկումը, այլ նաև՝ հայերին պատկանած անհամար գույքի կորուստը: Բազմաթիվ փաստեր և վավերազրեր վկայում են, որ օսմանյան կառավարությունը հայերի գույքը բռնազրավելիս ունեցել է որոշակի ծրագիր: Տնտեսական շահի ապահովումը խիստ էական գործառույթ է կատարել Ցեղասպանության գործադրության ընթացքում: Հայոց Մեծ Եղեռնի կազմակերպիչները, քաղաքական և պատասկներ հետապնդելուց զատ, մտադիր էին նաև ազատվել հայերի տնտեսական մրցակցությունից: Բնաշնչելով Օսմանյան կայսրությունում ապրող հայերին երիտրուրբական իշխանությունները տնտեսական ասպարեզից վերացրին իրենց հզոյ մրցակցին, երանց հարտության հաջին կարողացան հոգալ պատերազմական մեծագումար ծախսելը, վճարել արտաքին անոնի պարտքերը: Հայոց դարերի տրևությամբ ստեղծված ունեցվածքի յուրացումով հետազոյում ստեղծեցին ազգային բուրժուազիա, իսկ արդեն Թուրքիայի հանրապետության շրջանում կարողացան ամբողջապես բրացնել երկրի տնտեսությունը:

Թուրք պատմաբան Թաներ Արչամը արդարացիորեն համարում է, որ Թուրքիայի Հանրապետությունը ցեղասպանության արդյունք է, իսկ այսօրվա Թուրքիայի տնտեսական հզորությունը մեծապես հիմնված է հայերի: Ինչպես նաև հույսերի և այլ փորձամասնությունների անհատական և համայնքային սեփականության բռնազավթման ու կորոպաւմի վրա²: Այդ առումով Հայոց ցեղասպանությունը կարելի է դիտարկել որպես ապակազմավորման և կազմավորման համաժամանակակայտ գործընթաց, այսինքն՝ թե ինչպես է մի խորի ոչնչացման հաջին կազմվել ստեղծվել մեկ ուրիշը՝ նոր թուրքական նույնականությամբ: «Նոր նոյնականության կազմավորման» կամ Անատոլիայի և Արև-

² Տե՛ս Tamer Akçam. From Empire to Republic: Turkish Nationalism and the Armenian Genocide. London: Zed Books, 2004; Խոյնի A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility. New York: Metropolitan Books, 2006:

մըտյան Հայաստանի «համասկզբացման» (ըստ Էւլըյան՝ երաթուրքացման) այդ գործընթացի հետևանքը եղան հայերի ցեղասպանությունն ու հայրենազրկումը՝ պատրիցիոր (հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից, գրկումը): Բոնի տեղահանումն ու շարդը ուղեկցվում էին հայերի ուսեցվածքի բազանով և մշակութային արժեքերի ոչնչացմամբ²: Ըստհանուր առմամբ, փորձագետներն այդ գործողությունները որակում են որպես Օսմանյան կայսրության հայ բնակչության անհատական և կողեկտիվ ուսեցվածքը նորահայտ թուրքական և բրյալկան (Մահմետյանական) «սեփականատերերին» ապօրինարար փոխանցելու պլանավորված ձեռնարկում:

Քազմաթիվ հետազոտողներ հայերի գույքի բռնազավթումը չայց ցեղասպանության գլխավոր դրդապատճառներից մեկն են համարում: Արևմտյան առևտրական բորժուազիան, դրամատերերն ու արդյունաքրոջները, շնորհիվ իրենց տաղանդի ու ձեռներեցության, կույնիսկ օսմանյան բռնատիրության ու կամայականականությունների պայմաններում, կարողացել էին տեր դառնալ որոշակի հարատության, ստեղծել դրամական զգայի կուտակումներ: Նրանք ակտիվ մասնակիցներք էին նաև այն մողենիքացիոն փոխակերպումների, որոնք ենկան ազդեցություն բռնեցին կայսրության սոցիալ-մշակութային և տնտեսական ոլորտների վրա՝ սկսած առևտուրից և արդյունաքրերական արտադրությունից, միևնույնական մշակույթը, ինստիտուցիոնալ կազմակերպություններից մինչև ուրբանիզացիան և արվեստը: Տրամադրման կարևորագույն հետևանքներից մեկն էլ ոչ մռատված քանիցության շրջանում վերևախափի ձևավորումն էր: Օսմանյան արդիականացման և արևմտյան ինտեգրման առաջատար դեկավարները միծամատամբ այս վերևախափային համայնքի անդամներն են: Նրանք դարձան ավանդաբարդային կենսակերպի ներկայացուցիչներ՝ հարստության ակնհայտ բարձր մակարդակով, բաղարական և մշակութային նոր դիրքորոշմամբ: Այդ փոխա-

² Անուշ Ռ. Հովհաննեսիսան, Հայասպանությունը՝ մշակութային ցեղասպանության նախաձեռնություն, «ԵՄ համակախական հանդես», թիվ 2, 2010 թ., էջ 100-109:

կերպումները բացասական արձագակը ստացան մուտքման բնակչության կողմից, որն իրեն համարում էր կայսրության «գերակա ազգությունը» (millet-i hakime): 19-րդ դ. վերջի-20-րդ դ. սկզբին օսմանյան մասնագիտական ամսագրերի, մասուլի եղբայրում, ակումբներում տարրեր հայացքներ ունեցող բուրք մտավորականներ՝ ազատականներ, խալամականներ, Էռատիստներ, ազգայնականներ աշխույժ քենարկում էին Երկրի տնտեսական զարգացման հետափոր ուղիները³. Բննարկումներից երեսում է, որ ոչ մուտքման բուրժուազիային արդյունաքարության բնագավառից ներքին և արտաքին ասպարեզներից դուրս մղելը, շուկային միահնձնյա տիրելը, տնտեսական ամուր դիրքեր նվաճելը դարձել էին բարձրացող բուրք ազգային բուրժուազիայի գլխավոր մտահոգությունը⁴. Այդ վեճերում բազմից անդրադարձ էր կատարվում «ազգային տնտեսություն» (millî iktisad) կառուցելու անհրաժեշտությանը: Իրականում «ազգային տնտեսությունը», ինչպես նշում նե հարցով զբաղվող պատմաբաններ Ա. Ազրարը, Մ. Զետինիոյնն և այլք, ոչ այլ ինչ էր, քան «տնտեսության բուրցում»⁵: Թյուրքականության զարգացման մասին իր տհամելան մտքերում առաջ էր բաշում Երևանինատրոն թուրքական, տնտեսության զարգացմանը: «Օսմանյան, իմա՝ բուրք ազգի

³ Sı 'ı Necmettin Doğan, *The Origins of Liberalism and Islamism in the Ottoman Empire (1908-1914)*, /Dissertation zur Erlangung des Doktorgrades der Philosophie am Institut für Soziologie/Fachbereich Politik- und Sozialwissenschaften der Freien Universität Berlin, 2006/, chapter 3 "Ottoman intellectuals in the nineteenth century", pp.55-206 https://www.academia.edu/6346089/The_Origins_of_Liberalism_and_%C4%9B%C3%BCslamism_in_the_Ottoman_Empire

⁴ Սիմեոն Հր., Թուրք-հոյելական հայութքայինների պատմությունը, Երևան, 1991, էջ 21:

⁵ Ayhan Aktar, "Cumhuriyetin ilk yıllarında uygulanan 'Türklestirme' Politikaları", *Tarih ve Toplum*, №: 156, 1996, s. 4-18; Sait Çetinoğlu, "Etnik Temizlik ve Ekonomisinin Türkleşmesi", <https://www.birikimdergisi.com/guncel/etnik-temizlik-ve-ekonomisinin-turklesmesi>; Rıfat Bali, "Politics of Turkification during the Single Party Period" <http://www.rıfatbali.com/images/stories/dokumanlar/basel.pdf>

⁶ Զիրք Գյորգակի մասին մե՛ս Սահմանական Ազ., Զիրք Գյորգակի և «Թյուրքականության հիմնարկերը», Երևան, ԵՊՀ հրուտ., 2012:

տեսլեսական այդ իդեալին» հասելու «առարկելությունը» որդեգին իբրիհաղականները և նրանց քաղաքական ժառանգորդ հանդիսացող թեմայականները: Համաձայն նրանց ծրագրի չէին ունենալու մըրցակցության մեջ մտնել, նոր շուկաներ հետազոտել, սեփական դրամագույն կուտակել: Գետը էր միայն «հետացնել» մրցակցին և տիրանալ նրա ունեցվածքին: Ս. Շեքինօլլով խոսքերով՝ «1915 թ-ի ամենամերկապարանոց փաստերից և ամենաեական հետևականներից մեկը պատմության մեջ ամենամեծ գույքի և հարրատության փոխանցման իրականացնումն է: Այդ հետևանքը թուրքիայի հասարակությանը՝ իր թուրքով, քրդով... բոլորին հուզող և մեր օրեր հասնող ամենաեական պուտերից մեկն է»⁷:

Վերջին տարիներին հայերի «ցյալ գույքի» թեման դարձել է Թուրքիայի հանրային թեմարկման առարկա, երատարակվել են բազմաթիվ փաստաթղթեր, լուս են տեսնել ուշազրյավ աշխատություններ: Սույն ուսումնասիրությունները, որը պատրաստվել է վերջին շրջանում Թուրքիայում հրապարակված ադրյութերի, թուրք և արևմտյան հեղինակների աշխատանքների, ինչպես նաև հայ պատմաբանների հետազոտությունների հիման վրա՝ փորձ է սեղմ և ամփոփ ձևով ներկայացնել հայերի ունեցրկման գործերացը, դրա իրազործման մեխանիզմը և արդյունքները, ինչպես նաև այդ բարպարականության ժառանգականությունն ու շարունակականությունը Թուրքիայում: Անդքաղաքար է կատարվում նաև Հայոց պահանջանիքության շուրջ առկա իրավաբանական-փորձագիտական հայեցակարգի խնդիրներին: Առանձին ենքարարածին է հատկացված «մշակութային ցեղասպանությանը՝ հայկական ճարտարագետական հուշարձանների ոչնչացմանը, ինչը նույնական հայոց կողմենիվ սեփականության հոգեւոր և սյուրական կորսատի մաս է կազմում: Գևահառական է տրվում նաև Թուրքիայի իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության վերջին շրջանում ձևանարկած «կուսանոիկ» PR-քայլերին՝ մեկ-երկու եկեղեցների վերականգնման և կամ հայերից

* Մայթ Շեքինօլլու, «2015թ.՝ 100-ամյա տարեկանի սիմպոզիում ցուց» <http://ekusog.net/arm/?p=30783>

բնագրավիճած մեծաքանակ համայնքային գույքի չեցին մասի վերադարձի բաղադրականությանը:

Հնատագոռության ժամանակակարգական սահմանները միտումավոր չեն բնագրված, թեն հասկանալի է, որ որպես մեկնակետ վերցված է 1915թ. Հայոց ցեղասպանության տարերիվը: Հայերի, ինչպես և այլ փոքրամասնությունների բազան ու կողոպուտը մշտական նրանություններ են օամանան պետությունները: Սակայն ունեցրկման գործնաքը որպես ծրագրված բաղադրականություն և ցեղասպանության բաղկացուցիչ մաս հանդիսանելով հենց երիտրությունների ժամանակաշրջանում: Այդ բաղադրականության ժառանգործը և շարունակողը դարձած թեմականները: Հանրապետական Թուրքիայի ուղղ գործության ընթացքում այդ բաղադրականությունը հետևողականությունն շարունակվում էր՝ տարբեր գործոցությունների, իրավական ակտերի և քայլերի միջոցով: Ավարտվել է արդյոց այդ գործընթացը հարցի պատասխանել և այն կվերջանա, եթե հանցագործ կողմը կրադրի օգուվի իր ռռմիքի պառուղներից:

Ներկայացված եյութը կօգնի պատասխանել մի բանի կարևոր հարցերի:

— Արդյո՞ք ժամանակակից Թուրքիան պատասխանառու է Օսմանյան կայսրությունում իրականացված ոճիրի համար:

— Ինչո՞ւ է Թուրքիան համառոքն միտում ցեղասպանության փաստը, դրանով իսկ ժխտելով սեփական պատմությունը:

— Ինչո՞ւ է Թուրքիան կատարի պայքար մղում տարբեր երկրերի խորհրդարաններում Հայկական բանաձևերի ընդունման դեմ և փորձում խնդիրը տնկափոխել «պատմական հարբուրյուն»:

Ռևոլուսիայի բարերարյանը հասցեագրված է մասնագետներին, ինչպես և ան ընթերցութերի լայն շրջանակին՝ նպատակ ունենալով ընդհանուր պատկերացում տալ Հայոց ցեղասպանության և հայերի ունեցրկման խնդիրերի մասին:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՊԻՏԱՆՈ»
ՕՍՄԱՆՏԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Թեև ունեցրկման եկարկվեցին հայության բայոր՝ թէ՝ ունեմոր, թէ՝ չունենոր հատկաները, այնուամենայիկ այդ գործքնացի կարևորագույն թիրախն էր հանդիսանում Օսմանյան կայսրության «հայկական կապիտալը», ուստի դրան արժե համուլ անդրադառնապ:

Ու թեև վերջին շրջանում կատարվել են մի շարք նոր հետազոտություններ⁸, դեռևս դժվար է ամրողական պատկերացում կազմել Օսմանյան կայսրությունում «հայկական կապիտալի» մեծության մասին: Արիսիվային նյութերի մի հսկայական մասը դեռ ուսումնասիրված չէ (դրաեր թուրքիայում են՝ արգելանքի տակ), մի մասն էլ ոչնչացվել է հայերի ցեղասպանության ժամանակ: Այդուհանդերձ հայտնի է, որ Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուց առաջ հայերը Օսմանյան կայսրության տնտեսության մեջ խաղում էին կարևոր դեր, և եռուխիսկ բռնապետության և կամայականությունների պայմաններում էլ ունեին մեծ կապիտալ: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Օսմանյան կայսրության արտաքին և ներքին խոշոր առևտություն, արդյունաբերական արտադրության մեջ, բանկային գործերում հայերն ազդեցիկ դիրք էին գրավում: Նրանք իրենց ձեռքում էին կենտրոնացրել երկրի տնտեսական կարևոր ինքնակները: Հայկականի համամատությամբ, բայց բուրժուազիան ածանցյալ վիճակում էր և օսմանյան տնտեսության մեջ նշանակալի տարր չէր կազմում: Հայ վաճառականներն ու գործա-

⁸ Uğur Ümit Üngör and Mehmet Polat, *Confiscation and Destruction: The Young Turk Seizure of Armenian Property*, London/New York: Continuum, 2011; Nevzat Ozatan, *Ermeni-Metruke olayı: Osmanlı'da ve Cumhuriyet'te Ermeni'nin Emanet mallarının Türkleştirilmesi*, İstanbul, Belge Yayınları, 2010; Bedross Der Matossian, "The Taboo within the Taboo: The Fate of Armenian Capital at the End of the Ottoman Empire", in *European Journal of Turkish Studies*[online], Complete List, 2011, Online since 06 October 2011, URL: [Index411.htm](http://index411.htm); Ասաբյան Ա., «Հայրի կորուպությունը. Հայերի ունկացվածը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ. Երևան, 2013».

բանատերերը նշանակալի դեր էին խաղում երկր աշխարհագրական մակարդակներում. կենտրոնական քաղաքներում (Աստամբու, Անկարա, Տրավյան), եահանգային քաղաքներում (Էյասերի, Խարբերդ, Թոքրար) և միջազգային քաղաքներում (Ենչու, Սանկտ-Պետերբուրգ):

Երիտրութքական իշխանությունները խիստ մտահոգված էին, որ հայերի տնտեսական և նյուրական հզորացումը հիմք է դառնալու նրանց վաղին քաղաքական հաղթանակների համար: Աստիճանաբար բուրք իշխանությունների մոտ ուժնդառնու եր այն մտայնությունը, որ վաղ թե ուշ երեկով հպատակ հայր տիրախաղու է իրենց իշխանությանը. ինչպես դա արել էին տնտեսության ասպարեզում⁹:

Օսմանյան կայսրությունում պետական պաշտոնականի ընտրության ժամանակ հաշվի էին առնելում ոչ թե անձերի արժանիքների ու կարողությունները, այլ նրանց ազգային եւ կրոնական ծագումը: Գրիքե ողջ պաշտոնելությունը, զինված ուժերը, ուտիկանությունը եւ դաստական մարմինները կազմված էին մահմեդականներից, մեծամասնությամբ օսմանցի բարքերից: Իրեց վերապահելով իշխողի ուրիշ՝ նրանք երկրի ամբողջ տնտեսական դաշտը բաղկ էին ոչ բուրք տարբերիչներից¹⁰: Հայերն Օսմանյան կայսրության մյուս հպատակ ծովով վարչությունը էին, ավելի քան եինու դար տրեսցին կայսրության տնտեսությունը քարգավաճ պահելու համար: Զրկված լինելով վարչական և զինվորական գործունեության հետափնտությունից՝ օսմանյան պետության մեջ առնոտուր ու արհեստները դարձան այն բուրքատրված ասպարեզներց, ուր հայերը կարող էին փոքրիշատ ազատ կերպով

⁹ Մըլյուքսաքերի այս «վախերի» մասին գրել է և Գրիգոր Զանգրասը: 1913 թ. իր հոդվածներից մեկում նա կանխոտեսել է, որ ազգային կապիտալի տեղեման համար իբրիհամական իշխանությունները կիրածին ենրիպտակարի միջնորդ տնտեսական առարկանեց հետոցին մրցուից բրիտանականներին՝ հեռազում երացաց մասնավոր շարժմանն և անշարժ գուցք լուրցնելու համար (տե՛ս Գ. Զորբար, «Հայերական հարց վաստառության լույսին տակ», Ծրջեցի ժողովնանձու, հ. Գ: Ե., 2002, էջ 531–532):

¹⁰ Առն Շորթիոն: Համացուովիմ պրեմտանալոց մէկ դրանու պատճենաբան: Ա. Խուսեյն, Քննչառ, 1972, էջ 55:

դրսութել և զարգացնել իրենց գլուխյեն-ազգային ունակությունները: XV դարից Շոտլանդիականական միստերի բազմանալ հայ առևտրականների խանութները, առանձին շուկաները, խաներն ու վաճառառականները: Միջերկրական և Ան ծովերից դեպի Իրան և Հնդկաստան տարածեցիկ առևտուրք եիմասկանում կատարում էին հայ վաճառականները¹¹: Կայսրության մյուս տնտեսական կարևորագույն կենտրոնի Զմյուռնիայի հայ առևտրականները կապված էին Եվրոպական երկրների հետ: Հայ վաճառականները տիրապետում էին Եվրոպական լեզուներին և Եվրոպական առևտուրի մեջուներին, այդ իսկ պատճառով կարողացած դառնալ բորբ-Եվրոպական առևտորի միջնորդները¹²: Թուրք-Եվրոպական առևտորի մեջ գլխավոր քամինը պատկանում էր հայ վաճառականներին: Բազմաթիվ հայ առևտրականները, զգիւհանով Եվրոպացիների ներկայացրած ապրանքների ընտրությամբ, իրներ կապեր հսկուածեցին Եվրոպայի արդյունաբերական կենտրոնների և առևտրական ցենտրությունների հետ: Նրանցից շատերը նույնիսկ հաստատվեցին Եվրոպական քաղաքներում, գրասերյակներ բացեցին և մասնաճյուղեր հիմնեցին: Ներ գոնեկով Օսմանյան կայսրության շուկան՝ սկսեցին դիրքեր գրավել միջազգային առևտուրում հապես նախառություն Ասիայի և Եվրոպայի միջև առցանցքափոխանակությանը¹³: Եվրոպական դրամագյուղի և գործարանների արտադրությունների մուլտով կարճ ժամանակահատվածում հայերի տնտեսական միջակի մեջ արագ բարելավում տեղի ունեցավ:

Դեռ է նշել, որ հայերի տնտեսական առաջընթացի ու զարգությանը կատարվում էր երկրում տիրող կամայականու-

¹¹ Ալբերտ Խառապյան, «Շոտլանդիական հայ գաղութը», (XV-XVII դդ.), Երևան, 2007, էջ 51-67:

¹² Հայկ Դամբարյան, «Ասծունաճայիրի ուղղականական և քայլաշափան խաղողական 1800-1870 թթ.», Երևան, 1967, էջ 403:

¹³ Տոմիսլիստյան Ա., «Արարական վաճառականության» (Խայտելու ուսումնական միջնի «առևտնաբերան բորբագիս» բարերակնելու ընթացքում) (19-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում բարբ/մուսուրին ձևակերպություն խռանելու փորձի մասին): Այնքանցիւթյան հարցման Դիտուակների հոդվածների պարբերական ժաղավածու: Եթե՛ Խ. Ալիբավի ականական մասին (Ե. Սաֆրանակովի ծիսպան 60-ամյակին), Երևան 2015, էջ 17-50:

բյուսերի պայմաններում: Նոյն եկամուտն ունեցող թուրք վաճառականից պետությունը երեք աօգամ պակաս հարկ էր վերցնում, քան հայ վաճառականից Կողոպուտներն ու կամխամտածված հրդեհները ավերածության էին ենթարկում Հանի, Խարբերդի, Աղանայի և այլ կենտրոնների շուկաները: Հակառակ իրենց դեմ գոյություն ունեցող թուրքական ատլելության և հայածանքերի՝ հայերը շարունակում էին առաջնային տեղ զրավել կայսրության առևտորի մեջ:

Այսպէս 20-րդ դարի առաջին տասնամյակում Սեբաստիայում, որի բնակչության 35 %-ը հայեր էին, 166 ներմուծող վաճառականներից 141-ը, 150 արտահանողներից 127-ը, 9800 մաեր առևտրականներից և արհեստավորներից 6800-ը հայեր էին: 150 ձեռնարկություններից 130-ը պատկանում էին հայերին, 20-ը թուրքական էին կամ խառը կապիտալով, 17700 աշխատավորներից 14000-ը հայեր էին: Այսպիսով՝ առևտրականների 85 %-ը, արհեստավորների 70 %-ը, ձեռնարկատերների 85 %-ը, աշխատավորների 80 %-ը հայեր էին: Ամբողջ Երկիրի մասշտարով հայերը վերահսկում էին ներմուծման 60 %-ը, արտահանման 40 %-ը և ներքին առևտորի 80 %-ը¹⁴:

Հայերի նախաձեռնությունը գույն վաճառականության մեջ շատինաևախակից: Նրանց իրենց ճարտարագրությունը ցուցացրեցին տևականության տարրեր որորություն: Գոտնվեցին նաև առևտրականներ, ովքեր նվազագույն սարքավորումներ, մերենաներ փոխադրեցին երկիր և տեղում սկսեցին կազմակերպի նվազական որակ և արտաքին տեսք ունեցող ապրանքների արտադրություն: Աստիճանաբար փոխվում էր կապիտալի բնույթը: Առևտրական կապիտալը փոխակերպվում էր արդյունաբերականի: XX դարի սկզբին, օրինակ, Արարեկիրում, որտեղ կուտազործությունը հայ ազգարեակցության հիմնարկան գրադարձներն եր, արդեն գոյություն ունեին մասնասայի՝ 15, մանրարեկի՝ 9 և սփոռցի և սավանի պատրաստման 18 ձեռնարկություններ:

¹⁴ Խոյքոս Օ.Դ., *Երանության համարնություններ*, Երևան, 1977; Bedross Der Matossian, "The Armenian Commercial Houses and Merchant Networks in the 19th Century Ottoman Empire," in *JL/RCC4*, Issue # 39, Fall 2007, pp. 147-174.

Արդյունաբերության որոշ ճյուղերում նկատվում էր անցում մասուֆակտուրային արտադրությունից դեպի գործարանային արտադրություն։ Կարիսում, Վանում, Բաղեցում շալազործական, պղնձագործական և այլ ձեռնարկությունների արտադրությունը սպասվում էր ոչ միայն ներքին, այլև արտացիկ շուկայում¹⁵։ Եվրոպական սարցավարումներով հաջեցած էր Ֆարբիկատորյան նորացներին պատկանող՝ 1870 թվականին Խարբերդում հիմնված մետարժի գործարանը, որի իր տեսակով միակն էր երերի ասխական մասում։ Այսուեւ արտադրված որակյալ մետածոց մեծ համբաւ ուներ Եվրոպական շուկայում։ Այն մրցանակներ էր շահել միջազգային ցուցանանդիսներում և իր որակով չէր զիջում Լիոնի համբավային մետարժան¹⁶։

Թուրքեր իրենք իսկ, անուղղակի կերպով, ևպաստել են հայերի տնտեսական հզորացմանը, քանի արհամարենքով տրետեսական ասպարեզը՝ առևտորի և արիեստոների ասպարեզները բողել են ոչ բռնը տարբերին։ Թուրքերի հիմնական զանգվածը մշտապես ձգուի է դատուալ պաշտոնյա կամ զինվորական և բողել է, որ ուրիշ ազգերը տրնեն և բարիցեւր ստեղծեն իրենց համար։

«Թուրք շարիբների արմատն այն է՝ իր հիշողություններում խոսսովանել է գահընկեց արված Արդու Համիլ Ռ-ը»՝ որ ոչ մի օմանցի չի աշխատում իրական արժեթիվ ստեղծելու համար։ Օսմանցին ստոր է պարու լինել և աշխատանքը ուրիշներին բողել։ Նա ապրում է և զիարձանում։ Մեր երիտասարդները կարծում են, թե իրենց չեն կարող այլ բան դառնալ, բայց սպա և պաշտոնյան¹⁷։

XIX դարի կենտրոնում օսմանյան տնտեսության միջ հայերի աստիճանական հզորացումը սկսեց առաջացել օսմանյան իշխանությունների լուրջ մտահոգությունը, որոնք տնտեսական տեսոր սկսեցին հայերի և ուրջ քրիստոնյա բնակչության հաեղեալ, որի ընթացքում վիրջներու կորցրեցին մեծ բանակությանը

¹⁵ Ա. Սահակյան, «Հայերն օգնուեան տնտեսության մեջ»

<http://beta.am/arm/news/31209/hayeger-nosmanyan-tntesutyon-mej.html>

¹⁶ Հայոց Վանի, Խարբերդ և այլոց ուժեղեն բացաց. Կու Յոր. 1959, էջ 640-643.

¹⁷ Ա. Սահակյան, էջ 1-աշխ.

շարժական և անշարժ գույք և մշակելի հողերի հակառակությունների¹⁸: Անօրինականությունների և կրամայականությունների ադիբը հազին էր հանդարասվել, երբ ծայր առան 1894-1896քք. հայկական շարդերը, որոնք բերիցին եռք ամեր, բարձ ու մի շաբը շրջանակների առնտրական կապերի խզում, արտադրության նվազում և տնտեսական անկում:

Անզիացի դիվանագետ Պիրոց կուտրածների դրդապատճառներից ամենանշանակալի էր համարում այն հանգամանքը, որ հայերը կարողացել էին իրենց ձեռքում կենտրոնացնել երկրի տնտեսական կարևոր լճակները և տնտեսության զարգացման գործում հանդես էին գալիս առաջամարտիկերի դերում¹⁹:

1894ք. Սասունի կորուստածից անմիջապես հետո առլրան Արդուշ Համբոյը Բ.-ի Կոստուսիկուպուսում Գերմանիայի դեսպան Շատովիչի հետ հանդիպման ժամանակ առել է հետևյալը. «Ես կամիրնութեալ մեռել, քան թե բոլոր կոտամ, որ Հայաստանում բարենորոգումներ լինեն, որուինուն բարենորոգումների պարագայում հայերը հավասարության իրավունք կուտենան և իրենց խելքով, աշխատասիրությամբ այսքան առաջ կգնան, որ մենք՝ բուրքըս, հայերի հապատակը կրառնանք»²⁰:

1894-1896քք հայկական կուտրածները ազդանշան եղան բուրք հաջորդ սերունդերի համար: 1908թ. իշխանության եկած երիտրուրբեր գտնում էին, որ Արդուշ Համբոյը անկատար գործ է արել՝ ողջ հայությանը շնչեացնելով, քանի որ հայերն, այդքան կորուստներ կրելուց հետո, քանի տարի անց, ոչ միայն վերացնել էին իրենց, այլև հզորակալով՝ «ապառնալիք» դարձել բուրքերի համար: Հայերի նկատմամբ բուրքերի վախը և ատելությունը շեշտվեց 1912-1913թթ. Բարեկանան պատերազմում կայսրության պարտությունից և Հայկական բարենորոգումների հարցի բարձրացումից հետո: Բարենորոգումների համար հայերի պայքարը, երիտրուրբական կուսակցության պարագույթներից մեկի՝ որկ-

¹⁸ Զնն Կիբակառայան, Հյանապօքքնոր պատմության գալաքառամբ առաջ, Երևան, 1982, էջ 50.

¹⁹ Նոյն տեղում, էջ 132.

²⁰ «Վահագոն Տառերս», Այնացիներ Հայֆայան քննադատության մասին, Երևան 2004, էջ 8-9.

ոռք Նազրինի կարծիքով, դաշնապատ էր հայոց անկախության սկզբանափորումը. ինչ արեւյլան նահանգների վրա հայկական պետության կազմակորումը նաև համարում էր բուրանական ծրագրի տապահարարությունը։ Դրա վկայությունը ըստ Նազրինի այն էր, որ 1908թ. Սահմանադրության հոչակառամբ հետո հայերը բռնի են ազգային, մշակութային, տնտեսական անօրինակ վերելքի ճամփառ։ Հայոց պիտուրյան կազմավորմամբ բուրքերը ոչ միայն երաժարվելու ինք բռնի ցեղիքի միավորման զարավարիք, այլև բուրքական պետությունը սահմանափակվելու էր Կոնխայի սելցուկ սուլթանների ներ հոգածարածքների վրա։ Մրամեց Նազրինը տեսնում էր բուրքյան մահացման սկիզբը։ Նա գտնում էր եան, որ հայերի վերացումը Հայկական հարցին վերց դնելուց գալու բուրքերը կազմառվեն երանց տնտեսական մրցակցությունից, և լայն գործունեության ասպարեզ կատարան։ ինչ հայերի հարաւառքաներ առեր կրատնան օսմանյան պետությունն ու յուրքերը²²։

Միայն ուժեղ մրցակից վերացումով կարելի էր ապահովել բուրքերի ապագան²³։

Բուրքերը երկրում շունեին այլ առավելությունն, քան իրենց ձեռքում կենացրենացած զորքը և պետուական կառավարման միուս ինակները, որոնց վրա հենակեալ, երանց ձեռնամուխ եղան իրենց զոյլությանը, եերկային, ապագային և իդեալներին։ Մաս Թուրքակի ճանապարհին վասեց ու խոցինուն եերկայացնող հայությանը, Հայաստանը և Հայկական հարցը իրապարակից վերացնելու գործին։

²² Նոյն տեղում, էջ 11.

²³ Մելքոն Շահն Ռեփորտ. Օսմաննամ յաշախովարենքը և մայր Ճայրենը. Քըրուր, 1938, էջ 160։

²⁴ Զնն Վերակարսն. Առաջին համաշխառմանին պատճենություն և այնունամայությունն Երևան, 1967, էջ 91։

ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵԶՐԿՄԱՆ ԳՈՐԾՎԹԱՅՑ ՕՍՄԱՆԱԿ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Հայերի ունեցվածքը բժնագրավիլից 1915 թ., երիտրուրքների կառավարության կողմից և լրումն ավելի քան 1.5 միլիոն հազիների սպանութիւն և հայերին իրենց 4000-ամյա հայրենիքից արտաքսման, Թուրքիայի կառավարությունը բռնը և բռնդ թնակչության միջոցով գողացավ հայկական ակտիվները, բռնազրավեց հայկական գույքը և ոչչացրեց հայկական պատմական հուշարձանները: Ըստ Տիգրան Թուլյամշյանի «միասին վերցրած այդ գործողությունները կարելի է դիտարկել որպես մասքակրկիտ ծրագրված հսկայածավալ հանցագործություն և «պարի կողոպուտ»²⁴:

Գործընթացը, որն սկիզբ էր առել երիտրուրքների օրոք Օսմանյան կայսրությունում, շարունակվեց հետագա իշխանությունների կողմից արդեն նոր հանրապետական Թուրքիայում: Տասնամյակներ շարունակ հանրապետական Թուրքիայի իշխանությունների օգտագործելով տարբեր օրենսդրական երամանագրեր, կամ Ուղուր Ուսեղյորի սահմանմամբ «օգտագործելով արդարադատության համակարգի անարդարության» համար վերջ դրեցին հայերի և երանց տեսլակական եերկայությանը Արևմտյան Հայաստանում և Անաստիառում²⁵:

Հայերի ցեղասպանությունը, որպես լայեամասշտար հանցագործություն իրականացվում էր մի շարք գործընթացեների՝ հայ վերնախամին ներկայացուցիչների ձերբակալություն և սպանություն, հայ թնակչության տեղահանում, ջարդ, բօնի ձուլում, նյութական մշակույթի ոչչացում և սեփականացրելում, համադրմամբ: Շեայած այդ գործողությունները տարբեր վայրերում տարբեր ձեերով և տարբեր գերատեսացությունների կողմից էին

²⁴ Dicran Kouyoumjian, "Confiscation of Armenian Property and the Destruction of Armenian Historical Monuments as a Manifestation of the Genocidal Process", <http://armenianstudies.csuflenss.edu>

²⁵ Uğur Üngör, "Confiscation and Colonization: The Young Turk Seizure of Armenian Property" <http://www.armenianweekly/2011/04/22/confiscation-and-colonization-the-young-turk-seizure-of-Armenian-property/html>

իրականացվում, դրանց վերջնահապատակը մեկն էր՝ ոչխացում:

Զելալ Բայրախի հուշագրություններից ակնհայտ է դատում, որ երիտրուրբերը կազմել էին Անտոլիայի երնիկական գոտման և բուրքացման եղանակների մասին մասնամասն գեկուցներ։ Երկիրը քրիստոնյաներից «մաքրելու» այդ ծրագրերը չէին սահմանափակվում միայն հայերով և իրազործվում էին դեռ առաջին համաշխարհային պատերազմից առաջ, իսկ Անտոլիայի բուրքացումը, հատկապես՝ Բալկանյան պատերազմներից (1912-1913 թթ.) հետո, դարձավ կառավարության հիմնական բարդականություններ²⁵։

Եթ սկսեց համաշխարհային պատերազմը, բարեփոխումների պահանջի պատրիվակով արտաքին միջամտության սպառնալիքը լիրացավ. և այդ պայմաններում ավելի հեշտ ու համգուստ հետարավոր դարձավ պարտել Անտառվայի թուրքացումը: Դպրու չէ, որ երիտրուրքերի գաղտփարախոսներն ամեն առիջով պնդում են, թէ «ժամանակակից պետության ստեղծումը հնարավոր է միայն միասնական երևիկական ընդհանրության պայմաններում»²⁹:

Պատերազմի ավարտին ավելի քան 2,900 հայկական բնակչութեր (զյուղեր, քաղաքներ, քաղաքաներ) դատարկված եք, իսկ որուց բնակիչների մեծամասնությունը՝ մահացած:

Հայերի բնի տեղահանումն սկսվեց 1915 թ. փետրվարին: «Միություն և առաջադիմություն» կուսակցության կիևուրունական կոմիտեին անհրաժեշտ էր օրինականացնել այդ տեղահանությանները, ուստի 1915 թ. մայիսի 27-ին Օսմանյան կայսրության իշխանությունների ընդունեցին մի ժամանակավոր օրենք, որը «իրավական» բոլ ծառայեց հայ ժողովրդի կանխամտածիած զանգվածային տեղահանության և ոչչացման՝ ցեղասպանության համար: Օրենքը վերևագրված էր հետևյալ ներք Առաջ-

²⁵ "Turnak içindeki tüm ifadeler": Celal Bayar, *Ben de Yandım*, Olt 5, İstanbul 1967, s. 1523.

²⁷ Ziya Gökalp, "Milli Nodır, Milli İktisat Neden İbarertir?", İst. 1915 : Zafer Topekk, *Türkiye'de «Millî İktisat» (1908-1918)*, Ankara, 1982, s.32; Zafer Toprak, *Türkiye'de Ekonomi ve Toplum (1908-1950) İttihat-Terakki ve Devletçilik*, İstanbul, 1995.

AİÖZT/5

բազմի ժամանակ կառավարության գործողությունների դեմ հանդիս ելորդների եկամտամամբ ռազմական տեսանկյունից իրականացվելիք միջոցառությունների վերաբերյալ ժամանակակիր օրենքը՝ Թուրքական պատմապատճյան մեջ ընդունված է այս անվանությունը՝ *Tehcir kanunu* (Տեհչիր կանոն) (Տեղահանության մասին օրենքը) կամ էլ՝ “*Sevkiyat kanunu* (Տարածանումն մասին օրենքը): Մի քանի որ ամեն՝ 1915 թ. հունիսի 1-ին, կառավարությունը իրապարակեց օրենքը, որն արդեն իսկ փաստացի գործում էր, «Թարախիմի վարայի» պաշտոնաթերթի առաջին էջում՝ Նշենք, որ Թարախ փաշան 1915 թ. մայիսի 26-ուն բարձիր Ներքին գործերի նախարարության գործույթին մեջ հայտնում է, որ ինքը հայերի արտրին մեկնարկ է տվել նախարար օրենքի իրապարակումն ու վարչակազմի որոշումը ընդունելը»²⁸:

Այդ օրենքում հայերն ուղղակիորեն չեն հիշատակվում:

²⁸ Ինչու և ոչու է այս բարբառին Բ. Մահմետազարը, ջայօք այդ որենքի և բարեկանության, և իրապարակումն առանձնահատկությունների հետ կապված շատ հակառակություններ ինչպես մշակումն, այլուր է պատերիքում մասմ և չպարագանեցած՝ նախարարությունը իրարակիր մասնակիրի դրսությունը:

Վիճակաբառը իմաստիքին է, օքինակ, օրենքի բնույթին և իրապարակման սահմանվերի նորու մորու աշխատաբառներում, օքինակ, ազգան է 1915 թ. մայիսի 26-ը: Այդ զրեթան կարու նոր կազմու, որ այդ օրենքը մասնակի իրապարակվել է 1915թ. մայիսի 27-ին: Մինչդեռ բարբառն պաշտոնական վավերագրերը փառագու են, որ առաջին ամսաթիվը վերաբերում է ներքին գործերի նախարար Թարախի գաղտնի գնացուցագրին, որու առ վիճակ է կուռացնարարական և պահանջնել, որ ընտանին օրենքը նորու ուղարկության մասին, ինչ եթեցաց օրենքի բնույթին ամսաթիվն է, այդ ու թե մասնակի իրապարակման: Ինը տեղի է ունեցել նոր որ ազդիք առ, 1915 թ. հունիսի 1-ին:

Ավելաց է որ նոյնագլուխ է «Տեղահանության օրենքը» և նորի ուղղությունը սկսելու վերաբերայի կատայացարքան որոշումը, նոր մասը է Դաշտավարության «Տեղահանության որոշումը» բնույթին է Նախարարության խորհրդի (Meclis-i Vakiller) մայիսի 20-ին առն ունեցած նյութի ընթացքում, արդին՝ «Տեղահանության օրենքը» ընդունվելոց երեք օր ամեն Մայրաքանչ տակ»: Օգոստին Սահմանադրության 1913թ. «Տեղահանության օրենքը», Սահման-քանության համբառն 2007, № 2, էջ. 72-81:

²⁹ Nençer Oğuz, “Türk milliyetçiliğinin ‘kanlı’ ekonomi politiği”
<http://iskanqa.sen.tr/tr-1411>

Օրենքը շեր Խերաստում դրույք հայերի սեփականության մասին: 1915 թ. հունիսի 10-ին ընդունվեց «Հայերի գույքի մասին» հրահանգը և անմիջապես նաև համապատասխան «Ժամանակավոր» օրենքը: Այդ այսպիս կոչված, «Լրյալ ունեցվածքի մասին» օրենքը պարունակում էր գույքումներ՝ «պատերազմի և բաղարակուն արտակարգ պայմանների հետևանքով տեղահանության «ամձերի» (շիհա) բողած շարժական և անշարժ կայրի» հետ վարչիկու մասին: Այսու որոշումը՝ 1331 (1915 թ.) սեպտեմբերի 13/26-ի «Լրված գույքի մասին օրենքը»²⁰ (Emval-i Metruke Kanunu), արդին անմիջականորեն վերաբերում էր հայերին: Այն նպատակաւորդված էր հայերի բոլի տեղահանությանը, որոնք, ինչպես ասված էր, «ցըադկում և այսինի վտանգավոր գործութեությամբ, ինչպիս է թշնամու հետ համագործակցությունը, սպանում և անմեղ մարդկանց և ապատամբություն և երակում» և նրանց գույքի բռնազրավմանը: Ի տարբերություն նախորդ օրենքի, դրա մեջ ներառվեցին նաև ունեցվածքի մասին հորվածներ: «Դրանցում կային դրույքներ՝ ուղղված «լրված սեփականության պաշտպանությանը», «սեփականատերերի վերադառնապուն պես այդ սեփականության անվանական արժեքը նրանց վերադարձնելուն» և այլն: Բացի այդ, տվյալ օրենքով նախատեսվում էր անշարժ գույքի օրինակների և հորատարածքների տեսակների, արժեքի ու քանակի գնահատում ու գրանցում: Այս իմաստով, իրավացի է գեղասպանագիտության հիմնադիրներից պրոֆ. Վ. Տատրյանը, եթե այն բնուրագրում է որպես «Եվֆեմիստիկ արտոնագիր՝ բալանելու և ուրախությանը լուրացնելու գոհարիրվող ազգաբնակչության կուտակած հարստությունը»²¹: Այդ օրենքը մնաց ուժի մեջ մինչև 1918 թ. նոյեմբերի 4-ը:

Դրանից հետո անշարժ գույքը, այդ բիում՝ հոդիքի ու

²⁰ «Թաղիմում», «ցըադ» կուն «տեխազուրի գույք» (Emval-i Metruke), սկրինը կիրառվել է Օսմանյան կայություն և Թուրքիայի Հանրապետության օրենսդրության մեջ, որում, առաջին, չկա կոնքը նշում, թէ ով է իրաժարի այդ սեփականությանը:

²¹ Vahagn N. Dadrian. "The Complicity of the Party, the Government and the Military: Select Parliamentary and Judicial Documents". *Journal of Political and Military Sociology*. Vol. 22, № 1, p. 29.

ունեցվածքը համանվեցին Բայկանուրից և Կովկասից գաղթածների (մուհաջիրների) տնօրինությանը: Այլ կերպ ասած, կառավարությունը այդ օրենքը օգոստոսի 29-ին գաղթական-մահմեդականների հետ կազմած խնդիրների կարգավորման համար՝ նրանց տրամադրելով բնի տեղահանված հայերի տները: Անշանծ ամրող ունեցվածքը, ներառյալ՝ ձիթենու, թթի, խաղողի, նարնջի աղջինները, արհեստանոցները, առևտորի կրապակները, գործարաններն ու խանութները աճուրդի հանեցին: Աճուրդից ստացված գումարները պետք է իր պահպեին «ֆինանսական մարմինների կողմից», որպեսզի հետագայում «վերադարձվեն սեփականատերերին»: Օրենքով նաև նախատեսվում էր ստեղծել այսպես կոչված կառավարման հանձնաժողովներ (idare komisyonları), որոնց նպատակը պետք է լիներ «ըսկած ունեցվածքի պաշտպանությունը», վերահսկումն ու տնօրինումը²²: Կեսարիայի հասարակական վայրերից մեկում, օրինակ, փակցված էր հունիսի 15, 1915թ. թվագրված հետևյալ հայուարտուրունը: «Թողոքը քայլոր իրերը, ձեր կահուցը, ամեկողեային պարագաները, ձեր կահկարտային: Փակէ քայլոր յանութեռը, թողենոյս ամեն ինչ ենքանամ: Ձեր խանութների դռները կնքվելու նև հատուկ դրոշմանիշում: Ձեր վերադարձին դուք կստանար այն ամենը, ինչ բողոքել եք: Մի վաճառեք ձեր գուցը կամ որեւէ բանկարժեք իրը Գոզմէ քայլոր պատկանող գուցիք: այդ թվում, անառաններից ցանկը և հանձնն քայլոր այն հասուկ եշտանկված պաշտոնային, այնպէս, որ ձեր ամբողջ գուցը հետափնտիր լինի վերադարձնել ձեզ հետագայում: Դուք ունեք տասը օր առյօն հրամանագիրը կառարելու համար»²³:

Համաձայն վերը նշված կարգադրության, տեղական մակարդակով հասուկ հանձնաժողովներ էին կազմվելու՝ 2 վարչական (mülkiye) և 1 ֆինանսական (malîye) ներկայացուցիչներից:

²² Հիշատակված օրենքների, շրաբքականների, ինչպես նաև պատրիարքական գույքի իրավաների տերություն առևտուն Նևշատ Օսման, *Eseri - i Mecruke osay: Osmanlı'da ve Cumhuriyet'te Ermeni ve Kürt mazlum Türkleri*, İstanbul, Belge Yayınları, 2010.

²³ Mac M.Derderian, *Fargeen: A Survivor of the Armenian Genocide*, Los Angeles: Altius, 1996, p.38

որուր պետք է մանրամասն գույքազդին հայերի ունեցվածքը (Յ օրինակից): Պատճեններից մեկը տրվում էր գոյսի տիբոջը, մյուսը պահպում էր տեղական համայնքում (որպես կանոն դա նկեղծին էր, այդ է նաև պատճառը, որ ի թիվս այլ հանգամակրների, եկեղեցիները առաջին թիրախն էին դառնում՝ հարձակումների, հրկիզումների և այլն – Ա. Հ.), երրորդը՝ ուղարկվում էր Օսմանյան պետական գումարան: Այդպիսի թղթեր հայերին տրվեցին: Ըստ մական գույքը՝ անսուններ, կահերարասի և այլ՝ վաճառվում էր աճուրդով և գումարը դրվում հայերի անունով: Այս պաշտոնական գրությունները հետագարում երաստարակել էր Յուսուֆ Զալաջողլուն, Թուրք պատմագիտական ընկերության նախկին նախագահը, փորձելով ցուց տալ, թե որքան «հոգաւար» է եղել օսմանյան կառավարությունը տեղահանվող հայերի նկատմամբ²⁴:

Թե ինչպես էր իրականացվում նմանատիպ աճուրդը Ակսարագրում է Օսմանյան կայսերական բանկի կառավարիչը բրիտանական համապատասխան մարմիններին ուղարկած իր գաղտնի գեկուցազրում. «Հայերի ունեցվածքի հարկադիր վաճառքը տակեսուրա է արել ամեն ինչ: Միայն Երզրումում 400.000 ֆունտ արժողությամբ ապրանքը վաճառվել է (աճուրդի միջոցով) 20.000 ֆունտով, մինեւուին ժամանակ ոչկացվել են հայերին պատկանող ձեռարկություններ, չուփակահաստոցներ և այլ պարագաներ և, հետևաբար, արդյունաքարերական կյանքը կանգ է առել»²⁵:

Անզիական հետախուզության տվյալներով, միայն Մարտինում և Դիարբերում կողովագույն էր 6.000.000 թուրքական ֆունտ արժողությամբ ակնեղեն, գորգեր, հսանճ իրեր և 1.500.000 թուրքական ֆունտ արժողությամբ ուկի: Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից մեկը՝ Դիարբերի նահանգապետը,

²⁴ Yusuf Halacoglu, *Facts Relating to the Armenian Displacement (1915)*, TTK Publication, Ankara, 2001.

²⁵ Տ. Մարտինական, «Հայոց ցեղասպանության նույնակարգության պատմականական փորձը և Մեծ Բրիտանիան (1915-1924թ.):», Պատմա-բանության հանդա, 2002, № 1, էջ 52:

Վ. Պայիս գլուխը տեղափոխել էր ուկերչական իրերով 48 արկդ
և բանկարժեր քարերով լի երկու սեղուկ²⁶:

4 ամիս անց, 1915 թ. սեպտեմբերի 26-ին, հրապարակվում է
նոր հրամանագիր, որով կարգադրություն էր աճուրդից դժգոհ ան-
ձերի՝ հանձնաժողովների գործողությունները բռնորարկելու և
ուսեցվածքը՝ ցատ պահանջի նոր ստանալու կարգը. որի համար
նախատեսված էր 15 օր:

Օրինքում, ինարկե, նշված չէր, թէ ինչպես կարող էին Շեր-
Զոր քշվածերը, սպանվածեները եւտսեին այլ ընթացակարգին:
Սարդին Շերկեցյանը իր «Աշխարհը բոլորին է բավարար» գրում
հուշագրություն է զետեղել, որի համաձայն Քարամանում իր
ուսեցվածքին տեր կանգնել ցանկացած իր հորը՝ Ղազարուխն
փաստարակը երկու ճամփա է ցուց տալիս՝ կամ լոել, կամ կա-
խադա բարձրանալ²⁷:

Իրականում բարակը տեղի էր ուսենաւ տեղի ու տեղը-
գորգերը, արծարյա և ոսկե իրերը, հազուատը՝ ոստիկաների ու
ժամանակների էին վերցնում, մասեր կահիկարասին՝ տեղի խո-
ժանը: Որոշ դեպքերում աճուրդ խկապես իրականացվում էր,
բայց գոյացած գումարը իշխանավորներն իրենց կին գրավածում,
այլ ոչ թէ դևում հայերի հաշվին: Զավեշտական պատկեր է ներ-
կայացնում արար Ֆայեզ ալ Շուսեյը. «Տ իրա արժեք ուսեցող
կոստյումը վաճառվում էր 2 մեջյանիցուու, բանկարժիք սպասը
մասերադրամ արժեք, իսկ իին արժեքավոր դաշնամուրը որևէ
մեկը չէր գտնում: Մասերանկարներով զիրքը տրվեց պատրավա-
ճառին»²⁸. Հուկայում վաճառելիս պանիք փարաբերու համար՝
Անշարժ գույքը օգտագործվելու էր պիտույքան հայեցողությամբ՝
երբեմ տրվում էր բանակին, որպես կայանատեղի, դառնում էր

²⁶ Յու. Քարենով. Հայերի թերթապահության համայնքարժանական պատու-
խանությունը (Խելացրացիայի և Գոհինասության իմայիններ). Երևան,
1999, էջ 8.

²⁷ Sarkis Çerkeçyan. *Dünya Herkimeye Yeter; Gedik Beşte Yayımları*, İstanbul, 2003, ա.
59.

²⁸ Ֆայեզ ալ Շուսեյ. Ժարդը Հայաստանի մէջ (ականատեղի վկայություններ).
Երևան, 1960, էջ 25-30.

հուսպիտալ, պահեատ, Բայկանուներից տէղահանվածներին տեղաւորում էին հայերի տներում:

1915 թ. սեպտեմբերի 27-ի նոր՝ «Ազ վայրերում վերաբևակցված (տէղահանված – Ա. Հ.) անձանց լրված տների, պարտըքի և վարչերի մասին» երկար անվանումով ժամանակավոր օրեւարք շելյալ հայուարարեց ունեցվածքի հետ կապված բոլոր գործարքները, այդ թվում՝ ունեցվածքի զիցումը կամ փոխացումը այլ մարդկանց (feragat): Դա պետք է կանխեց ապագա գոհերի համար կերծ գործարքների հետարավորությունը, այսինքն՝ պետությունը փաստորեն ցանդարացիներից խում էր իրենց սեփական ունեցվածքը տօրինելու իրավունքը (ինչը հակառակ էր օսմանյան օրեւարքներին):

Հայկական համայնքային բարեգործական հիմնադրամների և ընկերությունների սեփականություններ փոխանցվել էր Բարեգործական ֆոնդերի վարչության (այսպէս կոչված վակուֆային գերատեսչության) հաշվեկշռին. իսկ բարողների և վաճարերի ենութական արժեքների օգուազործման իրավունքները հանձնվել էին կյորության և ախտարարությանը:

1915 թ. սեպտեմբերի 8-ին ընդունվեց նոր օրոշում՝ բոլոր տվյալները հատուկ գրանցման գրեթեամ (deftor) գրանելու անհրաժեշտության մասին: Տայալ գրեթեամ ըստ ընդհանուր ձևանուշի գրանցվում էին լրված ունեցվածքի տեսակները, ներառյալ՝ փողը, շարժական և անշարժ գույքը, պարտըքն ու վարեկը:

Պատմության մեջ, թերևս, աննախառնայ այլ «օրեւարդական ակտերը» բռնլ էին տալիս բռնագրաւունություն տեղահանված

³⁹ «Եզնած գուցի նախին օրեւէք ընդունման ժամանակ Թուրքիայի խորհրդանի պատգամավոր, սեպատոր Անգլիա նըղուա, որը «Երդինայր կոսակցության հիմնադիմներից մեկն էր, անզան վլույիլ է: «Օրձներում օրդան առնմանաւունքը որժ է՝ զրված գուցի ինքնին հայուացինական է: Որովհետև հայերը պանք այդ ունեցվածքը սնկանանաւունքը էին ճրձն համար չեն բռնէլ այն: Եթէ ևս համամայն չեմ իմ սեփականությունը վաճառենուն, ոչ ոք չի խորո այն վաճառեց բռնությունը: Հիմնադիմ օրձներ (Սահմանադրություն) 21-րդ հոդվածն արգելում է դա: Եթէ այս ճրձնում Հիմնադիմ օրձնը և Սահմանադրությունը նա, ուստի դա անհնար է, առև Եաց, Յասի Հակու, Պաշտուական Հանկարգ Տարին, Cilt III, Ankara, Türk Tarih Kurumu, 1983, s.48.

հայերի «ցյալը ունեցվածքը, անգամ՝ բանկային հաշիվները»: Բացի բանկային հաշիվների բռնազրավումից, Թուրքիայի կառավարությունը փորձ է արել տիրանալ ևս հայերին պատկանող այլ արժեքներին, մասնավորապես, ապահովացրական վկայականներով նախատեսված գումարներին: 1916 թ. Թուրքար փաշան ԱՄՆ-ի դեսպան Հենրի Սորգենբաումի հետ գրապետ հարցելու էր, կարող է արդյո թ վերջինս իրեն ներկայացնել Ամերիկան Ապահովազրական ընկերություններում ընդունված հայերի ցուցակը: «Նշանք բարոր մահացեց ևն Ձեսդենով ժառանգելու»: «Ուրեմն, — այդ ապահովազրերի գումարները օրինարար պետք է անցնեն օտարանց պետությունը», եղակացրել էր ևս⁴⁰: Մինչույն ժամանակ, օտարանց կառավարությունը հայուարարություններով դիմել էր այլ ընկերություններին, հայերի անունների վերաբերյալ տեղեկություններ ստանալու խնդրակարգ: Սաերանասն տեղեկություններ էին հավաքվել ինչպիսի սեփականություն ունենալու հայերը՝ դեպոզիտ, ապահովագրեր, արժեքներ, տեքր, եռդային կալվածքներ, գործարաններ, խանութեր, ընկերություններ⁴¹:

Այդ բանը ժամանակավոր օրենքները, որոշումները, գաղտնի շրջաբերականների ու կարգադրությունները ենթավարում էին երկու հիմնական նպատակ:

1. հայերի ունեցվածքի բռնազրավում միշտ վերջին մասությունը,
2. հանուն պետության տեստեսական շահերի ձեռնարկված բռնազրավումն ու սեփականազրկան ընթացքի լիովին վերահսկման ապահովում և պետական պաշտոնականների ու տեղական խաժանութիւն կաշառակերության ու գոլության կանխում զուհ ինչ-որ շահով:

Զուր չէր, որ գերմանացի գիտնական իրավաբանները ու Ստամբուլի գործարար շրջանների ներկայացուցիչներն այդ

⁴⁰ Henry Morgenthau, *Memoires*, Paris 1919, p.292.

⁴¹ Kevork Baghdjian, *La confiscation par le gouvernement turc des biens arméniens... dits « dépendances »*, Montreal, 1987, pp. 270-280.

օրենքերին անվանեցին «բալանի օրինականացում» (*Legalisierung Des Raubes*)⁴²:

Այս որ ահուելի ծախսեր պահանջող պատերազմը մասամբ մըլլում էր ցեղասպանության դատապարտված հայ ժողովրդի ունեցածքի հափշտակման և դրա վաճառքից ստացված միջոցերով, քաջ հայտին էր Օսմանյան Թուրքիայի դաշնակից կայսրական Գերմանիային: Խնայես նշում է այս խնդիրն ուսումնասիրած հայ պատմաբան Տիգրան Մարտիրոսյանը, որս մասին տեղյակ էին նաև Լուսունում: Դա ապացուցվում է գրում է Տ. Մարտիրոսյանը, դեկտեմբերի 24-ին ՄԵԾ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ Ռ. Լանգիին՝ արտաքին գործերի նախարար Էդուարդ Գրեյին և ֆինանսների նախարարին Ներկայացրած «Թուրքիայի ֆինանսական կացությունը» վերևագիրը կրող գեկուցազրից: Փաստաբառություն ստացվել էր Օսմանյան կայսերական բանկից Կ. Պոլի վերահիշյալ կառավարչից: Խնկ տեղեկությունը Թուրքիայից հետարակոր էր դարձել դուրս բերել բանկի վտարված իտալացի աշխատավորներից մեկի միջոցով: Փաստաբառություն խնդրական է արտահայտվում չհիշատակել այդ ամենին մասնակից դարձած որևէ անձի անուն:

Այս ստում է «Օսմանյան կառավարությունը հույս ամսին բռնարկեց 5.000.000 թուրքական ֆունտ արժողությամբ զանձապետական պարտամուրիակենքը: Այս պարտամուրիակենքը ապահովագրված էն ուրու դեպոզիտագրված (պահ տրված): Բեռլինում և Վիեննայում: Այնունի ժամանակ, գերմանական կառավարությունը Թեղինում օսմանյան կառավարության տրամադրության տուակ է դրէ 1.500.000 թուրքական ֆունտ, որպեսզի այն վճարի Գերմանիայի զինագործական ձեռնարկություններին՝ կատարված պատվերելու համար»: Ինչ վերաբերում է օսմանյան պաշտոնական պարտին, ապա բանկը ստացել էր հետևյալ տեղեկությունը, որը ցույց է տալիս, որ գերմանացիները շահագործում են Թուրքիան բացարձակապես իրենց սեփական

⁴² Uğur Ümit Üngör and Mehmet Polatlı, *Confiscation and Destruction: The Young Turk Seizure of Armenian Property*, London/New York: Continuum, 2011, pp. 41-59.

շահերից եկազն: Թուրքիայի 750.000 ֆուլու պարտքը՝ Դոչէ բանկին (Deutsche Bank) մարվեց 450.000 ֆուլու չափով. իսկ մեացած 300.000-ը պետք է վճարվեր «այն բանից հետո, եթե դա հետայափոք լիներ հավաքի նախաձեռնություն»⁴³:

Եթե Թուրքիան պահ տրված ունեն հայվեհամարի ծագման առջևորիների մասին բաշաստեղյակ կայսերական Գերմանիայի կառավարությունը, ելեւով իր բաղադրական և տևախառնական շահերից, պիտու է լուրջաւոր հետևեր դաշնակից Թուրքիայի վայրագուրյուններին, ապա նույնը չեր կարելի առել զերմանական բազմաթիվ մասեավոր ձեռնարկությունների մասին, որոնց գործում էին Թուրքիայում, զիսափորապես՝ Արևմտյան Հայաստանում:

Այսպես, Կիլիկիայում գործող Գերմանա-Ղանեստական բանբակի ընկերությունը խիստ բռնոր ներկայացրեց Աղանայի գերմանական հյուսպատուստթյանը՝ բուրքական կառավարության կողմից իր պարտաւոր հայերի բժնագաղթի և, մասնավորապես, նրանց ունեցվածքի բնագրավման և վաճառքի վերաբերյալ:

Ձեռնարկությունը Թուրքիայում իր գործունեությունը ծավալուց հետո, վերջին մի քանի տարում, կարողացել էր բանբակի արտապրությունը 40.000 բնակչությունից հասցեւ տարեկան 100.000 հակէ: Այն լայնորեն օգնուազործում էր հայ գույքացիների վարկավորման մերուդը և չեր կարող չընդունել այն միջոցների դեմ, որի հանգամանքներում պետք է տեղի ունենար պարտաւոր հայերի ունեցվածքի օռարանմբ ու բարացումը: Կից վաստարերում ֆինանսական հաշվետվության մեջ ընդունվել է Ֆինանսական կողուստների մակարմանն հանրագումարը 1.628.626 բռնքական լիրա, որ կրել էր ձեռնարկությունը հայերի բժնագաղթի կազմակերպման և ունեցվածքի առգրավման հետևակրությունը⁴⁴:

Մեկ այլ՝ գ. Պոլսում Գերմանիայի դեսպան Շոհեկոն-Լազեգեկության Գերմանական արենելյան բանից կողմից հելքած համական պարզ է դաշնում, որ բանկը ահուելի կորուստներ է, կրում

⁴³ Տ. Մարտիրոս, եղջ. աշխ. էջ 53:

⁴⁴ В.А.Минасян. *Армянский вопрос и геноцид армян в Турции (1913- 1919)* - Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. Ереван. 1995. с. 199-203.

իր կողմից վարկավորված և այնուհետև բռնպաղրաված և ֆիզիկապես բնաշնչութեած հայերի մահվան արդյունքում⁴⁵:

Գերմանիայի ռայխալենցիլեր Բետման-Շոլվեգիին ուղղված գեկուցագրի մեջ Կ. Պոլսում հավատարմագրված գերմանական դիսպան Մետերևիխու. ի մի թերեւով Թուրքիայի ողջ տարածքից ստացված հաղորդագրությունները, Բեռլին ուղարկած իր գնկուցագրերից մեկում նշում է, որ հայ պարտատերերի անհետացման կամ մասնկացման հետևաերով, գերմանական ընկերությունների կրած կորուստները և վեասը ահուելի են: Երանցից՝ Գերմանական բանկը կրել էր՝ 1.500.000, Սերմանո-արևելյան բանկը՝ 2.000.000, Գերմանա-լիսանտական բանկը՝ ընկերությունը՝ 500.000. Անառողիական առևտրային ընկերությունը՝ 20.000 մարկ վեաս⁴⁶:

Գերմանական ձեռնարկությունների և ֆիեանսական կազմակերպությունների կրած եյուրական ոյջ վեասը 1915թ. և 1916թ. ի առաջին հունվարի տվյալներով վեահատվում էր շուրջ 5.000.000 գերմանական մարկ⁴⁷:

«Լրված գույրի» մասին օրենքում մինչև 1918 թ. Ընդունվել է միայն մեկ ուղղում, համապատասխան որի՝ հայերի բռն տեղահանումն իրականացվում էր իրենց իսկ հաշվին:

Թուրքիայում այսօր է գործածվում է «Génur taxen» (զյավորի ունեցվածք), այսինք՝ ունեցվածք, որը կարելի է հեշտությամբ վերցնել, յուրացնել) արտահայտությունը, որն առաջացել է այդ ձեռնարկությունների ազդեցությամբ:

Այսպիսով՝ հայերի ունեցվածքի վերաբաշխումը համապատասխանում էր օսմանյան հասարակության լայն շրջանների տնտեսական շահերին և ենարքությունների տակիս «բաժին ստանալու» այդ բարօրինակ բռնգի տարբեր մակարդակներում: այսուրեցան տնտեսական շահերք / բարձրագույն վերնախամի տնտեսական շահեր, զ/ տեղի մերնախամի

⁴⁵ Նշվ. աշխ., էջ 220-221:

⁴⁶ Նշվ. աշխ., էջ 305:

⁴⁷ Նոյն տեղում Անդրամեջու է նշել, որ մեկ քուրքական ուկի ֆունոր հազարաբոր էր գրեթե 18 գերմանական մարկի, առև եղք. աշխ., էջ 384:

տնտեսական շահերով պարական շարժադիրավորումների և բարպարացիական բնակչության աջակցություն:

Դեռ է նշել որ հայերի, ինչպես նաև հոգևորի սեփականությանը տիրախալու ծրագրերը կազմվել էին շատ ավելի վաղ՝ 1908-1909 թթ. օսմանյան ֆինանսների նախարարության տվյալներով Թուրքիայի պայմանը գերազանցում էր բյուջեի 1/3-ը Մինչդեռ Օսմանյան կայսրության պետական բյուջեն, հակառակ պատերազմական ծանր պայմանների. հետևյալ անհամապետ աճն արձակագրեց. 1913-14 թթ.՝ 35 մլն օսմ. ոսկի, 1915-16 թթ.՝ 38 մլն, 1917-18 թթ.՝ 85 մլն; 1918 թ. կայսրության ողջ պատմության ընթացքում առաջին ազգային երիտարրարական իշխանությունները բռնարկեցին 19 մլն օսմանյան ոսկու համարժեք արժեքորեք: Պարզ է, որ պետական գանձարանը լցվել էր հայերի ինքըների և կալվածքների հաշվին⁴⁸:

Բավկայան պատերազմը վերջնականապես բանել էր բյուջեն, Թուրքիան զրկվեց իր հարկանու շատ տարածքներից: Դրան հետևեց եօյակի հեղաշրջումը 1913 թ., որոնք ամեն ինչ առան իրենց ձեռքը: Նրանք սկսեցին իրականացնել Զիյա Գյորալիի նախանշան «միլլ էկրաս»՝ տեսանության բռնրացման ծրագրը:

Սիահսունի, շարարի մենաշնորհի վերահսկումը նրանց աստղագրաշխական եկամուտներ ապահովեց: Հատուկ հանձնաժողովներ առեջանակին, որոնք բիրախանին խմբերի փորձագիտական ուսումնակիրություններ անցկացրին՝ «ազգայնացումը» արագ իրազերծելու համար: Այդ ծրագրի համակարգով էր Ծյուրյու Քայան: Հայունի կեղծարար Էսազ Ռուսաց գրադիւնը էր հայերու, Զելալ Քայարը՝ հոգևորու, Զերերս Սերսելը՝ այելիներու⁴⁹: Այդ ծրագրի հետահար նպատակներ տեսանական լծակները վերցել այլազգիների ձեռքից: Պատերազմը «նվեր էր» համա ծրագիրն իրականացնելու համար:

Այդ նպատակին էր ուղղված, մասնակիրավիս, Թալիաք վաշշայի 1916 թ. հունվարի 6-ի հրամանազիրը, համաձայն որի,

⁴⁸ Uğur Üngör, *A Reign of Terror: CUP Rule in Diyarbakır Province, 1913-1922*, Amsterdam, 2005, p. 61, pdf.

⁴⁹ Կազմակերպության կողմուն կը «Millî Türk Talebe Birliği», ոն և Uğur Üngör, *A Reign of Terror...,* pp. 20, 61-63.

հայերի ընկերություններից պեսք է առևիճական կամ-պահանջաներ. Վատչերներ (բաժնետոմսեր) թողարկել և բաժանել «ազիսի մուսուլմաններին», որպեսզի կապիտալը շրնկի օտար-ների ձեռքը:

Օրինակ, Դիարբեքիրի մետարքի գործարանի տեր Թրինչ-յան տանօտանակ եղավ բանում, տեղի վելի Նեղդերը տիրացավ նրա շքել տանը. իսկ գործարանը անդիքապես անցավ մուֆթիի որոշում՝ Մուֆթիանու Հռուսելինե»⁵⁰:

Ի դեպ, երբ Դիարբեքիրիում հայերի տիրահանությունը իրականացրած դժվարոր Սիհեմ Ռեշանին հարցվում էն, թէ արյոց նրա թիշկի լինելու հանգամանքը չի խանգարել նրան իրականացնել ուժիները. ևս շատ համբիստ պատասխանել է «Ես բոլոր եմ. ես պեսք է ոչնչացնել ոչ բոլորին. շապասելով. որ նրանք ինձ ոչիշացնեն և հետո, մի թէ թիշկի գործ չէ միկրոբներից պատասխելը»⁵¹:

Ներքին գործերի նախարար Բալեաք Փալշաք Փալշան իր «Ան տէնում» (փաշայի օրագիրը նրա այրին փոխանցել էր բոլոր պատմարան Սուրբ Բարդուղիմին, որի էլ այն իրատարակեց 2008 թ.)⁵² եշում է. որ միայն 1915 թ. հայերից խլված ակտիվիներից մասնմերական նորարեակիերին համոկացնել է 20545 շենք, 267536 ակր հողատարածություն. 76942 ակր խաղողի, 703941 ակր ձիթենու և 4573 ակր բիթ այգի: Եթէ հիմունիքը այն փաստով վրա, որ եայ թավակյուրան թիվը նիստել էր 1.5 միլիոնով, իսկ թատանիցում եղել է միջինը 10 մարդ, ապա հայերի կորցրած տևերի թիվը կկազմի նվազագույնը 150000: Լիովին ամայացնել էին 2900 հայկական բնակավայրեր, որոնցում կային 2300 եկեղեցի ու վանք և 700 դպրոց՝ ենթակա Սուսամբուի Հայոց (Հայ Առաքելական Եկեղեցու) պատրիարքության տնօրինությանը: Եթէ այդ թիվն ամելացնենք հայկական կաթոլիկ և բողոքական եկեղեցիներին ու դպրոցներից, ապա որանց թիվը կպերազանցի

⁵⁰ Ugur Üngör, *A reign of Terror: CUP Rule in Diyarbekir Province, 1913-1923*, Amsterdam 2005, p. 62.

⁵¹ Mithat Şükru Bozda, *İmparatorluğun Çöküşü*, İstanbul, Remzi, 1979, s. 59.

⁵² Murat Bardakçı, *Zalik Fazıl'in Enzak - i Merrikeli*, İstanbul: Erces, 2008, p. 95.

4000-ը³³: Այդ եկեղեցիների և դպրոցների մեծ մասն ուներ իր բարեգործական հիմնադրամը՝ պահպանին և սպասարկման համար շահույթ ստանալու նպատակով: Բոլոր այդ ակտիվները, բացառությամբ Ստամբուլի երկու հիվանդանոցի և մի քանի հայկական եկեղեցիների ու դպրոցների, 1915 թ. հետո անհետացան:

«Երջին հաշված հայերի ունեցվածքը ծառայեց մի քանի նպատակի. օգոստորձեց փախստական-մահմեդականների պահանջմունքները բավարարելու, մահմեդական բորժուական դրս ստեղծելու, տարրեր ուզմական կարիքներ բավարարելու, հայերի թօնի տեղահանության հետ կապված կառավարական ծախսերը փակելու, կառավարության ծախսերն ու պարուերը ծածկելու, և, վերջապես, քեմալական շարժման ժամանակ աշխարհազոր կազմավորելու համար³⁴:

³³ Dicran Kouyoumjian, "Confiscation of Armenian Property and the Destruction of Armenian Historical Monuments as a Manifestation of the Genocidal Process", in *Anatomy of Genocide: State-Sponsored Mass-Killings in the Twentieth Century*, Alexandre Kmentyl and Otis L. Scott, eds. (Lewiston, N.Y.: Edwin Mellen Press, 2001), pp. 307 - 319.

³⁴ Քանի Արշակ, «Հրազ զայրի մասին բոլոր օրինակներում թե օգնական և թե հանրապետական կառավարությունների անքնանակ կրկնել են այս մերժությունը, թե այդ ունեցվածքի իրական տերերը հայերն են», <http://akunq.net/dam/?p=26815>

ՀԱՅՈՒԹ «ԼՐԱՄ ԳՈՒՅՑԻ» ԽՆԴՐԸ ՔԵՄԱՍԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1918 թ. հոկտեմբերի 30 Մուլյոսի գիւղադաշտը նշանավոր քեց օսմանյան Թուրքիայի լիակատար պարտությունը Առաջին աշխարհամարտում:

«Երված գույքի» հարցը դրվել է Օսմանյան կայսրության հետպատճազմյան խորհրդարանի. ինչպես նաև Օսմանյան ռազմական տրիբունալների օրակարգում դեռ մինչև Թուրքիայի Հանրապետության հռչակումը⁵⁵. Այսպիսով՝ պատճենազմի տիտրուից մինչև Թուրքիայի Հանրապետության ստեղծումը տևած փուլը բացառիկ կարևոր է, որպեսզի հասկանաք. թե ինչպես տարբեր մրցակցող ուժեր (կենտրոնը Ստամբուլում՝ սուլթանի գլխավորությամբ և կենտրոնի Անկարայում՝ Արարարի գլխավորությամբ) վերաբերվեցին հայերի «յրված գույքի» ձականությին:

Ուստամասիրելով 1918 թ. օսմանյան խորհրդարանում տեղի ունեցած վիճարակությունները՝ բոլոր պատմաբան Այիս Արքարք շեշտում է, որ այն ժամանակ պատզամավորներից ոչ մեկը կասկած անզամ չի հայտնել հայերի կազմակերպված զաւովկածային կոտորածի հարցում՝ այն անկանելով «մարդկության և խղճի դեմ ուղղված հանցագործություն», ինչպես նաև նրանց ունեցվածքի բուազրավման անօրինականության վերաբերյալ:⁵⁶

Սուլթան Միհմետ VI-ի կառավարման նորանշանակ կարիստի Ներքին գործերի նախարար Միհմետ Էզզեր փաշայի նույնարկի 1-ի հրամանագրով նախատեսվում էր հայերից բռնպարաված հողերի և գույքի վերադարձ յոթեց օրինական տերերին՝ դրանց վերադարձի պահանջ ներկայացնելու դեսպրու։ Այդ հրամանագրի կարելի է որպես ձականությի հեգինակ

⁵⁵ Tamer Akçam, Vahakn N. Dadrian, "Tehcir ve Tahtzî : Divan-i Harbi-i Orfi Zabıtları, İttihad ve Terakkî'nin Yergâlîmâsi (1919 - 1922)", İstanbul : Bügî Üniversitesi Yayınlari 2008.

⁵⁶ Ayhan Akçar, "Son Osmanlı Meclisi ve Ermeni Meseleni: kasım - aralıkk 1918" Törökler ve Bütün, 91, Kış 2001/2002 s.142-165.

գևահասել, բանզի այնուեղից, ուր «ուղարկվել էին» հայերը, վերաբարձ չկայր:

1920 թ. հունվարի 8-ի որոշմամբ Ստամբուլում օսմանյան խորհրդարանը (պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից հետո) չեղյալ հայտարարեց բնակության այլ վայրեր արտաքսված մարդկանց ունեցվածքի բռնագրավման մասին երիտրութերի կառավարության ընդունուած օրենքը: Ըստ որում, ոչ միայն չեղյալ էին հայտարարվում բնագրավման գործողությունները, այլև հայտարարվում էր, որ մշակում էն օրինական տերերին բռնագրավված ունեցվածքի վերադարձման համար անհրաժեշտ միջոցներ:

Սակայն այն հեռանկարը, որ եղելուց մահապուրծ եղած թեկուցն փոքրաթիվ հայությունը կարող է հետափորություն ստանալ վերադարձնել իր ունեցվածքը, հանգիստ չեր տալիս ազգայնական ուժերին:

Հայտենի է, որ պատերազմում պարտվելու պարագայում, երիտրութերը մշակած ունենի այսպես կոչված պլան «Բ», այն է՝ դիրքավորվել երկրի ասիական մասում և կոչ անել «ազգային սպառագրական պայքարի»: Այն պիտք է իրականացնենին «երկրորդ Եղելոնի» իթթիհայտականները՝ «Մրավունքների պաշտպանության կոմիտեների» միջոցով: Շարժման ղեկավար դարձավ Թեմալ Արարյուրը⁷⁷:

Նորաստեղծ «շարժումը» մարդկային և կութական ռեսուրսի խիստ կարիք ուներ: Նեռն Մվասի համաժողովի ժամանակ պայմանավորվածությունն էր ձեռք բերվել որոշ քարտ առաջնորդների հետ, ի պատսախան երաց օժանդակության, հետազայում բռնը-քրդական դաշնային պետություն ստեղծել: Շարժումը համարվեց նաև երիտրութերի դեմ սկսված դաւավարություններից իուսափած, փախուստի դիմած հանցագործներով:

Անկարայում մեջլիս սկսեց գործել ապրիլի 23-ին, և նորը ըստիր մեջլիսի գործադիր կոմիտեն իր առաջին որոշմամբ

⁷⁷ Անուշ Հովհաննեսիսան, «Հեղազանության ժմուռում և երիկան (քուրքական ազգային պետարքան կազմավորման որոշ հարցերի լուսի ներքո)», Թուրքագույնական և օսմանեազիտական հետապուլություններ, հ. IV, Երևան, 2006, էջ 124-129:

(1920 թ.) արգելեց հայերի սպառ տնտեղաբարմբ, և այս որոշումը ընդունվելու կարևորագույն շարժադրբերը հրաշքով փրկված հայերին իրենց տները վերադառնապու և կորցրած սեփականություններ հետ պահանջելու հնարավորություններ գրկելն էր: Անկարայում հրավիրված մեջիսը 1920 թ. ապրիլին նախակ է հղում Լենինին, իսկ ապրիլի 23-ի թիվ 336, հունիսի 14 թիվ 769 որոշումներում արձանագրում է հայերի վերադարձին Խոշընդոտելու անդրաժշտությունը: Սերի պայմանագրի (օգոստոսի 10) ստորագրութից հետո, որտեղ 144 հայութանով նախատեսվում էր անշարժ գույքի վերադարձը տերերին, բիզնեսի վերաբանվելումը, բռնագավաճակ ունեցավածքի վերադարձը, «շարժման» կողմնակիցների շարքերը համայնքում են երանք, ուրեր վախենում էին կորցնել այս տմներ, ինչը դիմել էին հայերին կողոպտելով²⁸:

1921 թ. օգոստոսի 7-ին Ս. Շեմայլը, որպես «ազգային» բանակի զիրավոր հրամանատար, իր մոտ հրավիրված գաղտնի ժողովի 10 կետից բաղկացած որոշմամբ հրամայում է միջոցներ ձեռնարկել «թշնամու գեն պայքարը ֆինանսապես ապահովելու նպատակով» երկիրը բոլոր անձերի գործարքները անցած գույքը բռնագրավել՝ «բանակի կարիքների համար»²⁹:

Այդ գործուի հրամանը ուժի մեջ մտավ 1922 թ. Անկարայի պարմանագիրը ստորագրելուց հետո, երբ Քրաւելիացիները լրեցին Կիլիկիան և «ազատազրված» տարածքում (իսկ իրականում կիլիկիահայության շարդից հետո) կոնֆիսկացվելոց հայերի դեռևս մասցած ունեցածքը³⁰:

Արդեն 1922 թ. սեպտեմբերի 14-ին թեմականենքը հայտարարեցին, թե չեն ճանաչում սուլթանական կառավարության կողմից ընդունված՝ «լրած գույքի» մասին ժամանակավոր օրենքը անվավեր համարելու ակտը, իսկ 1923 թ. ապրիլի 15-ին Լոզանի խաղաղության պայմանագրի կնքումից անմիջապես առաջ ուղղումներով վերականգնելոց եշված իրթիադական

²⁸ Seit Çetinoglu, "Ankaralının İlk Kararı: Ermenilerin İlkeselerine/ evlerine Dönüşmeleri Yassakları", www.mavidefter.org/index.php?

²⁹ Seit Çetinoglu, "Ankaralının İlk Kararı..."

³⁰ İbrahim Halil Er, "Ermenilerin mallarına ne olsu", <http://aglisantul.wordpress.com/2007/04/23/>

օրենքը, բայ որի՝ հայերի ամրող ունցվածքը բռնպատճելում էր՝ անձախ այս բանից, թէ երբ, ինչու և ինչ հանգամանքներում են երանք լրի երկիրը⁶¹:

Հիմնվելով այդ օրենքի որույթների վրա՝ բռնքական կառավարությունը հավակնություն է երկայացրեց բռնքական բանկերում և արտասահմանյան բանկերի բաժանմունքներում հայերի ավանդների, ինչպես նաև այդ մասնաճյուղերի կողմից Նվրապա փոխանցված ավանդների նկատմամբ, և այդպիսով խոշնորուեց իրենց օրինական տերերին տվյալ գումարների վերադարձմանը⁶²:

Այսուամենայնիվ, Լոզանի պայմանագիրը ամրագրում էր Թուրքիայի քաղաքացի հանդիսացող հայկական փոքրամասնության իրավունքները: Ուստի, 1923 թ. սեպտեմբերին փափոխություն մոցվեց «Մահսն-ի Սուսու կառու»-ի 2-րդ կետում, որի համաձայն Կիլիկիայի և Արևելյան վիլայեթների հայերին, որոնք «արտագաղթել» են, արգելվեց վերադառնալ Թուրքիա:

1926 թ. փետրվարի 2-ին օրենք ընդունվեց առ այն, որ վերադարձի ենքական չեւ 1923թ. հուլիսի 24-ին կերպած Լոզանի պարբանագրի ուժի մեջ մտնելուց առաջ (1924 թ. օգոստոսի 19-ը) բռնպատճելով գույքը:

1927 թ. մայիսին երապարակվեց կառավարության օրենքը, համաձայն որի Թուրքիայի քաղաքացիություն չեն ստունում բոլոր երանք, ովքեր չեն եղել երկրի տարածքում «ազատագրական պայքարի» տարիներին, ինչպես նաև արտասահմանում եղածները՝ 1923-ից (Լոզան) մինչև սույն օրենքի (մայիս 1927 թ.) ընդունումը: Այս օրոշումները զոյլի հասցեցին հայերի պահանջները սեփականության նկատմամբ: Հայ փախառականների Կենարունական կոմիտենի միջոցով Ազգերի Լիգային ուղղված բողոքները արդյունքի չեն բերում, դրանք մերժինան են Թուրքիայի կողմից: Հայաստանի խորհրդայնացումից հետո դաշնա-

⁶¹ Անոշ Շ. Հանիստելիսիան, «Թիֆլ Արարագը և հայերի ունեցելքնն զարգացը», ՎՀՄ համամական հանդեր, Երևան, 2011, Խոհեմար - մաս, թիվ 1, էջ 168 - 182:

⁶² Յորի Բարսեց, «Լեռունե, որոշումներ և հայության դժուակագործություն», <http://armenianhouse.org/barsesoy/articles-ra/gaili.html>

կիցեմբի շահերը այնու հայերի հետ չէին: Հայկական գույքի պահածը լոնցվեց, ինչպես և Հայկական հարցը⁴²:

1923 թ. ապրիլին (քեմայական շրջան) բռնի տարածական անձանաց ոչ միայն շարժական, այլև անշարժ գույքի վերջնական բռնազրակիման նպատակով Թուրքիայի Մեծ ազգային ժողովը օրենքի սկզբանական տեքստում որոշակի փոփոխություններ մոցրեց՝ այն վերանվանելով «Լուծարման մասին օրենք» (Tasfiye Kanunu): Այդ անվանումով այն գործում էր մինչև 1988 թ. Խոյեմըրը⁴³:

Լրագրող Նեզար Օզարանը «Եցակ գույքի դեպքը. Հայկական և հունական ապրանքների բուրքացումը օւմանգան և հայրապետական շրջաններում» վերևագրով գրում վերտունում է այն տնտեսական քաղաքականությունը, որը տարվել է Անառնիարում 1915 թ. և հետագա տարիներին: Վեց մասից բաղկացած այդ ուսումնասիրության զինամուր նյութն են կազմում օրենքներն ու կարգադրությունները, որանց կապակցությամբ մեջլիսում կատարված թնաքրումները: Թուրք լրագրող Նեզար Օզյուսի հետ հարցազրուցում նա նկատում է, որ «բուրքական բուրժուազիայի նարսության կոտակման մեջ եղանակայի տեղ է գրափում «որիշի» տնտեսական աղբյուրը Բունազրավաճ «որիշի» ապրանքը զավթիւմ է բաժանման և վաճառքին... 1915 թ. մայիսի 27-ի Տարահանության օրներու իրենց տնից, տեղից և հողից արտորված ու «կյանքի անվտանգության» խնդիր ունեցած հայերը 1915 թ. մեպստմբերի 26-ին իրապարակված «Լուծարման օրենք» (Tasfiye Kanunu) էլ իրենց տների, աղջիների, պարտեզների, արտերի և գործարանների կողովունույն համովագեցին «գույքի անվտանգության» խնդրին, որն արվում էր հանուն գանձարանի...»⁴⁴:

⁴² Խոյեմ տեղում:

⁴³ Nevzat Onaran, *Esenyi - İ Mecruke adıyla: Osmanlı'da ve Cumhuriyet'te Ermeni ve Rum malların Türkçesirilmesi*, İstanbul, Beige Yayınları, 2010, s.30-31.

⁴⁴ Թուրք ազգայնականության «սրբության» տնտեսական բարպարականությունը <http://akutog.net/am/?p=3874>

Հանրապետական ժամանակաշրջանում գործողության մեջ է դրվում Լուծարման հանձնաժողովը (Տանիք Կոմիցոն), որը պարտավորվում է կառարել հայերի և հույների զույգերը լուծարելու գործը: Սույն օրենքը ուժի մեջ է մտում մինչև 1988 թ. հոյենքը, այսինքն՝ 73 տարի: Այդպիսով թեև այդ ընթացքում սահմանադրությունը փոխվում է 5 անգամ, սակայն Լուծարման մասին այդ օրենքը միշտ մտում է ուժի մեջ: Հետո միայն դա ցույց է տալիս, թե որքան ամուռ կարող է լինել կողոպսիների միասնական կամքը:

Ըստ օրենքի՝ օմանյան ու հանրապետական ժամանակաշրջաններում գործած լուծարման հանձնաժողովների պահած «ընթացիկ և հիմնական» գրանցամատյաններից և ոչ մեկը չի հրապարակվել: Այդ գրանցամատյանների վրայից պաշտոնական բողի վերացմանը կրացահայտվի, թե ինչ արժունությամբ և քանի «ուրիշի» գույք է լուծարվել կամ փոխանցվել: Օմանյան պետությունում եղել են 33 հանձնաժողովներ, սակայն անհայտ է, թե քանիս են ստեղծվել հանրապետական շրջանում: Եթե 33 հանձնաժողովներից յուրաքանչյուրք ունեցած լինի մեկական «ընթացիկ և հիմնական» գրանցամատյան, ապա պես որ եղած լինի 66 գրանցամատյան, բայց չկա, իբրև թե չկա...

Թուրքական «ազգատագրական» պատերազմի ժամանակ 1921 թ. օգոստոսի 5-ին Ազգային ման ժողովի նախագահ և զիյավոր երամանատար Մուստաֆա Քենաչի երամանով հայքարգած պատերազմական հարկի փոխհատուցումն ապահովվում է 1924 թ. ապրիլի 3-ին երապարակված 459 թվակիր Հաշվարկի բնույթանուր օրենքով:

Սակայն այդ վճարման ժամանակ բացառություն են համարվում քաղաքացի հույներն ու հայերը: Այդ բացառությունն ապահոված 2-րդ հորդածի վերաբերյալ մեջիսի գաղտնի նիստում պատզամավորեներին տեղի կություններ հաղորդած Հանձնախմբի նախագահ Հասան Ֆեհմին հետևյալ կերպ է հիմնավորում նման հորդածի պատրաստումը: «Հոդվածի նպատակն է յեկարառել հույների և հայերի՝ Ազգային և ուգմական հարկերի արձանագրությունները... Մի միջոց է մտահղացմի, որպեսզի հույներն ու հայերը չօգտվեն Ազգային և ուգմական հարկերի

արձակագրությունների վճարումներից Սակայն չենք կարող բացահայտ ասել, որ դա ուղղված է հայերին և հույներին: Առաջարկվեցին տարբեր ձևեր և ձևակերպություններ... Ի վերջո, զատաք այս ձևը, որն ամենաբիշը կարող էր արգելվել կամ չարգելվել...⁶⁶: Ահա արդրան պարզ բացատրություն: Ու բանի որ բազարացիների փոխառուցումները վճարվելու են պետական զանարանից, որը մեծապես համարվել էր փորրամասնություններից բժնազրակիված «լրյալ գույքի» հաշվին, սուազլում եր, որ սպանելով, երկրից փարպիված կամ էր «քայլամի քերումով» կենդանին մնացած հայերն ու հույներն էին վճարելու իրենց խոհ դեմ մղված բժնազրական «ազատազրական» պատերազմի համար (Kurtulus Savas):

Ֆինանսների նախարար Մուսուլման Արդուիհայիրը, որն արսորի ժամանակ նոյն է Բիթլիսի նախանձապետը, ինչպես նաև՝ Թալենք փաշախի բնականը. «Մեզ չպատկանողների համար հենարսավորինս շատ արգելվելու ենք հարուցելու» ասելով՝ վերջակետ է դնում այդ բնարկումներին:

Օրենքում նշված արտահայտությամբ հայերի գույքիրը, որպես մի տեսակ «արքան գիւ», բաժանվում էն այն իբրիհանդական «շեքերին», որոնք հայունի են որպես Հայոց ցեղասպանության մեջ մեղավորելու, և որոնք սպանվել են արտասահմանում կամ մահապատճի ենթարկվել երկրի ներսում: Դզմիրի մահափորձի դատարքելությունից (1926 թ. հունիսի 26) առաջ 1926 թ. մայիսի 31-ին հրապարակված 882 թվակիր օրենքով Թալենքը, Զեմայը և Բեհանդին Շարին ել ենթայալ՝ 12 իբրիհանդականի ընտանիքներին, առանց մի դրուշ պակասայի, ուղիղ 20 հազար լիրա արժողությամբ հայկական գույք է բնաշվում: Արգելը է դրվագ՝ այդ գույքերը 10 տարի չվճարելու համար: Իբրիհանդական այն տառնիքների ցուցակում, որոնց արվելու էն հայերի գույքերը տեղ չի գտնում հնվեր փաշախի անունը, որը հայունի էր որպես Միություն և առաջադիմություն կուսակցության երեք առաջնորդներից մեկը՝ Թալենքի և Զեմայի հետ մեկտեղ: Այս ցուցակում ընդգրկված մի իբրիհանդական էլ մահապատճի է ենթարկ-

⁶⁶ Կոյն տեքստ:

վում Դգմիքի մահափորձի դատավարության արդյունքում⁶⁷: Հայտնի է, որ Քեմալ Աթաթօւրքը խիստ հակակրանք ուներ Էնգերի հանդեպ, երա անվան բացակայությունը ցուցակում հռչում է, որ «արյան զին» մասին որոշումներն ընդունում եր անձամբ Քեմալը:

Ուժագրավ է, որ երապարակախոս Սուլթան Բարդակչի, որը իիստ քենարանուն է Զեմալ Փաշայի բառան վերջին զիրքը՝ 1915 թ. Հայոց ցեղասպանության վերաբերյալ, հիշեցրել է երան, որ երա ընտանիքը ևս «արյան զին» է տասցել հայերի գուրից: Սուլթան Բարդարչի Հաբերտուք կայրում գետադրված իր հոգիածում ներկայացրել է կառավարության որոշման արխիվային մի փաստաթուղթ Աթաթօւրքի և կառավարության բոլոր անդամների ստորագրությամբ: Այդ փաստաթուղթով որոշվել է, որ պետության կողմից բժնագրավված Սուլթանի թեյթուլ, Ֆարիբօյը և Ֆրանսիական զերեզմանցի դիմաց Թարավիս պողոտայի «Վիզին Հոկուցյանի կողմից «բռնված» անշարժ գույքը պիսար է տրամադրվի հայ Վրիժառուների կողմից սպասված բուքը պետական գործիչների ընտանիքներին: Փաստաթուղթը նաև պարզ է դառնում, որ 1450 քառ. հոգաւարածքը և 200 քառ. շինությունները տրամադրվել են Թիֆլիսում սպասված Զեմալ Փաշայի ընտանիքին⁶⁸:

Տեղահանված հայերի ունեցվածքի վաճառքին ու բաշխմանը վերաբերող կարգավորումներն ակտիվանում են 1930-ական թթ.: 1915 թ. արժեքավոր իրերի վաճառքը նախատեսող կանոնակարգումից (1926 թ. մարտի 13-ի 781 թիվական օրենքը) հետո օրակարգում է այդ իրերը վերցրածների կամ օսկրածների անուների արձանագրումը գրանցաւալուաների մեջ: Այդ հարցն էլ է կանոնակարգման ենթարկվում:

1929 թ. ճգկածամի սրման ժամանակ բժնագրավված աղյուրներից մեկն էլ դառնում է այն դրամը, որը որպես «ավանդ»

⁶⁷ Խոհքը չույն Նազարեան մասին է:

⁶⁸ Murat Bardakçı, "Atatürk, 1915'e 'soykırım' diyen Hasan ağabeyin ailesine 'kan parası' olarak Ermeni gıyurmeneküllerini bağışlamıştır"<http://www.habereturk.com/duyurular/murat-bardakci/793024-ataturk-1915e-soykiram-diyen-hasan-agabeyin-ailesine-kan-parasi-olarak-ermeni-giyurmenekullerini-bagislamisti>

բողեք էին արտօրյալները Ֆինանսների նախարարությունում: 1928 թ. մայիսի 24-ի 1349 թվակիր օրենքով այդ ավանդից բցոքն է փոխանցվում 300 հազար լիրա: Ի դեպ. եթե միայն բուժելի քանակին աճը ի նկատի ունենանք, ապա այն կկազմի այսօրվա 300 միլիոն նոր (արդիշոն նիև) բուրքական լիրա: Նման փոխանցումները շարունակվում են նաև հետագա տարիներին²⁹:

Պատմաբան Սահիք Շերինովուն, որը նույեպես գրադիմ է ֆորբսանություններից բռնպարաված գույքի խնդիրներուն, արձանագրում է: «Այդ առումով այսօր որ ունեցվածքի վերին շերտը մասընթաց տակից գրեթե առանց բացառության, լրիվ թեղապահությունից մեացած հարստությունը դուրս կա: «Թուրքական կապիտալիզմի հարստության առաջացման գործերեացի սկզբում, գրեթե յուրաքանչյուր օրինակում կա և հայկական, կա և էլ հունական գույքի կիանիդակեր: Ինչ-որ կերպ 1913-23 թվականների դեպքերի ժամանակ ձեռք բերված մի շարք հարստությունների կիանիդակեր: Սակայն երբ որպա մասին խոսությանում են, համախ աշշարող են անում մի ավելի կարևոր հանգամանք: Միակուսակցական ժամանակաշրջանում եթե մեկ առ մեկ անդրադառնար թուրքիայի Ազգային մեծ ժողովում կամ ժողովրդական կուսակցության (Halk Partisi, հետազայտում՝ CHP-ժողովրդականիրապետական կուսակցություն - Ա.Հ.) բարձրաստիճան դեկազմարդյան կազմում գտնվող անձնաց, կունենք, որ նրանք բոլորն ել գրեթե առանց բացառության, Տեղապահության միջոցով հարստացածներ են: Աքարյուրքը էլ բացառություն չի կազմում երանց մեջ: Պատկերացրեք, որ նախագահական պալատը հանդիսացող Զանքայան Քառափանների ապարանքը է³⁰: Այլ բան ասելու կարիք էլ չի մնում, եթե ասեք՝ համառոտ կերպով ներկայացրեք Թուրքիայի Հանրապետությունը, ենեց միայն այդ նախադասություննել էլ բավարար լինենի. Զանքայան Քառափանների ապարանքն է: Գիտեք, որ երկրի բոլոր կողմերում առկա ներկայութիւն ապարանքներն ու տները: Ես ինը հաշվում եմ մոտ

²⁹ Բայց ոգբոյնականության «արբունու» մետեսական բարպարականությանը
<http://akunis.net/am/?p=3574>

³⁰ Աքեպում Թուրքիայի նախագահ Ռեզեփ Թայիֆ Էրդողանի նախակայը է նորակառությ շրեւ և անոնքի շափերի հասնող Աքարայ պալատը:

20-25 համ՝ Տրապիզոնում, Բուրսայում, այսուել-այնուել, Աղյուսում, Տարբառում, ամենուր: Այսինքն՝ անհայտագեպ երևույթ է, որակը բոլորն է՝ առանց բացառության, ոչ մատուցմաների կուտրածի կամ տեղափակության միջոցով ձեռք բերված գույք են»⁷¹:

Այս իրադրությունը հետաքաղը է նաև ներկայացնել թվերով. Զամբեր Թոփրարի ուսումնասիրության մեջ 1908-1913 թվականների միջև հետամյա նախապատճեազման ժամանակաշրջանում գոյուրյոն ունեցող բամենտիրական թվերությունների ընդհանուր թիվը 113-ն է, որոց հարատությունն ընդհանուր կազմել է 10.596.562 օսմանյան լիրա, իսկ պատերազմի տարիներին՝ այդ բառամբա ժամանակաշրջանում (1914-1918 թթ.), հիմնված բամենտիրական թվերությունների թիվը բարձրացել է 123-ի, և հարստությունն էլ ընդհանուր կազմել է 18.545.000 օսմանյան լիրա. այսինքն՝ գրեթե 2 անգամ ավելացել է⁷²: Այս դեպքում, եթե ընկերությունների թիվն աճել է, բուրքական կապիտալով ընկերությունների հարստությունն էլ անցել է Առաջին աշխարհամարտի առաջին տարվա ըրուժի կեսը: 1914 թ. ըրուժն կազմել է 35.329.950 օսմանյան լիրա: Եթե այդ թվերին ննը հավելում նաև դարձայ Զամբեր Թոփրարի՝ 1919 թ. հիմնված, բայց վերը հիշված փետրուսուբերի ժամանակ որպես բամենտիրական թվերություն շնանդիպած և 1927 թ. գործող 15 ընկերությունների Շեմբայրվում է, թե դրանք 1918 թ. հետո վերածվել են բամենտիրական թվերությունների) 2.294.000 լիրայանոց կապիտալը⁷³, տեսնում ենք, որ թվերն ավելի են մնանաւում: Այդ թվերին ավելացնենք նաև իրադադարձանների՝ 1918 թ. 19 միլիոն օսմանյան լիրայանոց պետական կունվերսիան ներքին շուկայում իրացնելու հաջողություննը՝ շնորհած պատերազմի վերջին տարին լինելու փաստին: Ի դեպք, Օսմանյան պետությունն առաջին անգամ էր ներքին շուկայում կունվերսիա իրացնում: Մենք շենք կարող անցնել՝ առանց հետևյալ հարցը բարձրացնենքու. այդ ջրադաշտ

⁷¹ Սայիդ Զիրիկօղլու, «2015 թ. 100-ամյա տարիների միջոցների շաբաթ» <http://akunq.net/am/?p=30783>

⁷² Zafer Togek, *Türkçe'de Millî İttihad*, Yarın Y.1982, s. 358-365.

⁷³ Նոյն տեղում, չ.365.

շուրջ որոտի ց է այսուհետեւ արդյոք: Այդ թվերը համեմատել կարողանալու և զարգախար կազմելու համար հայունեց, որ օսմանյան բյուջեն 1913-14 թվականներին կազմել է 35.329.950 օսմանյան լիրա, 1914-15 թվականներին՝ 57.841.339 օսմանյան լիրա⁷⁴, իսկ 1916-17 թվականներին՝ 82.980.780 օսմանյան լիրա⁷⁵:

Հանրապետության հոչակամարք թեմայիստական իշխանությունը հարստության այս զավթումն օրինականացրել է քաղաքակիրք օրենքով⁷⁶:

Միուրյան և առաջադիմություն կուտակցության առաջնորդելիք Հայի Անկարեցնի այն խոսքը, թե «Այս տեղահանության գործի հետ շատօնված ռուրոր շատ քիչ կա Անառողիայում»: Թատեսաշաշության համար այն հայկարևական պատասխանառությունը, որի կրելուց այդքան վախճնում նև թուրքիայում⁷⁷:

«Հայկական կառպիտավի» բնազրությման գործընթացը կարևոր դեռ է խաղում այն հաստատութեական ժառանգություններին ընթանած մեջ, որով եշտափորվեց անցյամք կայությունից հակառապետության: Այդ ժառանգործությունն ակնհայտ է, քանի որ այն սկսվում է Օսմանյան կայության շրջանում (բնազրավում) և ավարտվում Թուրքիայի Հանրապետության ժամանեակիներում (ուրացում):

⁷⁴ Çavdar Tevfik, *Türkiye Ekonomisi Tarihi*, İmge K, 2003, s 124.

⁷⁵ Sait Çetinoglu, «Sermayenin Türkçesi ve İstilme», *Külliye Tarih Tercümanları* -2, Ed. Fikret Başkaya, 2. Baskı 2009, s. 130-131.

⁷⁶ Սահիբ Շաքիեցոյ, «2015 թ.՝ 100-ամյա տարիիցից սինդրոմի շարք» <http://akunq.net/um/7p-30783>

⁷⁷ Taner Akçam, *İslan Hakkı ve Ermeni Sorunu*, İmge Yayınevi, Ankara 1999, s. 587.

**ՀԱՅԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՐՈՒՏԱՆԵՐԻ ԽԱԴԻՔ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՅՅԱՆՆԵՐՈՒՄ ԱՊԱԶՈՒ
ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՑ ՀԵՏՈ**

Հայոց ցեղասպանության մասին խոսելիս շեշտը դրվում է՝ առաջին հերթին հայ ժողովրդի մարդկային կորուստների վրա, բանզի մարդկային կյանքը գերազանց և բացառիկ արժեք է, այն անգին է Սակայն ցեղասպանության տարիներին հայ ժողովրդին ունեցել է նաև հակայական նյութական կօրուստներ։ Հայոց ցեղասպանության զիսավոր փուլում (1915-1918թ.) Օսմանյան կայսրությունում իշխանությունը զավթած Միտրոպոլ և Առաջադիմություն Կոմիտեն (Երիտրություն), ծրագրեց և դեկավորեց մոտ 1.5 միլիոն հայերի բնաշնչումը, իսկ մնացած 1 միլիոնը դարձան փախառականներ ու սփոթեցին աշխարհով մեկ։ Ասվիճելի է, որ ցեղասպանության ածանցյալ նպատակներից է եղել հայ ժողովրդի անհատական և հավաքական սեփականության յուրացումը։ Ցեղասպանության ընթացքը զուգորդվում էր հակայան տառապանիքներով՝ բունարարություններով և սպանված հայերի զրկեց ամբողջ ունեցվածքի բալանսը՝ սկսած փողից, ուկեղենից ու հողից մինչև խոհանոցի պարագաներ ու հագուստ։ Երկրորդ փուլում (1919-1923թ.) բռնը ազգայնամոլեւրը ներխուժեցին 1918թ.-ին հիմնադրված Հայոստանի Հանրապետություն և բռնազավթեցին նրա տարածքի մեծ մասը այն միացելով նոր ստեղծվող Թուրքիայի Հանրապետությանը, իսկ մյուս մասն էլ դարձավ Խորհրդային Միության մաս։ Ազգայինամոլեւրի ուժերը ու նրանց կողմանակիցները նաև արգելեցին հայերին Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը⁷⁶.

Հայկական հողով ու գույքով է ստեղծվել թուրքական հակառապետությունն ու նրա տնտեսությունը, այսինքն թուրքական պետությունը ստեղծվել է հայկական ունեցվածքի հիման վրա, իսկ հազարավոր հայեր զրկվել են ամեն ինչից և մատնվել աղ-

⁷⁶ Հայոց ցեղասպանության հասուցաների ռազմակիրաման խորի զեկուցք,
<http://www.arfd.info/hy/?p=21459>

բառության: Այսինքն, ցեղասպանության պես ծակը ոմիրից Թուրքիան օգուտ է ցաղել: Միջազգային իրավունքը հոչակում է: «ex injuria non oritur ius»⁷⁹, այսինքն՝ հանցագործքը չպիտի վայելի իր հանցագործության պատվիճելը, ուստի և հանցագործության հետևաերենը չեն կարող ճանաչվել կամ օրինականացվել⁸⁰:

1918թ. Խոյեմբերի 11-ին Առաջին աշխարհամարտում տագմական գործողությունները վերջնականացվելու դադարեցնող զինադադարը պաշտոնական մուավ ուժի մեջ Երկու ամիս անց՝ 1919թ. հունվարի 18-ին, Փարիզում իր աշխատանքներին սկսեց Փարիզի Խաղաղության վեհաժողովը (The Paris Peace Conference), որի նպատակն էր համապարփակ բնության ներարկել պատերազմին առելվող հարցերը և նախապատրաստել խաղաղության պայմանագրերը: Կարևորագույն հարցերի թվին էր պատկանում պատերազմի հրահրման համար մեղավոր երկրների կողմից նորթական կորուստների փոխհատուցումը (reparation): Ըստ այդմ, Փարիզի վեհաժողովի կազմում ատելեցված էր փոխհատուցումների հարցով հայոց հայուսկ հանձնաժողով: Գրեթե 2 ամիս տևած աշխատանքներից հետո պարզ դարձավ, որ նյուրական կորուստներ են ունեցել ոչ միայն պատերազմին անմիջական մասնակցած երկերը: Ուստի, մարտի 7-ին նշյալ հանձնաժողովը ձեռվորեց առանձին մարմին՝ Հատուկ հանձնախումբ (Special Committee), որի նպատակն էր ի մի քերել հանձնաժողովում չներկայացված երկրերի և ժողովուրդների կորպուսները և դրանց փոխհատուցմանը տալ պաշտոնական թերացը: Հանձնախոմիքի ձեռվորման հաջորդ իսկ օրը՝ մարտի 8-ին, այն դիմեց Բոլիսիայի, Բրազիլիայի, Շինաստանի, Էկվադորի, Գվատեմալայի, Հայիքիի, Ճեցագի (ներկայում Սաոււլյան Արքարիա), Պահամայի, Պերուի, Սիամի (ներկայում Թայլանդ) և Հայաստանի Հանրապետության (Delegation of the Armenian Republic of the Conference of Peace) պատմիրա-

⁷⁹ Հայ. «Քրավախախումմից իրավունք չի կարող առարկար-

⁸⁰ De Zayas A., *The Genocide against the Armenians 1915-1923 and the Relevance of the 1948 Genocide Convention*, Brussels-Geneva, 2005, p.41.

կություններին՝ խնդրելով տեղեկություններ կրած նյութական կորուստների վերաբերյալ⁴¹:

Մեկ ամսվա ընթացքում Հատուկ համահայուսմին ամփոփեց պատվիրակությունների ներկայացրած, ինչպես նաև այլ միջոցներով հայրայքած, փաստաթղթերը և 1919թ. ապրիլի 14-ին ներկայացրեց իր հայնական գեկույցը: Փարիզի խաղաղության վեհաժողովում հայկական պատվիրակության դեկանարեր Ավետիս Ահարոնիանը և Պոլոս Նուրար փաշան ներկայացրել էին գեկույց «Tableau approximatif des Réparations et indemnités pour les dommages subis par le Nation arménienne en Arménie de Turquie et dans la République Arménienne du Caucase»: Թեև արևմտահայության և արևելահայության համար հաշվարկելոր կատարվել էին առանձին-առանձին, սակայն կորուստները ներկայացված էին միասնական վերջնական բնույթով⁴²:

Ըստ այդմ, հայության ամբողջական նյութական կորուստը 1914-1919թթ.-ին 1919թ.-ի գեկույց կազմել է. 19.130.982.000 ֆրանսիական ֆրանկ կամ 3.693.239.768 ԱՄՆ դոլար:

Ըստ գեկուցագրի, հայության նյութական կորուստներն ունեն հետևյալ պատկերը:

1. Արևմտահայաստան (կամ ինչպես փաստաթղթում է գրված՝ Turkish Armenia).

ա) զյուղաբնակելիքի անհատական նյութական կորուստներ՝ 4.601.610.000

բ) բաղարաքնակելիքի անհատական նյութական կորուստներ՝ 3.235.550.000

գ) ոչ անհատական նյութական կորուստներ՝ 6.761.350.000 Ընդամենը՝ 14.598.510.000 ֆրանկ

2. Հայաստանի Հանրապետություն և Կովկասի այլ հայաբնակ տարածքներ.

⁴¹ Արա Պապյան, «Հայ ժամովքի նյութական կորուստները Հայոց գեղասպահության ժամանակ», «Հայոց պահանջանաժիյության հրավական հիմնելում» Երևան, 2007, էջ 22:

⁴² Kévoek Baghdjian, *La confiscation, par le gouvernement russe, des biens arméniens... dès à présent»*, Montréal, 1987, pp. 270-280.

ա) այս բնակավայրերի բնակչության կորուստները, որոնց բնակչությունն ամբողջությամբ տեղահանվել է՝ 1.831.872.000

բ) այս բնակավայրերի կորուստները, որոնց բնակչությունը չի տեղահանվել՝ 1.293.600.000

գ) այլ եղուական կորուստներ՝ 1.407.000.000 Ընդամենը՝ 4.532.472.000 ֆրանկ Համընդիանուր եղուական կորուստները 19.130.982.000 ֆրանկ²³:

Անհրաժեշտ է ըստգծել, որ այս թիվ մեջ ներառված չեն հայրի 1920թ., 1921թ., և 1922թ. (համապատասխանաբար՝ Արևելյան Հայաստան, Կիլիկիա, Զմյուռնիա և այլն) եղուական կորուստները: Եթե հաշվառվեն ևան նշյալ ժամանակահատվածի կորուստները, ապա, բնականաբար, վերոնշյալ թիվն առնվազն պետք է 15-20%-ով մեծացվի:

Պետք է ևան սշել, որ Հայաստանի Հանրապետությունը երբեք չի հրաժարվել իրեն հասանելիք հատուցումից (reparation): Անդամ հայոց պետականության կորստից հետո, եթե այս ուզմակարգից օտարերկրյա զինված ուժերի կողմից (ռուսական 11-րդ բանակ + բուրբական 3-րդ բանակ), Հայաստանի Հանրապետության օրինական ներկայացուցիչները շարունակել են պետք հայ ժողովությի իրավունքների, մասնավորապես եղուական փոխհատուցման վրա²⁴: Բնշանս սշում է «Modus vivendi» վերլուծական կենտրոնի դեկանար Արա Պապյանը, Լոզանի պայմանագրի կիրաւումից (24 հուլիսի, 1923թ.) անմիջապես հետո Փարիզի վեհաժողովում Հայաստանի Հանրապետության պատվիրակության դեկանար Ավետիս Ահարոնյանը պաշտոնական գրությամբ (8 օգոստոսի 1924 թ.) դիմել է Գյուալիոր դաշնակից ուժերի արտաքին գործերի նախարարներին և վերահստատել հայոց իրավունքներին հավատարիմ մասը: Վերլուծարանը ևան անհերթ է: համարում առանձնացնել մի կարևոր հանգամանք փոխհատուցումների հարցով՝ ժամանակային գործոնը բնակ հիմք չէ եղուական պարտավորություններից խուսափելու համար: Ֆիելանդիան ԱՄՆ-ի նկատմամբ Առաջին համաշխար-

²³ Արա Պապյան, Խջ. աշխ. էջ23:

²⁴ Հայք տեղում:

հային պատկրազմից մնացած իր նյութական պարտավորությունների կատարումը ամբողջացրեց միայն 1969-ին, Մեծ Բրիտանիան միայն 1965թ.: Ներկայիս Ռուսաստանը դեռևս խնդիրներ ունի ցարական Ռուսաստանի նյութական պարտավորությունների առումով: Թուրքիայի Հանրապետությունն ինքը, չետայած հակայական գիշումներին, Օսմանյան կայսրության պարտը կարողացավ փակել միայն 1944թ. հունիսին²⁵:

«Երև Ֆոր Լայֆ» ապահովագրական ընկերությունն (NYLIC) իր 1875-1915թ. շահագունքների ժառանգելերին փոխհատուցման համձևառության մասին հայտարարեց միայն 2004թ. հունիսին, այն էլ երկարաժամ դատավարությանցից հետո: Սույն դատավարությունը, թեև անմիջականորեն չի վերաբերում Հայոց ցեղասպանության ընթացքում մեր ընդհանրական նյութական կորուտաների փոխհատուցմանը, այսուհանդերձ խիստ կարևոր է: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի մեջ Ֆրանսիական ֆրանկը ներկայումս հափառար է 2.17 ԱՄՆ դոլարի: Այսինքն, դատական նախադեպի կիրառմամբ, մենք կարող ենք հաշվարկել հայության նյութական կորուտաների չափը Հայոց ցեղասպանության հետևանքով՝ 19.130.982.000 դրանսիական ֆրանք չ 2.17 = 41.514.230.940 ամերիկյան դոլար:

Այսպիսով, Թուրքիայի Հանրապետության, որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդի, փոխհատուցման պարտավորությունը ներկայիս Հայաստանի Հանրապետության եկամուճամբ, որպես Հայաստանի առաջին հակառապետության իրավահաջորդի, կազմում է առևազք 41 միլիարդ 514 միլիոն 230 հազար 940 ամերիկյան դոլար²⁶:

Հայոց ցեղասպանության նյութական կորուտաների հատուցման պահանջով առաջին անգամ միջազգային վեհաժողովին ներկայացված վերոհիշյալ փաստաթորթի նշանակությունը որևէ կերպ չխսնացնելով հանդերձ, պետք է նշենք, որ երանում արված հաշվարկերը, որոց օրինակիվ ու սուբյեկտիվ հանգամանքներից ենելով չեն կարող համարվել վերջանական և ենթակա

²⁵ Լույգ տեղում:

²⁶ Արտ Պապյան, նշվ. աշխ. էջ 24:

Նև Հշըրտման: «Անհաժողովին ներկայացված հուշագրում, բացի կուսակցություններից, նախատեսված էին հաշմանդամների, վերափորձերի, ակրութեալ վասակածքներ ստացածների արտորյանների, արտորյա վերապրած և արտասահմանում գործազորկ մնացածների. կաշառակերպության և բնագրավման դեպքերի. ինչպես նաև ազգային և կյունական կառուցքների ավերման համար հատուցումներ:

Որպես երաժական կորուստ, սակայն, հաշվառված չեր բնագաղթից առաջ ու դրա ընթացքում բուրքերին գրաշներով հարկադրյարար վաճառութ հայության ունեցվածքի իրական արժեքը:

Տաշվի առնելով այն հանգանակությունը, որ Փարիզի վեհաժողովին ներկայացված հայերի կուրական վասաների հասուցման վերաբերյալ հուշագիրը մնաց անհետնաեր, իսկ բեմայականները փաստորեն շարունակում էին հայերի ցեղասպանության բարդարկանությունը, որին գուշակիութ ընթառում էր նրանց ունեցրկման գործընթացը, փորձ կատարվեց հարցի լուծումը տեղափոխել Ազգերի լիգա²⁷.

Սակայն, Ազգերի լիգայի Խորհրդություն ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի զանգվածային ունեցրկման փաստերին բաղարական ու իրավական գնահատական տալու փոխարեն, հայ զայրականների իրեն հղած բոլոր զանգվածներն ու բոլոր ները (ըստ ընթացակարգի) հանձնեց Թուրքիայի Հանրապետության կառավարությանը:

Ի պատասխան Ազգերի լիգայի Խորհրդի՝ իրենց վերահսկացրված բոլորների, բուրքական իշխանությունները նշում էին, որ թէ հայ զայրականների և թէ «բյալ գույքի» հարցն արդեւ ենթակա չէ բնարկման, բանզի «հայ զայրականներ» կոչվածները «ինքնակամ փախուսոի դիմած անձինք» են (Ֆր. «fugitifs»), որոնք բուրքական նոր օրենքի համաձայն զրկվել են Թուրքիայի բաղարացիությունից, ուստի երանց նկատմամբ կի-

²⁷ Յու. Քարեդյոյ. Հայերի ցեղասպանության համար նյութափառ պատուականություններ (հնագրավիճակ և փոխառություններ). Երևան, 1999, էջ 17-29.

բառելի չեն Լոգասի պայմանագրի համապատասխան դրույթները²⁵։ Ազգերի լիգայի կրավորական պահվածքի պայմաններում բուրցական իշխանությունների նման պատասխանը միանգամայն սպասելի է:

Ազգերի լիգայի անգործությունից հիմաժամկետ Հայ գաղքականության կենտրոնական կոմիտեն փորձում էր պարզել հայության ինախության վերականգնման հեարակություններն ըստ տվյալ պահին գործող միջազգային իրավունքի:

Հաշվի առնելով Ազգերի լիգայում Հայկական հարցի փակույթի մասնելը, ինչպիս են օ Թուրքիայի մերժութական կեցվածքը՝ 1929 թ. հունիսի 5-ին Հայ գաղքականությունից կենտրոնական կոմիտեն խորհրդատվական եղրակացություն տրամադրելու խորհրդակու դիմեց Ժամանակի հետինակավոր իրավաբան-միջազգային համագուներ ժիրքը ժիղելին. Այլիք Լապրադեին, Լուի Շեյտրին և Անդրե Սանդելշտամին՝ առաջ բաշելով հետևյալ հարցադրումները.

1) Արդյոր միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքները և գործող նորմերը թույլ են տալիս օսմանականության հայերին զրկել Թուրքիայի բանարացիությունից այն հիմքով, որ կրակը չեն մասնակցել այսպես կոչված «ազգատագրական պարագին»:

2) ա-Արդյոր միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերը թույլ են տալիս, որ Թուրքիան իրականացնի իր սահմաններից դուրս գտնվող հայերի. ինչպես են Թուրքիայի հայկական համայնքի ունեցվածքի բուռզընալում, որն սկսվել է իրականացվել դեռ Լոգասի պայմանագրի ստորագրումից առաջ և շարունակվել է դրանից հետո:

բ-Եթե պատասխանը բացասական է, ապա այլ նույն նորմերն ու սկզբունքները պարուանուեցնում են արդյոր Թուրքիայի կառավարությանը վերադարձնել երկրից դուրս գտնվող հայերին իրանց ունեցվածքը. իսկ երկրի ներում հայկական համայնքին:

3) Արևոր Թուրքիայի կառավարության և Լոգանի պայմանագիրը ստորագրած ցանկացած այլ պետության կամ Ազգերի լիգայի Խորհրդի անդամ-պետությունների միջև ծագած վեճերը, համարվում են միջազգային բնույթի և Լոգանի պայմանագրի 44-րդ հոդվածի համաձայն ենթակա են փոխանցման Միջազգային արդարադատության մշտական պալատի (այսուհետև ՄԱԱՊ) քննությանը կողմերից մնայի պահանջով:

Իրավաբան-միջազգայնագետները գործող միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների հիման վրա երկու ամիս հանգամանորն ընտության առան վերը նշված հարցերը և 1929թ. օգոստոսի 2-ին եւրկայացրեցին Խորհրդատվական եզրակացություն, որում առաջին հարցին միանշանակ տրվել էր բացասական պատասխան ընդգծելով, որ անկախ հայերի Օսմանյան կայսրությունը լրելու պատճեններից Թուրքիայի կառավարությունն իրավունք չուներ երանց զրկել բաղարացիությունից ու վերադաշնալու իրավունքից: Միաժամանակ նշվում էր, որ բռնքական կառավարության այսպես կոչված համաներման ակտը բացարձակապես կապ չունի արտագաղթածների վերադաշնալու իրավունքի հետ և որ համաներում կոչվածը կարող էր իրականացվել արտագաղթածների իրենց օշխիները վերադաշնալուց հետո միայն:

Երավախորհրդատունները նշում էին, որ նախկին բաղարացիություններին իրավունքներից զրկելը երանց նկատմամբ կրում է բրեական պատճի բնույթ, ինչը, տակայի, պետք է ունենար բավական լուրջ հիմնավորում, որովհետև պետությունները ծայրանեղ դեսպրում են իրենց բաղարացիներին զրկում բաղարացիությունից: Տվյալ դեպքում, ըստ մասնագետների, դա բացարձակապես անհիմն ու անօրինական էր, որովհետև բռնազարդի ներարկված հայերի «ազատագրական պարբարին» շմասնակցելը չէր կարող եիմք հանդիսանալ երանց բաղարացիական իրավունքներից զրկելու:

Թուրքիան, մասնագետ իրավաբանների կարծիքով, այս հարցում չէր կարող արդարանալ անզամ այն փաստարկով, որ բաղարացիություն տրամադրելը ցանկացած պետության ինքնիշխան իրավունքն է, բանի որ պետության բացարիկ իրա-

վասությունները ստիմանափակվում են միջազգային իրավունքի նորմերով:

Երկրորդ հարցի առաջին մասին նորմերն սրբի էր բացառական պատասխան՝ նշելով, որ ոչ միջազգային իրավունքի գործող նորմները, և ոչ էլ, առավել են, Լոզանի պայմանագիրը բուրբական կառավարությանն իրավունք չեն տալիս բնագավթելու հայերի ունեցվածքը՝ անվախ այն բանից մինչև Լոզանի պայմանագիրը, թե որանից հետո է կատարվել այդ անօրինական գործողությունը:

Սրանից ենելով՝ մասնագետները դրական էին պատասխանում երկրորդ հարցի երկրորդ մասին ընդգծելով, որ բուրբական կառավարությունը պարտավոր է վերականգնել հայերից բնագրավված ունեցվածքը և որպես առվաճի հիմնավորում մեջքերում էին հետպատերազմիան խաղաղության պայմանագրերից հոդվածներ, որոնցով ընդգծվում էր մասնավոր սեփականության պաշտպանության և վեսաված կամ բնագրավված ունեցվածքի վերականգնեման պարտադիր սկզբունքը:

Ինչ վերաբերում է երրորդ հարցին, ապա մասնագետները նշում էին, որ հայերից բնագրավված ունեցվածքի հարցը սկզբունքորեն կարող է ստանալ միջազգային վեճի ընույթ և Լոզանի պայմանագրի 44-րդ և Ազգերի լիգայի կանոնադրության 14-րդ հոդվածների համաձայն՝ դառնալ Ազգերի լիգային կից ՄԱՍՊ-ի ընույթյան առարկա: Սակայն դա կարող էր կատարվել այս դեպքում, եթե բուրբական կառավարության տեսակետից տարբերվող մոտեցում ունեցող որևէ պետություն դիմեր ՄԱՍՊ-ին²⁰: Այսպիսով՝ հեղինակավոր իրավաբան միջազգայնագետները դեռ 1929 թ. լիովին բացահայտել են Թուրքիայի հակաիրավական բաղարականության եռյունը հայերի նկատմամբ. ինչը միանշանակ հակառակ էր այդ ժամանակ գործող միջազգային իրավունքի նորմերին:

Անվանի իրավաբան-միջազգայնագետ Յու. Բարսեղովը, իր հոդվածներից մեկում անդրադառնալով քենարկվող հարցերին ընդգծում է, որ ստորագրելով Մերի պայմանագիրը ստորագր-

²⁰ Յու. Բարսեղով. Նշվ. աշխ., էջ 23-29.

կան կառավարությունը ճանաչել է Թուրքիայի պատասխանատվությունը Հայոց ցեղասպանության համար՝ միջազգային բոլոր իրավական հետևողքերով⁶⁶.

Հիշեցնենք, որ Սևի հաւատության պարմանագի «Հայաստան» բաժինն ընդունվում էր 88-93-րդ հոդվածները: Թուրքիայի սովորական կառավարությունը ճանաչում էր Հայաստանի իրեն ազատ և անկախ պետություն: Թուրքիան ու Հայաստանը համաձայնում էին Երգրումի, Տրասիգոնի, Վանի և Բիրլիսի հանագներում երկու պետությունների միջև սահմանագատումը բռննի ԱՄՆ որոշմանը և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և բոլոր առաջարկները Հայաստանին դեպի Սև ծով ելք տալու և եթշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տարածքների ապատազմականացման վերաբերյալ: Ազրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմանները որոշվելու էին այդ պետությունների հետ ուղղակի բանակցությունների միջոցով: Անօրինական էր հայտարարվում լրայի գույքի մասին օսմանյան կառավարության 1915թ. օրենքը: Թուրքիայում մնացող փոքրամասությունների պաշտպանությունը, կյանքը, ազատությունն ու հավասարությունը օրենքի առաջ պետք է ապահովինին կառավարության կողմից: «Պատիժներ» մասում բուրքական կառավարությունը ճանաչում էր դաշնակից տէրությունների իրավունքները՝ ուսումնական առյանին հանձնելու պատերազմի օրենքներին ու կանոնները խախտած մեղադր անձանեց, ինչպես նաև նրանց կողմից իրազործված հանցագործությունների մասին տեղեկություններին ու փաստաթղթները⁶⁷.

Սակայն, զրում է Բարսեղովը, թէմակական բուրք ազգայնականների հետ բոլշևիկյան Ռուսաստանի գաղտնի գործարքի⁶⁸

⁶⁶ Յորն Վարչուս, «Державы, причастные к Геноциду армян, должны искупить свою вину» <http://armenianhouse.org/charter/gov/articles-na/gault.html>

⁶⁷ Ա. Կիրակոսյան, Հայֆահան Առքը և հոգերի ցեղասպանաթյունը (պատմաիրավական նույնազու տեկնկանց), Երևան, «Հայպատ» ԳևԼ, 2006, էջ 24-25:

⁶⁸ Խոսքը զևսվ է 1921թ. մարտի 16-ին Մասլվառում Ռուսաստանի և Թուրքիայի միջև կերպար շարեկանության և եղբայրության պայմանագրի մասին, ուժի Ա. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 28:

հետեակրով, ինչպես նաև արևմտյան տերությունների քաղաքական շահարկումների արդյունքում Սևրի պայմանագիրը այդպիս էլ կյանքի չկոչվեց:

Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ կառավարությունները փորձում էին Հայկական հարցը ծառայեցնել իրենց ծրագրերին և երբեք լրջորեն շմտահոգվեցին հայ ժողովրդի ճակատազրությունը: 1921թ. հունվարին Փարիզում Անտանտի գլխավոր խորհրդի նիստում, Ֆրանսիան հաեցի եկամ Սևրի պայմանագիրը վերանայելու պահանջովը: 1921թ. փետրվար-մարտին Լուսնուում կայացած Անտանտի պետությունների և պատերազմում պարտված Գերմանիայի և Թուրքիայի մասնակցությամբ կայացած կոնֆերանսում Ֆրանսիայի և Շտատիայի առաջարկով քննարկվեց Սևրի հաշուության պայմանագրի վերանայման խնդիրը:

Օգուլելով միջազգային նոր իրավիճակից և Անտանտի տերությունների միջև եղած հակառարջյուններից Անկարայի կառավարությունը պահանջեց վերականգնել նախապատերազմական սահմանները, բացառությամբ Կարսի մարզի: Ավելին Շահարունակելի և Պողոս Նուբարի դեկանարած պատվիրակությունների ապարդյուն փորձում էին համոզել Անտանտի տերությունների ներկայացուցիչներին՝ իրազործել Սևրի պայմանագրի Հայաստանին վերաբերող հոդվածները և «վարչական ինքնավարություն» ստանալ ֆրանսիական ազգեցության ոլորտում գտնվող հայկական Կիլիկիայի համար: Սակայն կոնֆերանսը բավարարվեց միայն Թուրքիայի արևելյան և ասիմաներում «Հայկական ազգային օգախ» ունենալու իրավունքի անորոշ ձևակերպմամբ, որը չընդունվեց բուրքական պատմիքակության կողմից:

1920-21թթ. ընթացքում Կիլիկիայի Ֆրանսիական վարչությունը որևէ միքան ձեռնարկեց հայ բնակչության անվտանգություններ ապահովելու ուղղությամբ: Օգուլելով այդ հակառամաերից՝ տեսլի թուրք պետական պաշտոնյաների ու քեմալական գործերը կազմակերպեցին 25 հազար հայերի կոտորածը և հայ քնականության արտօնագործը Կիլիկիայից 1921թ. հոկտեմբերին Անկարայում ստորագրված թուրք-ֆրանսիական համաձայնագրով Կիլիկիան հաեձևվեց Թուրքիային:

Ֆրանսիայի դիվանագետ Ժակ Բարդու իր հուշերում խոստովանում էր, որ Ֆրանսիայի առաջնակարգ խնդիրը Արևելյան Միջերկրականի շրջանում տնօպարաշխված ֆրանսիական կատախուալերի եւ առաեալն էր: Ֆրանսիական կառավարության բարերականությունը, Անկարայի դեկանար շրջանների հետ «լեզու գունդու» երա բազմարիմ փորձերը վկայում էին հետեւ այս մասին, որ Ֆրանսիայի նպատակն էր պահպանել ֆրանսիական խոչըն դրամատէրքի նախապատերազմական դիրքերը Թուրքիայում և ձեռք բերել շահագրծման ու հարստացման նոր աղբյուրներ:

«Թուրքական պայմանագիրը,- գրում էր Պուանկարեն, ստորագրվեց Սերում՝ ճնշապակու գործարակի գտնվելու վայրում: Եվ նա ինքը փիրուս է գոցն և քարդված տափոր»⁹⁹:

Այսինուն, Ֆրանսիայի տիրապետող շրջանների թուրքամիրյունը, որը խարսխվառ էր երանց աներկրա տեսուական և դրամական շահերի վրա Թուրքիայում, կարեռ գործու հանդիսացած Առաջին աշխարհամարտի ավարտից հետո ոկիոր առած ֆրանսիական թուրքանախատ անջատ բաղարականության գործում, ինչը կործանելու ազդեցություն ունեցավ կիլիկիանայրյան հետազա ճակատացրի համար:

1922-23քք. Լոզանի միջազգային կոնֆերանսն ավարտվեց մի շարք փաստաբորքերի ստորագրմամբ, որինցից ամենակարևորը Լոզանի հաշտության պայմանագիրն էր, որով հաստատվեցին Թուրքիայի արդի տահմանեները՝ փաստորեն փոխարինելով Սերի հաշտության պայմանագրին: Կոնֆերանսի աշխատանքների ընթացքում ընկարկվեց նաև Հայկական հարցը: Հայուսուանի Հանրապետության պատմիրակությանը պաշտօնեացնելու շրուվատրվեց մասնակցել կոնֆերանսին, քանի որ նա այլու չէր ներկայացնում Հայուսուանը: Այդուհանդեմ, Ազգային պատմիրակության հետ համատես կոնֆերանսին ներկայացվեց մի հուշագիր, որը առաջարկում էր Հայկական հարցի երեք հեարաններու լուծում. ա) Հայկական ազգային օջախի ստեղծում, թ) Հայա-

⁹⁹ Առական Շ.-Թուրք-ֆրանսիական հարաբերությունները օ կիյիջիան 1919-1921 թք., Երևան, 1970, էջ 20:

տաեմ ընդարձակվում՝ նրան կցւով Արևմտյան Հայաստանի մի մասը դեպի ծով ելքով, զ) հայկական ազգային օջախի ստեղծում Կիլիկիայում: Ազգային փորբամասնությունների հարցի կազմակցուրյամբ 1-ին հանձնաժողովն ու ներահանձնաժողովը մի բանի նիստերում անդրադարձան Հայկական ազգային օջախի գաղափարին: Զնայած Անտանտի տերությունների ներկայացուցիչների հայտնապատճառություններին, բուրքական պատմիքակությունը կտրականապէս մերժեց հայկական ազգային օջախ ստեղծելու գաղափարը պատճառաբանելով, որ Թուրքիայի ոչ արևելյան նահանգներում, ոչ էլ Կիլիկիայում չկա որեւ տարածք, որի բնակչության մեծ մասը բուրքեր չինեն: Թուրքական պատմիքակությունը նաև նշում էր, որ Թուրքիան միջազգային իրավունքին համապատասխան պայմանագրեր է կնքել և «բարիդրացիական հարաբերություններ» հաստատել Խորհրդային Հայաստանի հետ:

Վերջին անգամ Հայկական հարցը շաշափվեց 1-ին հանձնաժողովի 1923-ի հունիսի 17-ի նիստում և, վերածվելով հայ գաղքականության հարցի, փոխանցվեց Ազգերի լիգային: Եվ արդին կըրչած պայմանագրում հիշատակություն անգամ չկար ոչ Հայաստանի, ոչ էլ հայերի մասին: Պայմանագրի 42-րդ հոդվածով բուրքական կառավարությունը պարտավորվում էր ապահովել Թուրքիայի ազգային փորբամասնությունների աղոթարանների, գերեզմանոցների ու կրոնական մյուս հաստատությունների պաշտպանությունը⁴⁴:

Այսպիսով, 1923 թ. Լոզանի պայմանագիրը, որն ըստ Եռլիքան Սկրի շրջանցման փոքր էր, չէր պարունակում որեւ դրույթ, որով Հայաստանը և հայ ժողովորդը կկարողանային պաշտպանել իրենց գույքային իրավունքները:

Մեծ տերությունների վերաբերմունքը հայերի քաջանին նույնապէս կանխորոշված էր իրենց վերաբերմունքով Հայկական հարցին, նշում է Ցու. Քարտելով վերսիիշյալ հոդվածում Վերջակահապէս փակեց հարցի բայցարական և ֆինանսական պատասխանամուրյան խնդիրը ձգտել է ոչ միայն Թուրքիան:

⁴⁴ Ա. Կիբառկոսյան, նշվ. աշխ., էջ 30-31:

Գործնական առումով այդ հարցն առևտություն ուներ թէ՝ Գերմանիայի հանգացության, թէ Անտախով տերությունների թողտվության հետ ինչի շնորհիվ էլ հետաքոր էր դարձել Հայոց ցեղասպանության իրազործամբ. եղանակնեմ է իրավագետը⁹⁵:

Լուսակի խորհրդաժողովի ամբողջ ընթացքը հաստատում է այդ գաղափարը՝ ապացուցում, որ տերությունները խառնելով փոքր ժողովուրդների ճակատագրերը, փակում էին նաև այդ լայնիրենուից դուրս գալու ուղիները. ցավով եշում է սփյուռքահայ բաղարական գործից, հրապարակախոս Գ. Ահարոնյանը: Ահա թէ ինչու ևս դաւնությամբ գումար էր. «Մեծ պետութեանց ներկայացուցիչները Պետառոսի պետ լուացին իրենց ձեռքերը, և ըստունցին բուրբական տեսակետը՝ որպահետեւ իրենց բաղարական բարոյականց ամերան ինկած էր՝ որքան բուրքինը: Քայլացակը ության համար սեւագոյն օր մըն էր Լօզակի դաշնագրութեան սառագրութեան օրը: Ենթասպաններու մեծ լայրանակի օրն էր անիկա: Այդ օրը աշխարհի մաները հանդիսաւոր կերպով քաղեցին «Տայկական հարցը» ... Սակայն նոյն առթիւ անոնք բարած եղան նաև պատի և արժանապատութիւն, հանդիսաւոր խոստում և երրում, սկզբունք և արդարութիւն, իրաւոնք և օրէիք...»⁹⁶:

Արաւող անհրաժեշտ է ինչառակել, որ զիտական գրականության մեջ զոյլություն ունի կարծիք, համաձայն որի հայ ժողովուի ունեցվածքի բարացումը տեղի ունեցավ ոչ միայն թաշնօթու բարբական պետության և երան դաշնակիցների կողմից, այլև Առաջին աշխարհամարտում հայերին «դաշնակից» համարվող Առուանուի տերություններից՝ Մեծ Բրիտանիայի կողմից: Սաևնավորապես, մի բանի հրապարակումներով այդ խնդիրն է անդրադարձել պատմաբան Տ. Սարովսանյանը⁹⁷:

⁹⁵ Յորն Բարցոս, «Դերձակ, որոշակում և բարություն արքունիկ գումար, ճշգույտ և առաջարկություն» <http://armenianhistory.org/decisionsandarticles.ru/guilty.html>

⁹⁶ Գրուած Անարության, «Մեծ հրայի ձախորդ վրայ (Մինարք Հայոցին հարցի պատմութեան վրայ) Դեմքը, 1964, էջ 171:

⁹⁷ Տ. Սարովսանյան, «Հայոց ցեղասպանության համար կուրսանքների խնդիրը և Մեծ Բրիտանիա (1915-1924 թթ.), Պատմաբանագիտական հանդես, 2002, №.1, էջ 50-64; նույնի «Մեծ Բրիտանիայի և

Պեղումները այս մասին, որ Մեծ Բրիտանիան մասնակից է դարձել Առաջին աշխարհամարտի ավարտից հետո բնացեզման դատապարտված հայերի ունեցվածքի մասնակի լուրացմանը, տեղ է են գտնել անհիջապես Հայկական հարցի պատմորյանը և պատմաբանների թեսարկմանը հանձնելուն գուգինքաց Այդ պեղումներից շատերը կրել են անուղղակի բնույթ և շարժուսկվել գրեթե ինը տասնամյակ՝ այդպես էլ չիմնավորվելով որևէ հավասարի, արժանահավատ և վատերական պաշտոնական փափրազրու:

Այդ հանգամանքին է անդրադարձի անգամ մեծ թեսախույզ Ֆրիւլիոֆ Նաևսենց, ով 1920-ական թվականներին, Ազգերի Լիգայի շրջանակներում հոգածութ աշխատանք էր տանում Շեղապատությունից մազապուրծ գաղթականներին և որրացած հայ մասնակներին փրկելու ուղղությամբ Հետամուս լիեւըն և յուրաքանչ միջոցների հայրայրմանը, թերևս, աշխարհում Նաևսենն առաջինը հանդես եկավ, իր պեղմանք, հայերից լուրացման 5 միջինն ունենալու գումարի մասին, և ով հայտնվել էր Մեծ Բրիտանիայում հայերին վերադարձնելու հայրածնությամբ: Հարցին վերաբերայ պաշտոնական վակէրագրերը S. Սարգսինականը հայտնաբերել է 2002թ. Լուսադուռ Մեծ Բրիտանիայի արխիվային հաստատություններում գիտարքան հետազոտությունների իրականացման թերացրում:

Հերիենակի խոսքերով, «Առանց այդ վակէրագրերի անհնարին կլինենք մնակարաննեկ՝» մինչ օրս բավարար չափով չուսումնասիրված, ինչպես Հայոց ցեղասպանության համար կույտական պատապիչականության բացակայություն առեղծվածը. այսպես էլ հայերից բալանիված, իսկ հետազոյում՝ Մեծ Բրիտանիայի կողմից գույքված 5.000.000 բուրքական ունենալու ճակատագիրը»⁴⁸:

Մեծ Եղիսաբետ ողջ ընթացքում Մերձավոր Արևելքը, Արևելյան

ցեղասպանության ընթացքում հայերի կրօն կուրքական և ֆինանսական վնասների մի շարք հարցերի յուրց՝ <http://168.am/2012/10/18/137006.html>

⁴⁸ Տ. Մարտիրոսյան, «Մեծ Բրիտանիայի և ցեղասպանության թերացրում հայերի կրօն կուրքական և ֆինանսական վնասների մի շարք հարցերի յուրց՝ <http://168.am/2012/10/18/137006.html>

Հայաստան ու Անդրկովկասը հեղեղված էին հարյուր-հազարամյա հայ զաղբականներով։ Դրաեց մի մասը սովորական եղալ կամ մահացավ տարբեր մահաբեր ու համաճարակային հիմքանդրաբաններից։ Այդ օրերին, հայ ժողովրդի «դաշնակից» Անգլիայում որոշ անհատներ փորձեցին կառավարության միջոցով մասնակից լինել տարապիր հայերի փրկության կազմակերպման գործին։ Բրիտանա-հայկական կոմիտեի անդամ լորդ Ջեյմս Բրայսը 1915թ. սեպտեմբերին վարչապետին նորած նամակում ներկայացնելով միայն Թիֆլիսում և նրա շրջակայքում կուտակված հարյուր-հազարամյոր «բացարձակապես ընշագույք, հիվանդություններից և սովոր մեռնոց» հայ զաղբականների վիճակը, օգնության կազմակերպելու համար կառավարությունից աղերսամ էր 40.000 անգլիական ֆունտ առևողինցի հասնող նվիրատվություն։

1916թ. փետրվարին Լոնդոն հասավ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Մաքրունի՝ հայ զաղբականներին օգնելու ռուսական կառավարության առաջարկը, որը փոխանցվեց անգլիական կառավարության թնարկմանը Սեծ Բրիտանիայում հավատարմագրիամ Ռուսաստանի դեսպան կոմս Քենեթենդրիֆի միջոցով։ Համաձայն ռուսական ծրագրի ռուսական և անգլիական կառավարությունները պետք է հավասարապես կիսեն Թուրքիայում հայերի օգնության համար հատկացված 1.000.000 ֆրանկ նվիրատվությունը։

Ըստ որում, անգլիական կառավարությունը պետք է հատկացնի 20.000 անգլիական ֆունտ առևողին։ Ֆինանսների նախարարության կողմից արտաքին գործերի նախարար Եր. Գրեյին փոխանցված նամակում Զուն Բրեյքբրիի կողման էր, որ «քանի զետք չ ծագել բարպարական կարևոր շահագրգուժածություն, իրենք ազգային շահերի տևանակյունից կասկածվելի էն համարում այն ճանապարհը, որով առաջարկվում էր օժանդակել հայերին։ Ճենվելով կառավարության, ֆինանսների և իր նախարարության համատեղ կարծիքի վրա՝ արտաքին գործերի նախարարի տեղակալ Զ. Լոկոլը կոմս Քենեթենդրիֆին հորած պատուսիան-համակում մերժեց «փոքր ազգերի ազատազրության համար կովող Սեծ Բրիտանիայի կողմից հայ տարագիրներին շնչին եղութական

միջոցներով օժանդակելու առաջարկությունը՝ պատճառաբանելով այն «հրատապ ու անհետաձգելի աղերսազբերով, որոնք ուղղվում են Ֆինանսների նախարարությանը, կարիքից մասնաւոր բրիտանացի և դաշնակից երկրների նպատակների կողմից»⁷⁹.

Ճշմարտությունն այն է, որ Թուրքիայի դեմ մղված պատեհազմի ընթացքում անզիջական կառավարությունը ոչ մի յումա չհատկացրեց անգամ մեկ հայի փրկության համար։ Կառավարությունը ոչ միայն մերժում էր իր միջոցներից գումար հատկացնել, այլև մասսամբ խոշընդունում էր նույիսիկ անզիջական մասնավոր ընկերությունների կողմից միեւ պատերազմը հայերի նկատմամբ տուածեած ֆինանսական և կյուրական պարտավորությունների կատարմանը։ Խոսքը վերաբերում է Օսմանյան Թուրքիայում գործող լյանիքի և ունցվածքի ապահովագրման մի շարք ընկերությունների գործոնեկությանը։ Դրանք զիսավորապես ամերիկյան են, կային ենև ֆրանսիական և անգլիական տարրեր ընկերություններ։ Խաչես, օրիենակ՝ անգլիական Գրեշամ (Gresham) և Մթար Աշուրանս (Star Assurance Company) սպահովագրական ընկերությունները։

Տակավին 1916թ. նոյեմբերին Կ. Պոլսում ԱՄՆ դեսպան Հենրի Սորգենբաուն (որը միևնույն Թուրքիային ԱՄՆ-ի կողմից պատերազմ հայուարարելը համատեղության կարգով երկրայցներ էր ենև Ման Բրիտանիայի շահերը) Անգլիայի արտաքին գործերի նախարարությանը հետաձայնության մեջ նշում է, որ Սամսունի ամերիկյան եյուսպատոսական աշխատակցից ստացել է համոզիչ ապացույցեր այն մասին, որ գեղասպանության ժամանակ գոհված Հովհանն Շենքի Սաստայանը հասցեկ էր ապահովագրել իր կյանքը 3000 ֆրանկ գումարով անգլիական «Մթար Աշուրանս» ընկերության հետ կիրքած N114645 պայմանագրով։ Հ. Սորգենբաուն անգլիական իշխանություններին

⁷⁹ Ա. Նախայեան, Բանակիան եւ Հայկական Հայր (1915-1923), Պերով, 1994, էջ 84: «Այսուելից կարելի է ներառել, որ մեկ անգլիական ֆունտ տոկովիցը 1916թ. պեցվին առկա արտաքաշային փոխարժեքով հասանար է եղի 25 ֆրանսիական ֆրանքի»։ Մենք Հ. Սարուխանյան, «Հայոց գեղասպանության համաց կյուրական պատասխանավորության խնդիրը...», էջ 55:

Միաժամանակ խորում էր՝ զռիված անձին հաստաելիք գումարը վճարել ցեղասպանությունից մազապործ եղած նրա որբացած երեխաներին:

Եղ. Գրեյի անունից արտաքին գործերի և ախարարի տեղակալ Նարուդ Նիկոլայի առևտորի և ախարարին հղած նամակում գրում էր, որ անզիական ապահովագրական ընկերությունները պետք է ձեռնպահ մեան ցանկացած փոխառուցման գումարի վճարումից քանի որ «բօնազարդված հայերի մահվան առեցուրամբ ներկա պայմաններում որեւէ բացարձակ ապացուց չի կարող ներկայացնել»¹⁰⁵: Հ. Նիկոլայի և առաջնային պետք է փոխանցվեր Լուսունում ամերիկյան դեսպան Վ. Փեյջին:

Նամակում Հ. Նիկոլայի արտահարուած այս կարծիքը հետագու տասնամյակների ընթացքում ընկալ Անգլիայի կողմից որդիկրած հայերի նկատմամբ ստանձնած պարտականությունների ուրացման խորիուրառը, գրում է Տ. Սարովիայանը¹⁰⁶: Շնուվելով առևտորի և ախարարի տեղակալ Հ. Ա. Վիներալսի կարծիքի վրա՝ Հ. Նիկոլայի ԱՄՆ դեսպանին ուղղված պատախան-համակում նշում է, որ պատերազմի ընթացքում արգելվում է որեւէ գումար վճարել այն անձին, որը հաւելիանաւում է բշխամի երկրի բաղաբացի: Նա հետաքանի էր համարում վճարել ապահովագրական պայմանագրով և ախարարութեաված գումարը միայն այն անձին, ով Անգլիայի մշտական բնակիչ էր, կամ և ախարական պատերազմը բնակվել էր այսուհետ: «Երբուն Հ. Նիկոլային ավելացնում էր, որ «ապահովագրական ընկերությանը չի բռնաւորվում որեւէ գումար վճարել Մասաքրանի երեխաներին, անզամ, եթե բնարկվու ընկերությունը ցանկություն ունի վճարել ապահովագրության դիմաց»:

Անգլիան պատերազմում էր Թուրքիայի դեմ՝ վերջինիս լծի տակ հեծող «փոքր ազգերի ազատազրուած համար»¹⁰⁷: Եվ ահա,

¹⁰⁵ Տ. Սարովիայան. Խո. աշխ. էջ 56:

¹⁰⁶ Լուս տեղում:

¹⁰⁷ Թերունի զեկուցումից. «Երբ պաշտակիցները և քրութեավին պատերազմի մեջ, եղանակ և պատահենքից մենք Փոքր Ասիայում գտավի քիչ կուրուն բրիտանական փորբանական բանակներից պաշտպանությունը և հոգացածության դիսրեմ. Երանց ազատազրուած էր: Նա առանձինութեավ վերացերում է:

այդ գործին իր բուռն ավանդը ներդիսող հայը վերածվել էր «քշնամի քաղաքացու»: Մամուլի էջերում և պատղամենում բազմից դեմագոգիկ հայանպաստ հայտարարություններով հանդես եկող անզիխական կառավարության անդամները նույնիսկ մասնավոր ընկերություններին խոչընդոտում էին կատարել իրենց իսկ կողմից ստանձնած պարտականությունները: Անզիխական արխիվներում մինչ օրս պահպանված նախընտառ Առաջին աշխարհամարտը հայերի հետ կերպ տարատեսակ ունեցվածքը ու մարդկային կյանքն ապահովագրող իրավական այդ փաստաթղթերը այդպես էլ առ սյուր մնում են՝ որպես, մեծի մասամբ պատմական մոռացված արձանագրություններ:

Անզիխայի և Թուրքիայի միջև 1918թ. հոկտեմբերի 30-ին կիրված գինադադարուկ ազդարարվեց Առաջին համաշխարհային պատերազմում վերջինիս պարտությունը: Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության, հայ ժողովրդի համար կենսական այլ հիմնահարցերը տեղափոխվեցին Փարիզի խորհրդաժողով, մեծ տերությունների միջև շարունակարար ընթացող երկարատև բանակցությունների և տարբեր կոնֆերանսների ու պատերազմի ավարտին ստեղծված, Անզիխայի ձեռքբերում խաղալիք հանդիսացող՝ Ազգերի լիգայի ընթարկման ոլորտը:

Նախընտառ Լոզանի կոնֆերանսը, հայ ժողովրդի արդարացի պահանջները, այդ թվում՝ նյութական փոխհասուցման հարցերը, լայն ընենքիման առարկա էին դարձել Ազգերի լիգայում: Ազգերի լիգան, որի լուս աշխարհ զալու զայտափարք անզիխական քաղաքական խոհանոցում ծագել էր դեռևս Առաջին աշխարհամարտի ավարտին, հիմնադրվեց 1919թ. Վերսալի հաշտության պայմանագրով: Այդուղի էլ ազդարարվեց վերջինիս հիմնադիր փաստաթղթի (առանուածի) ընդունումը: Լիզայի խորհուրդը բաղկացած էր չորս մշտական անդամներից, որոնց կազմի

Հայուստանին», տես Հայուստանը միջնորդացին գիտանուցիության մագիստրան արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), փաստաթղթերի ժողովածու (ոպրէ. Զ. Ս. Կյարակոպյանի խմբագրությամբ, կազմ. Զ. Կիրակոսյան, Ը. Սահակյան), Երևան, 1972, էջ 736:

մեջ էին մտելու Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Բուլղարիան և Հայաստան:

Համաշխարհային բաղարակրության բանկարծեք գենոֆոնի մի մասն է կազմում հայկականը: Անս թե ինչո՞ւ հայ մշակույթի պահպանումը պետք է լինի ոչ միայն հայկական, այլ նաև միջազգային հասարակայնության խնդիրներից մեկը: Նշենք սակայն, որ միշտ այժմ չի մշակվել գործուն միհանունը, որը բոլոր կուր հորդորներից բացի որոշակի միջոցներ կիրառել «մշակութային ջարդ» իրականացնող երկրների հաւելապ: Եվիշցարացի անվանի իրավաբան, միջազգային իրավունքի մասնագետ Ալֆրեդ դե Շարասը, որինակ առաջարկում է ճշգրտումներ մատենել 1948 թ. Կունենեցիայի տերատի մեջ, որոնք պատիժ կսահմանեն նաև ցեղասպանության ժխտման և մշակութային ջարդի համար¹²¹:

Հայոց ցեղասպանության մխառջականությունը, որը ըստ եռյան «սպիտակ շարդի» դրսորումներից է, Թուրքիայում

¹²⁰ Text of the European Parliament's Resolution of June 18, 1987, "The Armenian Question Today", Glendale, CA, 1988.

¹²¹ De Zayas A., *The Genocide against the Armenians 1915-1923 and the Relevance of the 1948 Genocide Convention*, Brussels-Geneva, 2005, p.41.

պետական բաղարականություն է և, ինչպես քնորոշվում է ցեղասպանությունների և մարդկության դեմ հանցագործությունների հակառազիտարանում սեփական անցյալը ժխտելու՝ պետության ամենաբացահայտ օրինակը¹⁵²: Անվանի մշակութարան Ռ. Քեվանը բուրբական ժխտողականության (denialism) մասին գրում է. Թուրքիայի ժխտողականությունը. «պատերազմը» հայկական ճարտարապետական հուշարձանների դեմ. Կրա կարծեցյալ «հայրական» ցանքերը վերաշարադրել պատմական իրողությունները ապացուց են այն բանի, որ այդ երկիրը մնում է «Եվրոպայի հիվանդ մարդ» (*The Sick Man of Europe*) և շարունակում է ցեղասպանությունը՝ ժիսեկով այն Ըստ Քեվանի ժխտողականությունը օժանդակվում է Արևմտարի այն ուժերի կողմից, որոնք ցանկանում են ՆԱՏՕ-ի անդամ և ԵՄ թեկնածուների թուրքիային պահի որպես դաշնակից Ժխտողականությունը ուղեկցվում է հայկական ճարտարապետության «մշակութային մարքմանը» (*cultural cleansing*)¹⁵³:

Չարաղրված փաստերը օրինաշափ մի շերա են կազմում և ցույց տային, որ ժամանակակից Թուրքիայում շարունակվում է հայկական պատմության ու մշակույթի դեմ ուղղված գելոցից:

Ռաֆայել Լեմկինը իր ահանդական պարտությունն էր համարում այն, որ չկարողացավ ստիպել ընդգրկել «մշակութային ցեղասպանություն» եզրը 1948 թ. Կոնվինցիալում: Նրա խորին համոզմանը ցեղասպանությունը, որպես տրանսհամական է ժամանակական մշակույթի միջոցով: Ռաստի այն հարցին, թե երբ է առկարտությունը ցեղասպանությունը¹⁵⁴ պատահումը մնին է՝ երբ դաշտեցվում է որևէ ժիշտումը և երբ հանցագործություն իրականացնած կողմը գրկում «ոճիրի պատուիներից» օգուվելու հետափորտքունից:

¹⁵² Մակերեսի Ա., «Թուրքական ժխտողականություն»: http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=483

¹⁵³ Bevan R., «The Destruction of Memory: Architecture at War», Chicago, 2006, www.press.uchicago.edu

¹⁵⁴ Kouyoumjian D., «When Does Genocide End? The Armenian Cases», Holocaust Lecture Series Sonoma, California March, 11, 2003.

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ ՈՉ
ՄՈՒՍՈՒԼՄԱՆԵՐԻ ՀԱՍՏԱԹՅԱՅԻ ԿԱՂՎԱԾՔՆԵՐԻ
ԽՂԱՐԳ. ՈՒՆԵՑԳԿԱՄԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՈՒՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հանրապետության հոչակտամիջ հետո քննական Թուրքիան հավատարիմ մասց ազգային փորրամասնությունների նկատմամբ Օսմանյան կարգության՝ հետևողականորեն իրականացրած ձուլման և ոչկացման բաղադրականությամբ: Թեև բորբական ազգային պետության ստեղծումն ուղեկցվում էր Արևմտյան Հայաստանի և Անաստիայի հայ, հույն, ասորի թագավորյան կուսորածներով և վերջնական տեղափակությամբ, բայց և այնպես հանրապետության հոչակտաման պահին էլ Թուրքիան բնակչության էր բազմաթիվ ազգային, եթեիլ, լեզվական և կրոնական փորրամասնություններով: Փորրամասնությունների հարցը բարձրացվել էր 1923թ. Լոզանի կոնֆերանսում: Թուրքիան, սակայն, ճանաչում էր միայն երեք փորրամասնությունների: այս էլ որպես «ոչ մուտքամաներ» կարգավիճակով:

Այսպիսով՝ Թուրքիայի ազգային փորրամասնությունների պարագայում խնդրու առարկան հայ, հույն և հրեա համայնքներն են, որտեղ՝ փորրամասնության կարգավիճակն ու իրավունքները դեռև 1923 թ. հունիսի 24-ին ստորագրված Լոզանի պայմանագիրը էր սահմանել:

Լոզանի պարմանագրի երրորդ բաժինը վերաբերում է Թուրքիայում ազգային փորրամասնությունների պաշտպանությամբ: Համաձայն 38-44-րդ հոդվածների՝ «Թուրքիայի կառավարությունը պարուափարվում է ապահովել Թուրքիայի բոլոր բաղադրիչների կյանքի և ազատության լիարժեք պաշտպանությունը՝ անկախ ազգային, լեզվական, ուսուայսական և կյուսական պատճանելությունից»:

Հոդված 39-ի համաձայն՝ պաշտպանական լեզու համարվող բուրքերին կողքին թույլատրելի է նաև ազգային փորրամասնությունների լեզուների կիրառումը: «Ոչ մի սահմանափակում և

արգելը չդնել, որպիսզի ցանկացած թուրքական քաղաքացի օգուվի որևէ լեզվից¹⁵⁶:

Հոդված 40-ի համաձայն՝ ոչ մուսուլմանական փոքրամասնությունները հավասարապես իրավունք ունեն իրենց հաշվին ստեղծելու և տնօրինելու բարեգործական, կրոնական, հասարակական հաստատություններ, դպրոցեր, ուսումնական և դաստիարակչական այլ հաստատություններ՝ իրավունք ունենալով այդ հաստատություններում ազատ օգուազործելու իրենց մայրենի լեզուն և ազատ դավանելու իրենց կրոնը:

Հոդված 42-ի համաձայն՝ Թուրքիայի կառավարությունը լիակատար պաշտպանության տակ էր առնում եկեղեցիները, սինազոգները, գերեզմաները և փոքրամասնություններին պատկանող այլ կրոնական հաստատությունները¹⁵⁷:

Լոգասի պայմանագրի եշված հոդվածներում փոքրամասնությունների իրավունքների իրավական երաշխիքների վերաբերյալ կետերում խոսր վերաբերում է բացառապես ոչ մուսուլմանական փոքրամասնություններին (Լոգասի պայմանագրը չէր ճանաչում ոչ թուրք մուսուլմանների, այդ թվում և բրյուրի, ալեսինների՝ փոքրամասնությունների վեհելու կարգավիճակը):

Սակայն այս բնորդ կետերը մնացին թղթի վրա՝ Շարունակվեցին փոքրամասնությունների հանդեպ հաւածանքերն ու հետապնդումները, ինչպես նաև նրանց ձուլման քաղաքականությունը:

Թէ՝ թեմական, թէ՝ հետազա թուրքական կառավարությունները մի շարք օրենսդրական ակտերի և միջոցառումների կիրառմամբ ձգուում էին ավարտին հասցեկ դեռևս ցեղասպանության տարիներին սկսված հայերի, ինչպիս նաև հոյերի և այլ բրիսուռեյանների ունեցողիքան զօրծելացը։ Այնահավալ այդ գործընթացը, ըստ Էռլյան, կապիտալի բուի փոխանցում էր ոչ մուսուլմաններից՝ մուսուլմաններին, ինք պետք է հիմք հանդիսանար Թուրքիայի ապագա անտեսական գարզացման համար։

Հայերի և հոյերի գույքի հետազա բնեազանումը իրականացվեց մի քանի փուլերով։

¹⁵⁶ Ա. Դիբակոսյան, եշվ. աշխ. էք 30-31:

Երկրորդ համաշխարհայինի թեժ տարիներին՝ 1942թ.-
բարբական կառավարությունը, Վարչապետ Շոքրու Սարացող-
լուի գլխավորությամբ, Ազգային մեծ ժողովի հաստատմանը
ներկարացնեց, այսպես կոչված, «Ռուսացիանի հարկ»-ի (Varlık Vergisi)¹⁰⁶ մասին օրենքը, որևէ ընդունվեց 1942թ. նոյեմբերի 11-ին՝
խորհրդարանի նիստին մասեակցող 350 պատգամավորների
միաձայն բժեարկությամբ: Թուրք ազգայինական իշխանություն-
ների հաշվարկներով համաշխարհային պատերազմի փայլուն
հետարագործություն էր ստեղծում երանց համար էլ ավելի ազատ
ու անկաշկանության հրականացնելու ազգային-կրոնական փոքրամաս-
ներություններին հաջածելու բաղարականությունը, ինչպես նաև
մասամբ լուծել երկրի առջև ծառացած որոշակի տնտեսական
խնդիրները:

«Ռուսեցիանի հարկ»-ը հարկասուներին բաժանում էր 4
խմբի՝ բայց կյունական պատճեններության ու մուսուլմաններ, թ-
ու մուսուլմաններ, զ. հավատափոխներ, դ. օսմարահպատակներ: Փաստորին, որանու խախտվում էր սահմանադրական այն
դրույթը, որի համաձայն՝ բոլորը, այդ թվում և ոչ մուսուլման-
ները, Թուրքիայի իրավահամասար բաղարացիներ էին, և սա
ավելի շատ հիշեցնում էր օսմանյան տիրապետության շրջանը.
Եթե ոչ մուսուլմանները վճարում էին մուսուլմաններից տարբեր-
վող հարկեր: Բայց հավատափոխներին չընդունելով մուսուլման-
ների խարի մեջ՝ բարբական պետությունը ևս մեկ անգամ բա-
ցանար ցույց տվեց, որ այդ խարի հանդեպ վառահություն չի
տաճում և երանց որպես «խոկական մուսուլմաններ» չի ըն-
կալում: Կան փաստեր նաև, եթք, օրինակ, խարի ընդունած հա-
յերը, հույնները և երեանները հարկվել են ոչ թե որպես մուսուլման
կամ հայատափոխ, այլ որպես ոչ մուսուլման: Սույն օրենքը
խախտեավում էր, որ մուսուլմանները վճարեն ուսեցվածքի 12.5
տոկոսի չափով հարկ, ոչ մուսուլմանները՝ 50 տոկոս.

¹⁰⁶ Ayhan Aktar, Varklık Vergisi ve 'Türklerdeki' Politikalar, Պետք Յայուսուն,
İstanbul 2000. Ցև նաև Մակուլյան Ռ., «Ռուսեցիանի հարկ» կամ տնտես-
ության «բարբական» բազարականությունը հոկտեմբերի Թուրքաբան-
Թագարացնեական և օսմանացնեական հնաւագուռաբաններ, հ. 5, Երևան,
2008, էջ 127-143.

հավատափոխները, այսինքն՝ խամացածերը՝ 25 տոկոս և օտարահապատակները՝ 12.5 տոկոս։ Թանի որ այլ ժամանակավա թուրքիայում ոչ մուսուլմանների ամենամեծ համայնքները հայերինը, հույներինը և հրեաներինն էին, բայց առաջանարար, հարկն առավելապես ուղղված էր նրանց դեմ։

Հարկացափը սահմանելու և հավաքելու նպատակով ստեղծվեցին հասուլ հանձնաժողովներ։ Համագույս մնե ուշադիրյուն էր դարձվում, որ բոլոր հանձնաժողովականները լինեն գտարյուն բռնքիք։ Ամենական երկրորդական չափոր է համարել, որ հանձնաժողովների կազմում կային զգալի թվով Խախիկին իր թիւարականները։ «Օրենքի» ամենամեծ հակահրաժարական դրույթներից էր այն, որ հանձնաժողովն ինքնական էր որոշում հարկի չափը, այսինքն՝ չկար հստակ որևէ չափակից։ Սակայն հոկափական կեները այսրանով չեն սահմանափակվում։ մարդու իրավունքները կոպտորեն ուժահարու հաջորդ նորմն այն էր, որ հարկատուն իրավունք չուներ որևէ տեղ բարորակել հարկացափը, այսինքն՝ հանձնաժողովի կամայականութեն սահմանած որոշումը թեկուննան ենթակա չեր և վերջեական էր։ Իսկ հանձնաժողովները հարկացափը որոշելիս հաշվի չեն առնում հարկատուի իրական եկամուտները և հնարավորությունները ու հարկում էին նրան մոտավորապես, բայց ցանկության և որա մայրության։

Հարկահավաքության գործընթացում կար մի շատ կարևոր մասնաւուն ես։ բուրքական իշխանությունները տարբերություն էին դնում նաև ոչ մուսուլմանների միջև, և հայերը, մյուս ոչ մուսուլմանների համեմատ, հարկվում էին ամենաարձր տոկոսներով և ամենաշատը։ Այսպիս, օրինակ՝ բուրք առնարական պենար է վճարեր իր տարիկան եկամուտի 4.7 տոկոսը, հույնը՝ 156 տոկոսը, հրեան՝ 179 տոկոսը, իսկ հայը՝ 232 տոկոսը, և փաստորեն հոյն առնարական բուրքի համեմատ վճարում էր 31 անգամ, հրեան՝ 36, իսկ հայը՝ 47 անգամ ավելի զումար։ Հարկերի վճարման համար սահմանած էր 15-օրյա ժամկետ, որը հետո երկարացնեց մինչև 30 օր։ Այդ ընթացքում հարկը վճարել շհասցնողի շարժական և անշարժ գույքը պետականացվում և աճուրդով վաճառվում էր։ մինչ այդ հետո իրենց՝ հարկատունների

Է էին փորձում եժան գներով վաճառչական իրենց ունեցվածքը: Նշեար ենան, որ գումարը չբավարարելու դեպքում բօնագուախնան և վաճառքի եր ենթակա ենան հարկասութի մերձավոր ազգակաների գույքը: Իսկ երե այդ ձևով ձեռք բերված գումարն է չեր քավարարում հարկի վճարմանը, ապա հարկասուները արտրվում էին տաժանակրության, որպեսզի աշխատելով վճարեին պեսության հանդեպ իրենց «պարտը»: Տաժանակրության հիմնական վայրը ցրտաշունչ կղիմայով հարոնի Երգուսի եահանգի Աշքաբէ գավառն էր, որն անվանում են եան «բուրբական Սիրի»¹⁵⁷:

Թուրքիայի կառավարության 1943թ. հունվարի 7-ի նիստում ընդունվել է թիվ 19288 աշխատաքի պարտավորության կանոնակարգը: Այն ընդունում էր հետևյալ հոդվածները: 1-ին հոդվածով դատակարգվում էին ատխառողական աշխատանքի դատապարտված հարկասուները: Աշխատանքային ճամբարներ առաջինք վեալու էին ընդհանրապես հարկ չվճարածները, այնուհետև՝ մասնակի վճարածները, և այսպես շարունակ: Նախատեսվում էր տաժանակակիրեներին վճարել որոշակի աշխատավարձ, որը կազմելու էր օրական 250 բուրուշ, որից 60-ը պահպելու էր սեղի, կացության և այլ ծախսերի համար, իսկ մասնածքը պետք է հասկացվեր «Ռևեցվածքի հարկ»-ի պարտը մարմանը: 15-րդ հոդվածի համաձայն՝ հարկասուները պետք է աշխատենին մինչև «Ռևեցվածքի հարկ»-ի լրիմ մարտումը: Սակայն այս կետը շատ հարկասուների դեպքում առաջացնում էր ոչ որպահպահական պատկեր, և կարևոր է ասել, որ դա եախատեսում էր ցման տաժանակրությունը: Այսպէս, օրինակ, այն հարկասուները, որոնց պարտը 400-500 հազար լիրա և ավելի էր, որպեսզի իրենց սուագած աշխատավարձից լրիմ մուծենին պարտը, պետք է աշխատենին մոտավորապես 1600 տարի: Ճամբարներում հավաքված հարկասուներից 1869-ը Ստամբուլից էին, 889-ը՝ Բզմիրից, 100-ը՝ Բուրսայից: Պաշտոնական տվյալ-

¹⁵⁷ Ը. Մերժումն, «Թուրքական «ոպպային ոյնուրքան» ևսխոհենքը» http://www.nosavank.am/arm/articles/2514.php?ELEMENT_ID=479&arhivne_id=52414

ների համաձայն՝ միայն Աշքալէ է ուղարկվել 1400 ոչ մուսուլման հարկատու, որոնցից 1229-ը՝ Ստամբուլից Աշքալում հարկաւուներից 21-ը (այլ տվյալներով ավելի շատերը) մահացել են¹²⁴:

Կարևոր հարց է նաև, թե փորրամասնություններից ինչպա՞ս պիտականացված և աճուրդով վաճառված գույքը ո՞ւ ո՞ւ ձեռքն էր անցեռում. ինչպիս ցոյց են տալիս փաստերը, այդ ամրող գույքը զեղ են բուրք գործարաբները. բուրքական կազմակերպությունները, բանկերը և այլ է՛ շատ եժան գերազ: «Ունեցվածքի հարկը» չգնարած հարկաւուների շարժական և անշարժ գույքի բուհագրավումից հետո եերը հասնում էր նաև երանց անձնական իրերին, մինչև անզամ հազուատներին: Այդ ժամանակ շատ հաճախ կազմակերպում էին աճուրդներ, որոնց ժամանակ վաճառվում էր փորրամասնություններից բուհագրավված գույքը: Այս ապրանքների հիմնական զերոբները Անատոլիայից եկած նոր հարուստներն էին, և այսքան մեծ էր զեկուած ապրանքների քանակը, որ խնդիր էր դառնում նաև դրանց փոխադրումը, զեացըները չեին կարողանում տեղափոխել և տեղափոխել այդ քանակի ապրանքը¹²⁵:

Այս տարիների պատճառավոր գրող Ֆայիր Ահմեդ Բարուքուի «Քաղաքական հուշեր. 1939-1954թ.» գրից տեսդեկանում ենք, որ վարչապետ Սարաջօղուն Ժողովրդականական պետական կուսակցության (CHP) գալուսի նիստի ժամանակ խոսել է «Ունեցվածքի հարկի» իրական եպատակի մասին և ասել, որ դա ուղղված է հիմնականում ազգային փորրամասնությունների դեմ և սեանկացնելով շուկայում գերակա դիրքեր ունեցող օտարերին, նպատակ ունի երանց այսունից հեռացնել և բուրքական շուկան տալ բուրքերի ձեռքը¹²⁶:

Կարելի է ասել, որ «Ունեցվածքի հարկ»-ը կատարեց իր «առաքելությունը», այս է՛ գրեթե լիովին բուրքացրեց տնտեսությունը: Ստամբուլի հեղինակ Նրբան Օգուստոսի «Ակութերի 1998թ. նոյեմբերի 13-ի համարում «Ունեցվածքի հարկ»-

¹²⁴ Խոսք տեղայի:

¹²⁵ Միքոնա Ռ., «Ունեցվածքի հարկ»... էջ 139:

¹²⁶ Նշ. աշխ. էջ 134:

մասին գրած հոդվածում տեղ է գտել նաև այս միտքը, որ «Շնչեցվածքի հարկի» հետևանքները բազմաշերտ են և չեն ասհմանափակվել միայն տնտեսության թուրքացմամբ. այլև դրա պատճառով փասողըն վերացել են թուրքահայ բորժուազիան և այդ բորժուազիայի մաս կազմող մտավորական դասը: Կարդացած, գրագետ, տարրեր լեզուների տիրապեսող դասակարգը վերացավ՝ տեղը զիջելով իրենց ունեցվածքին եւան զնիւով տիրացած անատոլիական նոր հարուստներին, որոնց վերակշխտ մասը անզրացեն, անշակույց մարդիկ են:» կարծում է Օգուզունը և շարունակում, «Շնչեցվածքի հարկը» հայերի համար փասողնեն նաև մշակութային կրտսերած էր¹⁶¹: Իսկ թուրք հեղինակ Ռոբին Սֆարը ավելի կոշտ է արտահայտվում՝ նշելով: «Շնչեցվածքի հարկը» փորքամասնությունների համար «անսեսական ցեղասպանություն էր»¹⁶²:

Ազգային փորքամասնություններին կութառեն, բարոյապես, հոգեպես և ֆիզիկապես կուրքելոց հետո միայն թուրքական իշխանությունները, տեղի տալով նաև արտաքին գործոնների ազդեցությանը, որպես «քարի կամքի» դրսորում, վերացրին «Շնչեցվածքի հարկ»-ի կիրառումը: Արսակիսով, «Շնչեցվածքի հարկը» համբապետական թուրքիայի պատմության ընթացքում տևական ողբառում կրօնական փորքամասնությունների դեմ գործադրված ամենախոշոր և ծանր հետևանքներ առաջացրած մի բարձ էր:

1955թ. սեպտեմբերի 6-7-ը Ստամբուլի, Թուրիքի հույն, հայ բնակչությունը ենթարկվել է պետության կողմից նախօքոր պատրաստված խուժանի հարձակմանը: Մրա համար պատրիարք է հանդիսացել իշխանությունների կազմակերպմամբ հրապարակ ենուված այն լուրը, որ ուրբակոծվել է Սալօսիկում գումարող Արարյուրի տունը: Երանից հետո զագագած ամբոխը հարձակվել է հունական և հայեական բաղամասների վրա, քայլանել, այրել տեսեր, խանութեր, եկեղեցիներ, խոշտանգել, բռնաբարել և սպանել մարդկանց: Այս ամենին թուրքական իշխանություններն

¹⁶¹ Örenzin E., "Aci bir kilometre taşı ve kültür katımı", Agos, 13.11.1998.

¹⁶² Akar R., *Aşkale yolucları /seçlik vergisi ve çalımları kampanyası*, İstanbul, 2006, s.15.

արձագանքի եւ միայն մեկ օր հետո, երբ ամեն ինչ արդեն ավարտված էր: Հետազոյում ընթացող դատական ընույթան ժամանակ ի հայտ եկած փաստերի ապացուցեցին, որ այդ ամենը կազմակերպված էր իշխանությունների կողմից՝ պետական ամենաքարոզը պաշտոնյաների անմիջական մասնակցությամբ: Հունաստանի իրավապահ մարմինները դեպքի առնցությամբ ձերբակալել են Թուրքիայի հյուպատոսարանի պահակին և Սալոնիկի համապատասխան իրավաբանական ֆակուլտետի ուսանող Օքայ Էնգինիեր, որը, ինչպես պարզվեց, Թուրքիայի ազգային անվտանգության գործակալ է եղել: Էնգինիեր հետազոյում Ստամբուլի նահանգապետի միջնորդությամբ աշխատանքի է անցել քաղաքապետարանում, այսուհետև դարձել է Թուրքիայի կարևորագույն շրջաններից մեջի՝ Զակարյայի գալաքտոսաբետ, այնուհետև՝ ոստիկանության զիյավոր վարչության քաղաքական գործերով քամելի պետ: 1971թ. Օքայը դատելու է Անվտանգության վարչության պետ և 7 տարի պաշտոնավարում, ինչ 1991թ. եշանակվում է Նեշենիիրի նահանգապետ: Այսիւրեն թշմալ Արարյուրքի ծնևած տան այգում կատարված պայքունը Սալոնիկում պետականութեն ծրագրիած տայրունք էր, որպեսզի աօիք տա Թուրքիայում հույնների, հայ և հրեա ազգային փոքրամասնությունների դիմ կոտորածի կազմակերպման: Ըստհանուր տումաք քայանի է ենթարկվել 4214 տուն, 1004 գրատենյակ, 73 եկեղեցի, 26 դպրոց և հաստատություններ:⁷⁶

1964թ. մարտին Թուրքիայի կառավարությունը սկսեց Ստամբուլի հույնների զանգվածային արտաքոռման ամենակույին ձևով խախտելով Լոզանի պայմանագիրը, ըստ որի՝ 1918-ից առաջ Ստամբուլում թափակություն հաստատած հովհերը ենթակա չեն փոխանակման: Զանգվածային արտաքոռմանը տևակի էին ուսենում Կիուպրոսի պատճառով Հունաստանի և Թուրքիայի միջև ծագած լարվածության պայմաններում: Տևականությունը

⁷⁶ Ayhan Aktar, "6 - 7 Eylül 1955 Cumhuriyet tarihinin en karanlık gececi ...".

Razgaresi, 5 Eylül 2005, Sabah gazetesi yazar dizisi

https://www.academia.edu/20103181/6_7_Eyl%C3%BC_1955_Cumhuriyet_Tarihinin_En_Karan%C4%91k_Gecesi_6_-7_September_1955_Darkest_Night_of_Republican_History

համելարձակի հայուսարարվեց մամուլում, որը միաժամանակ ուղեկցվեց հույսերին պատրիարք անշարժ և շարժական գույքի բռնագրավիմամբ¹⁶⁴. Ավելի քան 1000 հույսեր անհապաղ արտաքսվեցին: Նրանց իրավունք էր տրված վերցնել միայն 22 դոլլար և մեկ ճամփարուկ հազոււա: Դրանից բիշ ժամանակ անց ևս 5000 հոգի արտաքսվեցին Երկրից: Մւացած 11,000-ր արտաքսվեցին 1964թ. սեպտեմբերից եետո, եթիւ Թուրքիայի կառավարությունը հրաժարվեց նորացնել հույս բաղարացիների թեսկուրյան իրավունքի ժամկետը: Իրականում մի քանի ամսվա ընթացքում Հունաստան է արտաքսվում մոտ 45 հազար մարդ, քանի որ բազական տարածված հույս-թուրքական խառնամուսնուրյանների պատճառով արտաքսվում էին ամբողջական թշնամիներ: 1980-ականների կեսերին եսխազանի Թուրքուր Օզալը Դալյուի տնտեսական զարգարածողությունը հայուսարեց, թէ 1964-ին արտաքսված հույսերը իր կարող են ենու սուանա իրենց ունեցվածքը: Արտաքսյալներից մի քանից վորձեցին դա անել, երանցից հազին 2-3 հոգի զատական հաց ներկայացրին: Դատավարություններից մեկը տեղ 15 տարի և ի վերջ հույներից մեջին հասրավորություն տրվեց ենու սուանալու Բյույուրադայում գուևող հայրական տունը: Սակայն դա առաջին հայունի միան դեպքն է¹⁶⁵:

Այսպիսով, ազգային փոքրամասնություններին արտաքսելը, իրենց ունեցվածքից և զործից զրկելը դարձավ հանրապետական Թուրքիայի պետական տնտեսական բաղարականության անկյուննարարը, և ինչպես երիտրուրքական շրջանում, պետականորեն ու «օրենքներու» ամրագրված՝ շարունակվեց տնտեսական տեղորդ կամ ուրրակի պետական մասշտարի բարակը. որին զոհ դարձան Թուրքիայում ապրող ոչ մուսուլմանները:

Թուրքայի Հայրապետությունում ոչ մուսուլմանների համայնքային կալվածքների խնդիրը ունեցրիման բաղարական-

¹⁶⁴ 16 March 1964 - The Banishment of the Greek Community of Istanbul through Deportations and Expatriation <http://www.compolis.eu/uploads/news/169%20March%201964-Eng.pdf>

¹⁶⁵ Գ. Թիգչյան. «Հույսերի վեցին տեղահանուրցն 50 տարին» <http://www.yeg.am/AM/2014032812>

թյան առանձին թիրախս էր հաւոշաւում: 1924 թ. մարտի 3-ին Խալիֆայության վերացումից հետո վերաձևադրությունը կրոնի և վարքիների հախարարությունը (Diyanet), վարքիների նրան-մամբ է սահմանվեց պետական վերահսկողություն¹⁶⁶: Իսկ 1926 թ. ընդունված Թաղարացիական օրենսգրքի 74-րդ հոդվածով ոչ մուսուլմաններին արգելվեց նոր վարքիներ հիմնել¹⁶⁷: 1930 թ. ոչ մուսուլմանների գերեզմանատեսքը պաշտոնական փոխանց-վեցին բաղարային իշխանությունների գերակայության տակ՝ գրկվելով պետական մարմիններից անկախ գործելու հնարավո-րությունից¹⁶⁸: 1935 թ.-ին «Կալվածքների մասին 2762 օրենքով ոչ մուսուլմանների համայնքային վարքիները անցան Կարիածքնե-րի տնօրինության (Vakıflar Genel Müdürlüğü) վերահսկողության տակ»:

Սակայն փորրամասնությունների գույքի հետագա բնա-զահամանն ուղղված օրենքների այդ շարրում առավել մտահոգիչ այն էր, որը հայունի է «1936 Եվանգամես» անունով:

1935 թ. հունիսի 13-ին ընդունված վարքիների մասին թիվ 2762 օրենքի հիման վրա 1936 թ. ընդունվեց պետական կարգա-դրություն («1936 Եվանգամես»), որի համաձայն՝ Թուրքիայի բոլոր վարքիներից պահանջվում էր գույքի մասին ծանոցում: Սահմելական և ոչ մահմելական բոլոր վարքիները, այդ պա-հանջին ենթարկվելով, իրենց պատկանող գույքերի ցուցակը հանձնում էին «Վարքիների զիյավոր տնօրինությանը: 1936թ. հայտարարագիրը բաղկացած էր մի ցուցակից, որը ցուց էր տալիս այն ուղեցվածքը, որը պատկանել է ոչ մուսուլման փոր-րամասնությունների համայնքային վարքիներին»:

Պոլսահայ փաստարան Մեսրոպ Ասլանեփիլը, ով գրադիմ է եկեղեցապատկան գույքի հետվերադաման հարցելով նշում է. «Հիմանալով և տեղյակ շլիկելով, թէ ինչ նպատակ է հետա-

¹⁶⁶ «3 Mart devrim yasaları» <http://www.ataan.gov.tr/dergi/sayi/35/3-mart-1924-devrim-yasaları>

¹⁶⁷ Aktaş A., *Vatik Vergisi ve "Türk İmparatorluğu" rodičlikleri*, İstanbul, 2000, s. 109.

¹⁶⁸ Alptekin K., «Vakıflar Yasaası kabul edildi: Sirke Lütçan'a mi geldi?» <http://www.turksolu.com.tr/175alptekin175.htm>

պետքան այս հայտարարագիրը՝ մեր բոլոր հիմնարկները ճշտուին չեն ենթակայացրել իրենց ունեցվածքի ցանկը՝ մտածելով, որ այդ ցանկներն ուզում են տուրքեր զանձելու համար, հետևաբար բոլորը ներկայացրել են փոքր բանակությունը կալվածքների ցանկ։¹²⁹

Այդ ընթացքում հայ համայնքը Թուրքիայում ներկայացված էր աշխարհիկ և կրոնական խորհրդարաններով, որից աշխարհիկը 1960թ. ռազմական հեղաշրջման արդյունքում արգելվեց և այժմ գործում է միայն կրոնականը։ Այդ խորհրդարանները, սակայն, ունենին ենթահանձնախմբեր, օրինակ կալվածքների հանձնուումը, կրթական հանձնախուումը և այլն։ Համայնքապատկան կալվածքների հսկողությունը հանձնված էր կալվածքների հանձնախմբին։ Սահմեղականների հիմնադրամներին վերաբերող 1935թ. ընդունված 2762 օրենքով ձևավորված վարչությունները կային, սակայն բանի որ դա ոչ մուսուլմաններին չէր վերաբերում, հետևաբար մինչև 1949թ. ամեն եկեղեցի ներկայացուցիչները ուներ կալվածքների հանձնախմբի մեջ, որոնք կոչվում էին խետականներ։ «Սարսայն դա ել հաերապետության սկզբունքներին հարմար չեղավ և 1951թ. որոշվեց բարդային խորհուրդներ կազմավորել»,- ասում է Ասլանզիլը¹³⁰։

Հենց այս բարդային խորհուրդներն են, որոնք այսօր տեօրիւում և կառավարում են եկեղեցուն, հաստառությանը պատկանող ունեցվածքը։ Հայկական հիմնադրամների մեծ մասը գոլուխում են Ստամբուլում, սակայն Անատոլիայում կան 5 հիմնադրամներ։ Կեսարիա -1, Հարբայի շրջանի՝ Վարժովիլ, Խորհներուն և Թրքըքան գոլուխում՝ մնկական, Դիարբեկիր -1։ Թուրքիայում կան նաև հայ բողոքական եկեղեցու երկու և կաթողիկ եկեղեցու ինը հիմնադրամներ։ Ասլանզիլը ընդունում է, որ այս ընթացքում բազմաթիվ հիմնադրամներ պարզապես համայնք չլինելու պատճառով, բանի որ այդունու հայություն չէր մնացել,

¹²⁹ Տայ ունիթիսի Համբաւագիրը Օսմանին կարգադրությունը տարածության վերաբերությամբ <http://www.osmaniturkey.com/2013/12/21/osmanian-property-since-ottoman-empires-by-now/>

¹³⁰ Կովկասիուն:

գործինակ Սեբաստիայում, անտերության մատևվեցին և որունք ունեցվածքը ու հիմնադրամները փոխանցվեցին պետությանը:

1936-1974թթ. ընթացքում իրավական դաշտի այս կարգավորումների համաձայն հայկական հիմնադրամները այլ հիմնադրամների պես առանց որեւէ խնդրի գործունեություն ծավալեցին՝ ըստ իրենց առաջնահերթությունների, ձեռք բերելով նոր գույք կամ վաճառելով այն. եթե դրա կարիքը կար¹⁷¹:

Մինչ 1974 թ. իրավական առումով այս հարցում որևէ զարգացում չարձանագրվեց: Կիպրոսյան ճգնաժամի սրացման ժամանակ բուրգական իշխանությունները, ցանկանալով Սուստուի հունական համայնքի վրա ճնշում գործադրելու միջոցով զիջումներ ստանալ Հունաստանից, համայնքային կառույցներից պահանջեցին Ներկայացնել իրենց պատկանող ունեցվածքի սեփականության վկայագրերը: Գործեականում այս պահանջի իրացործումն անհենար էր, քանի որ վարդիները հիմնադրվել էին Օսմանյան ժամանակներում, եթե նաև վաստարդության տրվում, ուստի Վարդիների զիյավոր տեսքինուրբանը հայտարարեց. որ դրանց կարող են փոխարինել 1936 թ.-ի հայտարարագրերը: Ըստ որում, քանի որ դրանցում վարդիներին վերապահիված չեն նոր անշարժ գույք ձեռք բերելու իրավունք (այդպիսի իրավունքները հայտարարագրերում առնասարակ չեն ամրագրվում), որոշվեց 1936 թ.-ից հետո ոչ մուտքմանների համայնքային կալվածքներին փոխանցված անշարժ գույքն անհատաց բռնագրավել և վերադարձնել օրինական տերերին, իսկ վերջիններիս մասի կամ ժառանգներ չունենալու պարագայում՝ պետականացնել այն: Հաշվի առնելով, որ կալվածքների ձեռք բերած ունեցվածքի մեծ մասը կտակիված կամ նվիրարերված էր միայնակ ծերերի կողմից՝ պարզ է դատում. որ առցրախիսած գույքը հիմնականում պետականացվեց:

Այս անօրինությանը վերց դեմքու համար ոչ մուտքմանները սկսեցին պետության դեմ դատական հայցեր ներկայացնել սակայն հարուցված դատական գործերը միշտ ել հօգուտ պետության էին ավշարժվում:

¹⁷¹ Նույն տեղում:

Համայնքային սեփականության խնդրի շուրջ նոր զարգացումներ ծավալվեցին 1999 թ.-ից, երբ Թուրքիան պաշտոնապես ճախաչվեց ԵՄ անդամակցելու թեկնածու և սկսվեց Եվրոպական պետությունների հետ «եւրոպաշնակեցման» գործընթացը, որի շրջանակներում ի թիվս այլ խնդիրների Եվրոպականացումը բարձրաձայնեց ոչ մուսուլմանների վարդիների տևորինման խնդրի շուրապետությունը լուծման կարևորությունը։ Զուգահեռաբար ոչ մուսուլմանները սկսեցին Թուրքիայի դեմ դատական հայցերով դիմել Սարգս իրավունքների Եվրոպական դատարան և դատերը շահել։ Առողջության տուժաված էր օրոշակի բարեփոխումներ իրականացնել։ 2002թ. Թուրքիայի ընդունած թիվ 4771 օրենքով որոշակի հարավորություն ստեղծվեց հիմնադրամներին պատկանող ունեցվածքը հետ վերադարձնելու համար։ 2002-2003 թթ.-ին ոչ մուսուլմաններին բոլոր տրվեց նախարարելու խորհրդի կամ Կարիքների գլխավոր տօնքինուրբան համաձայնությամբ կրուելական բարեգործական կրթական առողջապահական, մշակութային նպատակներով գույք ձեռք բերել և գրանցել։ Զնականորեն խնդրին լուծում տրվեց։ Սակայն նման համաձայնությունն ձեռք բերելու գործընթացի բարդության պատճառով՝ 2003-2008 թթ.-ին եւրկայացված 1262 հայցադիմումից միայն 366-ը դրական լուծում ստացվավ։ Այս փուլում սակայն 1974 թ.-ից հետո պիտականացված գույքի վերադարձի կամ դրա դիմաց փոխաւուցում վճարելու կարենորագույն խեղինի որևէ անդրադարձ չարվեց։ Խնդրին լուծում տալու փորձ էր 2005 թ-ին ընդունված թիվ 5555 օրենքը, որը սահմանափակ շրջանակներում վերականգնում էր ոչ մուսուլմանների լուզանի պարմանագրով։ Թուրքիայի Սահմանադրությամբ և մարդու իրավունքների միջազգային կունիցիաներով ամրագրված իրավունքները։ Օրենքը սակայն լցուերի չկոչվեց, քանի որ երկրի նախագահ Ա. Սեղմբը, պատճառաբանելով, որ դրա հոդվածներից ինը հակասում էն ազգային շահերին ու հաւերային բարօրությանը, վեսոյի իրավունք կիրառեց Երկրի եախազակի կողմից հեշեցված այս ձևակերպումը մեկ անգամ ևս ապացուցեց, որ ոչ մուսուլմանները Թուրքիայում համարվում են օտար, թշնամի տարրեր, ում իրավունքները շնորհելու հարցը դիտարկվում է ոչ թե ներքին իրավա-

կան խնդրի, այլ ազգային անվտանգության տեսանկյունից: 2007 թ.-ի խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ հաղթանակից հետո բուրքական մեջիսը կրկին անդրադարձավ 5555 օրենքի ընկարկմանն ու 2008 թ.-ի փևորվարին առանց փոփոխությունների ընդունեց այն 5737 համարի տակ¹⁷².

Նոր օրենքով համայնքային կառույցները ստացան անշարժ գույք ձեռք բերելու իրավունք: Վարքիներին թույլ տրվեց Կարքերի գլխավոր տնօրինության գիտությամբ օգնություն ստանալ արտօնվելիքից: Ինչդ ենթադրաբար ապագայում հնարավորություն կտար ՀՀ-ից կամ ափյունություն օրինականորեն աջակցել Ստամբուլի հայ համայնքին: Օրենքի մի շարք կետեր սակայն կրկին ուժահարում էին ոչ մուսուլմանների շահերը: Նախ օրենքով համայնքային վարքիները մնացին Վարքիների գլխավոր տնօրինության վերահսկողության տակ, որին իրավունք վերապահվեց միահանդիս որոշել, արդյոց կազմակերպություն կիրառվում են բարեգործական նպատակներով թե ոչ և բացառական պատուախանի դեպքում՝ պետականացնել դրանք: Երկրորդ, օրենքը ամրագրեց միջազգային իրավունքի փոխադարձության սկզբունքի կիրառումը: Մեկ այլ պատության բաղադրացիների նկատմամբ ընդունելի այս սկզբունքի կիրառումը սեփական բաղադրացների կրոնական շափանիշով անցատված մի մասի նկատմամբ միջազգային նորմերի կուպիտ խախտում է և կյունական խորականության բացահայտ դրսերում: Երրորդ, 5737 օրենքով նոր վարքիները ստեղծվելու են գործող բաղադրացիների հիման վրա, որն իր հերթին արգելում է ոչ մուսուլմաններին նման կառույցներ ստեղծել: Նորից ակնհայտ է կյունական խորականությունը: Չորրորդ, այս օրենքով այն համայնքային հաստատություններին, որոնց հիմնադրման փաստաթղթում նախատեսված է միջազգային շփոսմերի գարզացում, որին է միջազգային ասպարեզում ազատ գործելու, նոր մասնաճյուղեր հիմնելու հետափորություն: Փատորեն, ոչ մուսուլմանների օսման-

¹⁷² 1999-2008 թթ. խնդրի շուրջ պարզացումների մասին ստովել մակրամասն անև Kurhan D., Hatemi E., *The story of an alienation: Real estate ownership problems of non-Muslim foundations and communities in Turkey*, Istanbul, 2010.

յան շրջանում հիմնադրված վարդիերը, որոնց փաստաթղթերում ևսակ կետ լինել չեր կարող. Նորից անմասն մնացին: Օրենքի վերջին և ամենակարևոր կետը, որ վերաբերում էր բռնագրավկած անշարժ գույքի վերադարձին. ևս չի դիմանում ոչ մի ընթարատության: Նախ պետականացումից հետո երրորդ կողմերին փոխանցված գույքի համար փոխահասուցում վճարելու որևէ մեխանիզմ սահմանված չէր. իսկ պետության գերակայության տակ գտնվող գույքի վերադարձի համար եախառենաված պարմանենք ու Վարդիների տնօրինությանը ներկայացմելիք փաստաթղթերի ցուցակը այսքան մեծ ու բարդ էր, որ անգամ բուրք իրավաբանների կարծիքով օրենքի նշանակությունը գրույնում էր:

Ավելին, Վարդիների տնօրինության արգելքը հաղթահարելուց հետո էլ հայցողները հաևդիպում էին պետությանը և փարչարարական այլ մարմինների համար դիմադրությանը: Արդյունքում 2008-2010 թթ. ներկայացված 1410 դիմումներից 181 ստացած դրական, 347-ը բացասական պատասխան, իսկ 893-ը չընթարկվեցին փաստաթղթերի անբավարության պատճառաբանությամբ¹²⁵:

Վարդիների խնդրում իրավական առումով նոր առաջընթաց էր 2011 թ. օգոստոսի 27-ին թիվ 651 որոշումով Վարդիների մասին օրենքին կցված 11 հոդվածը, որով պետությունը երաշխավորեց բռնագրավկած համայնքային սեփականության վերադարձը օրինական տերերին¹²⁶. 2011թ. Թուրքիայի Հանրապետության պաշտոնայինը՝ «Ռեսմի զագլիք»-ի թիվ 28071 համարում լույս տեսած թիվ 5737 օրենքի՝ ուժ ունեցող որոշման 11-րդ ժամանակավոր հոդվածի համաձայն՝ «1936 թ. Կանոնագույն գրանցված անշարժ գույքերի, որոնց կալվածքները բաց են. 1936 թ. կանոնագույն գրանցված պետականացումից, վաճառից և փոխանակումից բացի այլ պատճառներով զանձարանի, Վա-

¹²⁵ Խ. Պալազին, «Թուրքական ու մուսուլմանների համայնքային կարգադրերի խմբիրը (1923-2011 թթ.) համարում ալխարի», Մերձական Արևելք (Հայցանձնելիք ժամանակա), հ. VIII, Երևան 2012, էջ 309.

¹²⁶ 11-րդ հոդվածը ամբողջությամբ սեն: www.mfa.gov.tr/mfa_en.mfa?690ae1f-2099-44cc-a4f8-925c62e1425a

թթվիների գլխավոր տնօրինության, քաղաքապետարանի և Խահանգային հատուկ վարչության անունով զրանցված անշարժ գույքերի, 1936 թ. կանոնագրում զրանցված հասարակական միությունների անունով զրանցված գերեզմանոցների ու աղբյուրների, գեման կայքագրի (բափու) զրանցման իրավունքի և պարտականության հետ մեկտեղ այս հոդվածը ուժի մեջ մտնելու պահից սկսած 12 տասնա ընթացքում դիմումի դեպքում, խորհրդարանի դրական որոշումը ստուգուուր հետո, կադաստրի տեօրինությունը շահագրգիտ գնման կայքագիրը զրանցելու էր համայնքային վարչքի անունով:

Համայնքային վարչքների կողմից գնված, համայնքային վարչքներին կտակված կամ էլ նվիրատվության դեպքում սեփականություն ձեռք բերել շկարողաւալու հիմնավորմանը Գանձարանի կամ էլ Վարչքների գլխավոր տնօրինության անունով գնման կայքագրի մեջ երրորդ անձանց անունով զրանցված անշարժ գույքերի՝ Ֆինանսների նախարարության կողմից հաստատված շուկայական գիեր վճարելու էր գանձարանը կամ էլ Գլխավոր տնօրինությունը¹⁷⁵.

Վարչապետ երրորդանը հայտարարեց, որ իրենց երկրում ցանկացած տիպի խորականության ժամանակներեւ անցել էն¹⁷⁶. Սեպտեմբերի 7-ին եկրոպական և ամերիկան դիվանագետների հետ հանդիպման ընթացքում Վարչքների տնօրինության գլխավոր տնօրեն Ա. Էրքենի հայտարարեց, որ այս օրեւնում հաշվի են առնված նախորդ օրենքներում տեղ գտած անձնությունները և արված է ամեն ինչ՝ առավելագույն արդյունք ապահովելու համար¹⁷⁷.

Անշուշտ օրենքի ընդունման հիմքում ընկած էր ոչ թե ազգային-կրոնական փորբանականությունների նկատմամբ հանկար-

¹⁷⁵ Ա. Քաջուաշչյան, «Փոքրամասնությունների՝ բժնագրաված անշարժ գույքը հետ վերադարձելու վերաբերյալ՝ «պատմական որոշումնը» նախատիսական ժամանակաշատվածը լրացնված՝ <http://akunq.net/az/?p=24548>

¹⁷⁶ Sebnem Asci, "Turkish Government to Return Seized Property to Religious Minorities" http://www.nytimes.com/2011/08/29/world/europe/29turkey.html?_r=0

¹⁷⁷ Return of properties belonging to community foundations <http://www.vgm.gov.tr/duygunluksay.aspx?Id=40>

ծակի ծագած հոգածությունը, այլ շատ ավելի պրակտիկ և կատառում էներգիա: Մի կողմից այն ուղղված էր թուրքական կառավարությանը և բարեկան վեաս պատճառած Սարդու իրավունքների և վրապական դատարան ներկայացվող հայցների բանակի կրծատմանն ու դրանց պատճառով խարիսկած միջազգային հեղինակության վերականգնմանը և նույնիսկ բարեկամանը: Մյուս կողմից օրենքը պատռասխան էր 2011 թ. հունիսի 15-ին ԱՄՆ. Կողմանը արտաքին հարաբերությունների հանձնաժողովում ընդունված թիվ 306 բանաձին, որում Թուրքիային կոչ էր արգում վերադարձել եկեղեցիները, դպրոցները, հիմքանականությունները, հուշարձանները, սրբավայրերը՝ օրինական տերերին¹⁷⁸: Նշված օրենսդրական ակտի հրապարակումը դրական արձագանք ստուգավ միջազգային հանրության կողմից: Թուրք իրավաբան Օրիենտ Քեմալ Զենքիզը այս որոշումը նույնիսկ հեղափոխություն անվանեց¹⁷⁹:

Թուրքաբեակ ոչ մուսուլմանները սակայն թերահավատություն էին մոտենում հարցին՝ ակնկալելով, որ թուրքական դասական տարրերակով կառավարության ընդունած թվացրալ ժողովրդավարական օրենքում տեղ գտած առաջին հայացքից անտեսանելի խութեցը, դուրս մնալով հանրության լախ շրջանակների ուշադրությունից, կիսափանեն դրանց լիարժեք կիրառություն: Օրիենտ, արդին հայունի է, որ պետությունը վերադարձնելու կամ փոխհատուցում է որամադրելու միայն այն գույքի դիմաց, որ բռնագրավվել է 1936 թ.-ից հետո¹⁸⁰ և մինչ այժմ պետական հովանու տակ է կամ որոշակի գումարով վերավաճառվել է երրորդ անձանց, ինչ Առաջին համաշխարհային պատերազմի և դրան հաջորդած տարիներին խթան: Ինչպես նաև բռնագրավումից հետո նախկին տերերին անհատույց վերադարձված գույքը որևէ կերպ չի փոխհատուցվելու: Բացի այդ անշարժ գույքը եւ վերցնելու կամ փոխհատուցում առանցու համար անհրաժեշտ է:

¹⁷⁸ Լոյն տեղում:

¹⁷⁹ Their properties have been given back, what about seized foundations? <https://www.cihan.com.tr/en/cms-copied-news-on-26-10-519937.htm>

¹⁸⁰ Raffi Bedrosyan, "Special Report: What is Turkey Returning to Armenians?" <http://armenianweekly.com/2011/08/31/property-return/>

մեջլիսի դրական որոշումը, սակայն դրա համար անհրաժեշտ չափանիշները սահմանված չեն: Թուրք պատմաբան Սահիթ Շերիֆողլուի վկայությամբ պետությունը իր համար խուսանավելու հնարաւորություններ է բողել¹⁶¹:

Վարքային գույքը մեկն էր այն թեմաներից, որին ամենաշատը էր անդրադառնում Հրանտ Դիերը: Նրա սպանությունից հետո հիմնված «Հրանտ Դիեր հիմնադրամը» 2012թ. մի գիր հրատարակեց, որը վերևազրված է «2012 թ. հայուարարազիմք»¹⁶². Աշխատությունը պարունակում է միևն այժմ Ստամբուլում գունդող հայ վարքային ունեցվածքի վերաբերյալ ամենամասն ցուցակը: Մոյս զիրքը, որի առաջարանի հեղինակն է դոկտոր, պրոֆ. Հյուսին Հարթմյան, կազմվել է Մեհմեր Փոլարելի, Նորա Միլդանօղլուի, Օգգուր Լեման Էրենի և Մեհմեր Արքայանի կողմից: Այս թիմը, 2 տարի շարտունակ արխիվներ, հին քարտեզներ, պետական ցուցակներ են ուսումնասիրել և ափարախի հասցրել առյն զիրքը: Աղբյուրերից մեկն է, որից օգտվել են հեղինակները, Հրանտ Դիերի արխիվն է եղել: Մեկ այլ աղբյուր ներայի հանգույցալ փաստաբան Տիրան Բարարի թղթապահելիները... Հետո այս թղթապահելիների միջոցով են ձեռք բերվել բազմաթիվ զաղոտելի փաստաթղթեր: Բնագետ Եշում են ուսումնասիրության մասնակիցները, որոշ տեղեկությունների համու լինելու բարորոշին է դյուրիին չի եղել: Արդյունքում ունենք հետևյալ պատճերը. հաստատված է, թե Ստամբուլում ներկա դրույթամբ որ հայկական վարչի ունեցվածքը որուել է և ինչ վիճակում է գտնվում. www.istanbulmeniyakiflari.org կայքում ներբեռնված են դրա մասին բոլոր տեղեկությունները, բարտեզերը, ինչպես նաև՝ 200-ից ավել լուսաեկարերը: Առևտ վիճակն ամփոփվում է գրքի և այսպիսի հետևյալ պարբերությունում. «Մոյս զրում պատմվում է ոչ թե քարից բետոնից շինուած կառուցների.

¹⁶¹ Sait Çetinoglu, "Foundations of Non-Muslim communities: The last object of confiscation" <https://neweasternpolitics.wordpress.com/2012/02/28-foundations-of-non-muslim-communities-the-last-object-of-confiscation-by-sait-cetinoglu/>

¹⁶² 2012 Beyannamesi - Առաջնա Էրմեն վակիլություն և կոն միլքեր <http://www.istanbulmeniyakiflari.org/>

բռնազրավիած շենքերի մասին, այլ՝ միևնույն ուղղությաց հունգար մարդկանց պատմության: Այսուեղ հիշատակված շինություններն այն արժեքներն են, որ համատեղ տունները են այս հողերում ապրած մարդիկ՝ տարեց թե երիտասարդ, կին թե տղամարդ հարուստ թե աղքատ: Անարդարության ենթարկված այս ունեցվածքը այն կոտրական աղբյուրն էր, որը կանք էր տային պաշտամունքի վայրերին, դպրոցներին, որբանուներին, ծերանոցներին, մի ողջ հանրության: Թուրքիայի հայերի հասարակական կյանքը և մշակումը հիմնված էր այս տնտեսական հենքի վրա: Ոչ յացգիտ այդ կյանքի և մշակումի հետքերը գրանցված են այս զրոյում՝ «ինչու» և «ինչպես»-ի հետ մեկտեղ, որպեսզի անարդարությունները վայր շկրվածնեն...»¹⁰²:

Գրքում պատմություններ են երկայացված՝ 5 վարքների գույքի բռնազրավիան մասին: Արժի մեջքերել այդ պատմություններից մի քանիսը:

Խոլերայի համաճարակի պատճառով որբացածների դպրոցը «ճանապարհ դարձեցին»:

«1865 թ. խոլերայի մեջ համաճարակի ժամանակ բազմաթիվ երեխաններ են որը ու անտեր մնում: Սայրապես Սրբունի Նշան Գովիտայան ստանձնում է: 2-10 տարեկան 17 որբացած աղջիկների խնամքը: Հասրյուսմ (Խոսպայուց՝ թաղամաս Ստամբուլում-Ա. Հ.) զտվող իր տանը երեխաններին թէ զբաղեցնելու և թէ պահել կարողանայու համար սկսում է ձեռագործ ուսուցանել: Այդ անձնական նախաձեռնությունից հետագայում ծնվելու է Գավիտան որբատունը, որը դառնալու է Ստամբուլի և այստեղի հայկական հոգմայերի ամենակարևոր կրթական հաստատությունը: Իսկ ի՞նչ եղավ նաև մարդկային նպատակով հիմնված այս որբատան վերը: Երկար ժամանակ աղջիկ երեխանների համար բոյն ծառայած Հալլուցողուում գտնվող որբատան՝ փայտից կառուցված շենքը 1960-ականների վերջերին ազգայնացվեց՝ դեպի Բուժող մուտքի և իրար կապող ճանապարհների համար: Առարկությունների ապարդյուն մնացին: Թանի որ հայկական գույքը բռնազրավիավել էր, բոյլ չորվեց, որ նրանք այլ շենք

¹⁰² Աշք. աշխ.:

տէղափոխվեն: Գալֆայան դպրոցը մոտ 30 տարի գործեց Անդիկ, փայտէ տներում: Հետազայում Ռևոլուշարում՝ թաղամաս Ստամբուլում-Ա.Հ.Հ գունվող հայակարքարանի դպրոցի հետ համատեղ օգտագործեց այս դպրոցի շնչը:

Եր իսկ կառույցի հանար տարիներ շարունակ վարձ մուծած դպրոցը

Սուրբ Ղազար կղզու հայ կաթոլիկ Միսիոնարյան միարաևության կողմից 18-րդ դարում հիմնված դպրոցերից մեկը 1958 թ. Վիխանյարվեց Էմինե Թիֆիքա Արաշըրից 710 հազար լիրայով գնված շնչը և անվանվեց Բունենքի հայ կաթոլիկ մասնավոր նախակրթարան: Սակայն Վարքիների ընդհանուր տօնօրինությունը, այն հիմնավորումը բերելով, թե շնչը չի հիշատակվել «1936 թ. հայուարարազդի» մեջ, դատական գործ հարուցեց՝ կառույցը «նակախին տիրոջը վերադարձելու» պահանջով: 1984 թ. դատարանը դրաստավիճո կայացրեց, և շինությունը, որպէս Էմինե Այաշի ժառանգություն, փոխանցվեց Անկարայի Աշայի քաղաքապետարանին և Այաշը եղայրներին: «Երջիներս իրենց արժեքացերը վաճառել էին Միլիաշ անվամբ ընկերությանը: 1998 թ. վազքիք վարձատու դարձավ, որը վաճառում էր այն կառույցի ղիմաց, որը 30 տարի առաջ գնել էր: «Անցանում չտրված վարձի պարտքը» էլ սկսեց մաս-մաս մարտը: Սակայն Միլիաշ ընկերությունն իր առարկությունը հայտնեց պայմանագրի հարցում և բռնազրավման համար փոխհատուցման դատական գործ հարուցեց վարձիք դեմ: 1999 թ. փետրվարի 2-ին շնչը ազատելու մասին որոշում կայացվեց, և դպրոցը դատարկվեց: Կառույցից դուրս շարուվեցին այսպիսի բազմաթիվ իրեր, ինչպիսիք են՝ զրապահարանները, նատարանները, խաղալիրերը և դաշնամուրը: Աշակերտները ձմռան կտային առանց դպրոցի էին մնացին: Դպրոցի սաների ընտանիքները շնչազանելու գործողությունն ձեռնարկեցին, մի բան, որ հազվադեպ էր հանդիպում Թուրքիայի հայերի շրջանում, և ճամբար որեցին դպրոցի այգում: Անտեսնուն նրանք շնչը վերադարձան, և վարձիք տերը եղող շնչին տարի-

Ներ շարունակ վարձ վճարվեց: 2012 թվականի նոյեմբերի 1-ին այս կառույցը վերջապես վերադարձվեց վարքին¹⁸⁴:

«Հայկական վարքիներին պատկանած 661 միավոր գույք է բռնազրավավել տարրեր պատճառներով: Դրանցից միայն 143-ն են վարքին վերադարձվել՝ վերցին 10 տարիների ընթացքում կատարված օրինական փոխուստը յունիսերի արդյունքում: Այդ թվին ել կազմում է 1328 միավոր վարքային անշարժ գույքի 10.77 տոկոսը միայն»,- գրում նև գրքի հեղինակները¹⁸⁵:

Բազմաթիվ խնդիրներ էին ծագում նաև պետության կողմից իր երաշխավորիած փոխհատուցումների հետ կապված: Այսպես, Գեղիրֆաշայի հայ բողոքական եկեղեցու վարքին իր առարկությունն էր հայտնել իրեն պատկանող գույքի դիմաց որպես փոխհատուցում տրվող գումարի կապակցությամբ: Պոլսիայ «Ակօս» շարադրաբերի համաձայն՝ Գեղիրֆաշայի հայ բողոքական եկեղեցու վարքի փոխհատուցման գումարի չափը վիճարկելուց առաջ դիմել էր մասնագետների, որոնք գնահատել էին իրեն պատկանող սույն անշարժ գույքը: Գնահատող մասնագետները 550 հազար լիրա էին գնահատել Մատերովի Գում Գավու բարամատում զանգոն այդ բառահարկ շինությունը, որը խլվել էր Գեղիրֆաշայի հայ բողոքական եկեղեցու վարքից և նախկինում եղել հայ օրիորդաց որբանուն: Ենթեցին իր առարկությանը կցիլ էր նաև գնահատող մասնագետների գեկույցները: Գեղիրֆաշայի հայ բողոքական եկեղեցու և դպրոցի վարքը դիմել էր, որպեսզի վերադարձներ 1980 թ. պետական գանձարանին անցած այդ անշարժ գույքը և դրական պատասխան տուացել: Կա համարվել էր Թուրքիայում ազգային փորրամանության համայնքին տրված «առաջին» փոխհատուցման որոշում: Վարքիների գլխավոր տօնօրինությունը ընտանելը 147 հազար 143 լիրայի չափով դրամական փոխհատուցում էր սահմանել այդ բառահարկ շինության համար, որը 8 բնակարան է ընդգրկում: Գեղիրֆաշայի հայ բողոքական եկեղեցու և դպրոցի վարքը որոշել էր բողոքարկել այդ որոշումը:

¹⁸⁴ Խոյին տեղում:

¹⁸⁵ Խոյին տեղում:

Վարքի և ախազահ Գրիգոր Աղարակովուն բուրբական «Վարքան» պարբերականի հետ գրուցում նշել էր. -Մեզ տրվելիք փոխհատուցումը շատ ծիծադելի է: Բոլոր Ստամբուլում զիտեն, որ Գում Գաֆուում տեսերը բաեկ են: Այսուեղ մեկ թևակարանը 150 հազար լիլրայով է վաճառվում: Նժվարաւում ենք հասկանալ, թե պետությունն ինչպես է այդ զինը սահմանել: Դեռությունը 30 տարի շարունակ այստեղի վարձն է ստացել վաճառել և գումար վաստակել: Նրանք պեսոք է Աստծոց վախ ունենան: Այս կառուցքը պահանջել ենք դեռևս 5-6 տարի առաջ, եթե հրապարակվեց բարեփոխումների սկիզբ դարձած 4771 թվակիր օրենքը: Սակայն շտվեցին: Հետո, շնորհած որ դատական գործ էինք հարուցել, շենքը հապշտապ վաճառվեց ուն Սուրբ Ալեքսանդր¹⁸⁶:

Տամաձայն Վարքիների զիսավոր տնօրինության ներկայացրած տվյալների՝ հայկական համայնքային անշարժ գույքը վերադարձնելու որոշման շրջանակում 165 համայնքային վարքից 56-ը և 430 անշարժ գույքի վերաբերյալ դիմում է ներկայացրել, որից որոշվել է 51 անշարժ գույքը հետև վերադարձնել, մեկ անշարժ գույքի զինը վճարել: 32 դիմում մերժվել է Սերժեն էր նույն Թուզլա կամ «Քամի Արմեն» ճամբարը հետ վերադարձնելու դիմումը¹⁸⁷:

«Քամի Արմեն» հայկական ճամբարը Ստամբուլի Թուզլա շրջանում գտնվող լրջալ ու կիսաքանդ մի շինուազն է Ներկայացման ավերակի վերածված շինուազուն ժամանակին եղել է շրավագործության մեջ ու որք հայ երեխաների ամսատային ճամբարը: Այն 1961 թվականին գևիվ է Հայ բարորական եկեղեցու հիմնադրամի կողմից և ծառայել է որպես ամսատային ճամբար՝ Գեղիբաշայի հայկական դպրոցի շքավոր ու որք սաների համար: Այսուեղ են մեծացել նաև 2007 թվականին Թուրքիայում սպանված հայունի հայ լրագրող Հրանտ Դիերը և նրա կին Շաբրել Դիերը: Հետագայում ճամբարը բուրբական իշխանությունների կողմից ապօրինաբար խլվել էր հայ համայնքի ձեռքից: 2015 մայիսի 6-ի առավոտյան

¹⁸⁶ Գեղիբաշայի հայ բարորական եկեղեցու վարչին իր առարկանունն է Խարունի իրեն պատկանող գույքի վեճաց որպես փախառություն տրվող գումարի կապակցությամբ <http://ekmec.zet.am/?p=25748>

¹⁸⁷ Ա. Քարառաջան, եղջ. աշխ.:

ճամբարի ներկայիս սեփականատիրոց Խօհսաձեռնոթյամբ սկսվել էր ճամբար-մանկատան ապամոնտաժումը, սակայն կարծ ժամանակ անց Թուրքիայի հայկական համայնքի սկսած բողոքի լայնածավալ միջոցառումների շնորհիվ շինուազան ապամոնտաժումը ժամանակավորապես հեարավոր եղան դադարեցել: Թուրքական «Եև Շաֆար» պարբերականի իր սյունակում հայտնի լրագրող Ալի Բայրամօղլուն, ով նաև «Նարեցեք մեզ, հայեր» ակցիայի ակտուն անդամերից է, բարձրացրել էր Սուայրուի «Բամփ Արմեն» որբանոց-ճամբարի ոչխացիան հարցը: Բայրամօղլուն նշում էր, որ իրեն է զանգահարել Հրանտ Դիմիրի եղայր Լեներ Դիմիրը Խնդրելով բարձրաձայնել հայերի համար մեծ նշանակություն ունեցող որբանոցը բանդելու մասին: «Այս երկրում ոչ մուսուլմաների գույքին անվերջ տիրանալու համար ամեն ժամանակ իր տեխնիկան ունի», - նշում էր հեղինակն ու օրինակեր թերում, թե ինչպես հանրապետական Թուրքիայի տարրներ ժամանակաշրջաններում պետությունը տիրացնել է ազգային/կրոնական փորրամասնությունների: այդ թվում հայերի գույքին: «Մարդկանց բարձրացրած աղմուկը պետք է լսնի Թուրքիայի խախազանը, վարչապետը, ԵՄ հարցերի խախարարը, արտգործնախարարը: 1915-ի ցալակցությունը բավարար չէ: Խնդիրն այս ոչխացիանն ու ավերմանը վերջ տալն է: Մի բանի օր անց կարող է ժամ ուշ լինել», - գրում էր Բայրամօղլուն¹⁸⁸: 2015թ. հոկտեմբերի 27-ին, եթե լրացավ ապամոնտաժումը բույլ չուարտ ևպատակով «Բամփ Արմեն»-ում սկսված հերթապահության 175-րդ օրը, ճամբարը վերաբարձվեց հայ համայնքին և «Բամփ Արմեն»-ի սեփականության վկայականը հանձնվեց Գեղիքիաշայի Հայ բողոքական եկեղեցու հիմնադրամին¹⁸⁹:

Հայկական կալվածքների հարցի վերաբերյալ «Ակուեր»-ի հետ գրուցի ժամանակ՝ «Ակու» շարաբարերի հայերին բաժին խմբավոր Բազրատ Էստուլյանը ցավով նշել էր, որ կատարվածի

¹⁸⁸ Ali Bayutoglu, "Kulak veren: Kötüruş yikmak, bellegi asagilamak..." <http://www.yenisafak.com.tr/yazarlar/alibayutoglu/kulak-veren-koturuş-yikmak-bellegi-asagilamak-2010609>

¹⁸⁹ «Բամփ Արմեն»-ը Վերաբարձվեց հայ համայնքին. Ermenihaber <http://www.ermenihamer.am/archive/news/20151027/2031/2031.htm?nid=27329520>

մեջ մեղավոր է ևս Պոլս հայ համայնքը. «Եժախտաքար մեկը որպես համայնք այնքան էլ լավ կազմակերպված չենք. Հայութի է, որ մեր արխիվները շատ անմիտքար վիճակում են: Մեկը մեր ուսեցվածքը ճշգրիտ չենք գրանցել և պահել, որպեսզի հարկ եղած դեպքում ներկայացնենք. թէ այսինչ կարփածը ունենար, այսինչ բայականին այսպես եղավ, այնինչ բայականին էլ՝ այսպէս, և անիրավորներ ձեռքներից խլեցին: Մենց դժվարացներ սա տվյալներով փաստու: Շատ թից հաստատություններ են ինաւորով կազմել իրենց կորցրած ինչքերի ցանկը: Հետևաբար կա մեզ հաստոկ համայնքային թերացում: Մենց շպահանեցնելով մեր իրավունքների կարևոր մեծ մասը: Եվ այս պարագայում, հակառակ այն բանի, որ մեզանից որոշները համառորեն պայքարել են, սակայն մենք, որպես համայնքային իշխանություն, պահանջաւոր չենք եղել, հետևաբար՝ այսօրվա եղելությունը դիտում ենք որպես կառավարության շնորհ, կառավարության բարի կամքի դրսորում: Ճիշտ է, եթե կառավարությունը հակառակ դիրքորոշում որդեգրի, մենք անելու շատ բան չունենք: Աեւոր է ևս շեշտել, որ այս համայնքում եղել են մարդիկ, ովքեր պահանջել են իրենց իրավունքները, ձայն են բարձրացրել անարդարության դեմ, որքան որ հետաքոր է՝ դիմել են դատարաններ: Ճիշտ է, դատարաններն այս համակարգի մաս են կազմել և ոչ թէ արդարությամբ են շարժվել, այլ՝ բաղարականությամբ: Եթե այսօր կա որոշ առաջքերաց, ապա այդ մարդկանց պայքարի հետևանք է, ցավոր, այսօր սրա մասին չեն հիշում: Օրինակ՝ իրավաբան Տիրան Բարար կար, որ այս ուղղությամբ հսկայական աշխատակի է կատարել: Հրանտ Դինքը «Ակու» ում համառորեն երապարակումներ է տպել այս անարդարության դեմ, բայց ոչ Տիրան Բարարն էր այս համայնքի կողմից սիրված իրավաբան եղել, ոչ էլ Հրանտ Դինքը՝ սիրված լրազրոտ: Պատճառն այն է, որ այս համայնքի դիմացինք ներկայացնողը առհասարակ պահպանողականներն են, և նրանք իրենց ձեռքից խլվածի համար այս գիտակցումն ունեն, թէ «ինչ կարող ենք անել, պետություն է, եթե չուզի՞ ջոր էլ չի տա, ծարակ կմնանք»: Անս այս հոգերանության կրողն են: Միշելո մյուսները պայքարելու որոշ փորձ ունեն և պահանջաւոր են: Պահպանողականները ևս միաժամանակ

իշխանություն են ձեռք բերել: Իշխանությունն այս տարրերին են, ովքեր ներկայացնում են պահպանողականների բնորդների է, հասկանալի է, քանի որ նկերիցին է: Մեր բազական խորհուրդները, մեր բոլոր բարերարները ևս այդ պահպանողականների մասն են կազմում: Պահպանողականներն ունեն նոյն հետարրըրություններն ու մոտավորացնելը, ինչ որ Օսմանյան կայսրության ժամանակ մեր ամիրաների դասն ու մեծահարուստներն ունեին»¹²⁰:

«Բամբ Արմենի» օրինակը ցույց է տալիս, որ ի հեճուկս բոլորական օրենսդրական բազմարիվ խոչընդուների առանձին դեպքերում հետեղական պայքարը կարող է բիրել հաջողության: Պարագայ փաստարան Սեպուհ Ասլանզիլը շնչուում է, որ աշխարհի տարրեր երկրներում փորբամասնությունների իրավունքները կարգավորելու համար տարրեր օրինավոր լուծումներ են եղել, սակայն Թուրքիան միշտ խուսափել է հարցին օրինականության տեսանկյուններց մոտենալ: Թուրքիան միշտ աշխատել է շրջանցի փորբամասնությունների և երանց իրավունքների հարցը, և, հատկապես դարցոցներ ունեցող հիմնադրամները բազմարիվ նեղություններ են տեսում, սա էլ ինքըին ԵՄ սկզբունքներին հակառակ սկզբունք է: - ասում է նա, - Ճիշտ ձամփան հատուկ օրենք ձևավորելու է, որում աեշտուշ պատրիարքարանի կարգավիճակի հարցն էլ պիտի լուծվի, քանի որ Պոլս պատրիարքարանը ստատուս չունի և, հետևաբար, զրկված է կալվածք ունենալու իրավունքից: Ասլանզիլը նաև նշում է, որ մեր հիմնադրամներին պատկանող հոդերի մեծ մասը խոչըր բաղադրերի կիսնարարություն են, մեծամասնությամբ՝ Ստամբուլում, և դա է պատճառը, որ պետություններ դրա վերադարձը դժվարացնում է, քանի որ դրանք մեծ արժեք ունեն:

Թե ինչ արժողությամբ ունեցվածք է բռնպարավել Թուրքիան կրունական փորբամասնություններից, կամ դրա որ մասն է հայկական, գեահաստիւած չէ: Փաստարանը միայն հղում է անում նեցեմի Թայիրի Էրդողանի հայտարարությանը, որ այս ընթացքում 3-4 մյուլ դրաբի ունեցվածք է հետ վերադարձնել: «Սա

¹²⁰ Ա. Թարտարյան, ԽՀԸ աշխ.:

Վերաբերվում է բոլորին, սակայն իրենք վերադարձել են ընդհամենը 10-15 տոկոսը, ըստ որում այն գույքի, որոնք 1936թ. ցուցակներում են»,- եղում է Ապահեցիր:

Մեկ տարի ժամանակային հատվածում իրավական ուժ ունեցող 5737 օրենքի 17-րդ հոդվածի 11-րդ ժամանակավոր հայահոդվածով նախատեսված դիմումների ընդունումը ավարտվել է 2012թ. օգոստոսին, սակայն դիմումները ընկերու ընթացքը շարունակվում է «Տարրեր գործերի վերաբերյալ բազմաթիվ տարակարձություններ կան, որոնք դատական համակարգով շարունակվում են, բայց անոնց դատը ներկա օրենքներով լուծման ենթակա չեն և բողոքարկվում են ՍԻԵԴ-ում»,- ասում է Ապահեցիր¹⁹³:

Մինչ համայնքների գույքի վերադարձման հարցը դեռ մեռում է չլուծված, բուրքական իշխանությունները փոքրանունություններին պատուինող կալվածքների բռնազրակիցների նոր նախադասեր են ստեղծում: Այսպիս, Թուրքիայի նախարարների խորհրդի կողմից ս.թ.մարտի 25-ին պետականացման որոշում էր ընդունվել շուրջ 6.300 տարածքի ու անշարժ գույքի վերաբերյալ, որոնց շարքում են հայկական Սուլք Կիրակոս Եկեղեցին, ասորական ու բողոքական Նկեղեցիները:

Հայկական Սուլք Կիրակոս Եկեղեցին գրեթե 100-ամյա լրածությունից հետո ամբողջովովով վերաբացվել էր 2012թ. նոյեմբերի 3-ին, ինչից հետո այն դարձել է տեղի հայերին միավորող կարևորագույն կենտրոն: «Երանորոգման ծախսերի մեջ մասը հոգացել էին բուրքահայ մեկենասները, մի մասն է տրամադրել եր ՚Նիարեքիրի քաղաքապետարանը: Ար Կիրակոսը Սերձավոր Արևելքի ամենամեծ հայկական եկեղեցին է՝ ՚Նիարեքիրի Սուլք Կիրակոս հայկական եկեղեցու հիմնադրամը դատական հայց է ներկայացրել եկեղեցին պետականացնելու մասին Թուրքիայի նախարարների խորհրդի կողմից ընդունված որոշումը չեղյալ հայտարարելու պահանջով: Թուրքիայի կառավարության և տա-

¹⁹³ Հայ ունեցմանք ճակատագիր Ծամանակարգությունից շարունակական
<https://armeniamarathon.wordpress.com/2013/12/21/armenia-as-reality-meets-theoretical-expectations/>

